# ԷՋՄԻԱԾԻՆ



Թ

2000

ԾԶ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Սեպտեմբեր
2000

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Մոսկվա . . . 3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՄԱԿ-ի հովանավորությամբ կազմակերպված կրոնապետերի գագաթնաժողովում . . . 6
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցը Ռումինիա . . . 12
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական ուխտագնաց այցը Արցախի թեմ . . . 18

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Հալեպում Կիլիկյան հայոց մշակույթին նվիրված ցուցահանդեսի բացման առիթով . . . 38
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Հալեպում գումարված «Հայաստան - 2000» միջազգային գիտաժողովի բացման առիթով . . . 41
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը դպրոցականներին՝ նոր ուսումնական տարվա առիթով . . . 43
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Կոնրադ Ռայզերի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին . . . 44
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդարանի պատվիրակությանը . . . 45
Եկեղեցու և Պաշտպանության նախարարության միջև ստորագրվեց հոգևոր ծառայության կանոնադրությունը . . . 46
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Խոսրով Հարությունյանին . . . 47
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Անկախության օրվա առիթով . . . 48

Յավակցական այցելություն Հայաստանի Ավետարանչական Ընկերակցություն . . . . . 49
ԳԱՅԱՆԵ ԱԵՔՍԱՆՅԱՆ - Հայր Ջոն Բոնին այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին . . . . . 50

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը փիար Հրաչ Նորիկյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . 51
Կաթողիկոսական շնորհաբաշխություններ . . . . . 53

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՎԱՀԵ ՍՐԿ. ՀՈՎՍԵՓՅԱՆ - Եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում Մայր Տաճարում . . . . . 54
Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյան . . . . . 58
ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ - Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 2000-2001 ուսումնական տարեշրջանի բացման հանդիսությունը . . . . . 60
ՎԱՉԻԿ ԴՊԻՐ ՋԱՐԳԱՐՅԱՆ - Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրեվանքի վերամուտի հանդիսություն . . . . . 65

## ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՆԱՆՅԱՆ - Դոգման և նրա պատմական զարգացումը . . . . . 68
ՄԻՍԱՔ Հ. ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ - Սրբոսի Թեկղի . . . . . 83

## ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆ - Ավետիս Ահարոնյանը և Սևրի դաշնագիրը . . . . . 90
ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ - Վարդան Արևելցու մեծարանը . . . . . 98

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՈՀԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ - Նորայր Բյուզանդացու անտիպ նամակները . . . . . 103

## ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանս. «Իսլամը Եվրոպայում» հանձնաժողովի նիստ . . . . . 114

Եկեղեցական բեմ. լուրեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 115

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՋԵՅԹՈՒՆՅԱՆ - «Լույս» շաբաթաթերթի մատենագիտություն (1905-1906) . . . . . . . . . . . . . . . . . 117

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 132

"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin . . . . . . . . . . 135

"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine . . . . . . . 138

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԸ ՄՈՍԿՎԱ

Օգոստոսի 17-ին, առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մոսկվա, ուր, օգոստոսի 18-ին, Վեհափառ Հայրապետի և Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքի մասնակցությամբ, նորակառույց Ս. Ամենափրկիչ եկեղեցու առջև հայկական խաչքար զետեղվեց՝ ի նշան երկու Եկեղեցիների եղբայրական բարեկամության: Խաչքարի տեղադրման հանդիսավոր արարողությունից հետո տեղի ունեցավ Ս. Ամենափրկիչ եկեղեցու օծման արարողությունը, որի ավարտին Վեհափառ Հայրապետը, արտահայտելով իր ուրախությունը, ասաց.

*««Այսօր է, զոր արար Տէր: Եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա» (Սղմ. ՃԺԷ 24):*

*Այսօր առանձնակի բերկրություն ենք ապրում՝ ի Քրիստոս մեր սիրելի եղբայր Ն.Ս.Օ. Ալեքսի Բ Ռուսիո շնորհաշատ Պատրիարքի հրավերքով ներկա գտնվելով Մոսկվայի Սուրբ Ամենափրկիչ նորաշուք եկեղեցու օծման սրբազան արարողությանը: Փառք Բարձրյալին, որ արժանացնում է Մեզ շնորհին այս նշանակալի առիթով Տաճարի բակում կանգնեցված հայկական խաչքարի առջև Մեր աղոթքը միախառնելու հավատակից մեր եղբայրների ջոհաբանական մաղթանքին:*

*Մեծ մխիթարություն է տեսնել, որ անաստվածության բիրտ ձեռքերով տասնամյակներ առաջ հիմնահատակ խորտակված Լույս Տաճարը Հարության հրաշազարդ խորհրդով, բարեպաշտ ռուս ժողովրդի նորոգ հավատով վերստին երկինք է խոյացել և այսօր օրհնության իր դռներն է բացել քրիստոնեական ավանդությամբ հարուստ Ռուսաստանի սրտում՝ ոսկե-*

*գմբեթ (գմբեթազարդ) Մոսկվայում: Արդարև. «Ո՞ւր է մահ, հաղթություն քո»:*

*Փրկչին հուսացյալ մեծագործ ռուս ժողովուրդը իր հավատի հաղթության նոր խոյանքով. այս հոյակերտ Տաճարի վերակերտումով հաստատում է անվարան իր կամքը՝ մերժելու ամեն բռնություն. կեղծիք ու չարիք և առ Աստված ապավինությամբ. խաղաղությամբ. արդարությամբ, հույսով ու սիրով իմաստավորելու. երջանիկ դարձնելու նորօրյա իր կյանքը, իր զավակաց ապագան:*

*Ի փառս Ռուսաց պետության, Ռուս Ուղղափառ Եկեղեցու և նրա բազմակորով Պատրիարքի՝ իր վեհ ոլացքով կանգուն է Սուրբ Ամենափրկիչ Տաճարը՝ որպես հույսի հայացք դեպի նոր. երրորդ հազարամյակ: «Ի Տեառնէ եղեւ այս եւ է սքանչելի առաջի աչաց մերոց» (Սղմ. ՃԺԷ 23):*

*Սուրբ Ամենափրկիչ Տաճարի օծման այս երջանիկ ու հիշարժան առիթով՝ որպես Ամենայն Հայոց Հայրապետ. հանուն աշխարհասփյուռ մեր ժողովրդի ուրախ ենք Տաճարի լուսերգությամբ լեցուն կամարների ներքո ջերմորեն ողջունելու և շնորհավորելու մեր սիրեցյալ եղբորը՝ Ալեքսի Բ Սրբազան Պատրիարքին. Ռուս Եկեղեցու բոլոր սպասավորներին և համայն Ռուսիո հավատավոր ժողովրդին: Համայն հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր սերն ու օրհնությունն ենք բերել միախառնելու համաքրիստոնեական այս ուրախությանը, որի ճշմարիտ արտացոլանքն է շարականագրի խոսքը. «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի... քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերստին քո նորոգմամբ»:*

*Սիրելի բարեպաշտ հավատացյալներ. ի նշանավորումն Ռուս Ուղղափառ մեր քույր Եկեղեցու մեծասքանչ այս տոնի՝ նորաօծ Տաճարի բակում այսօր Ն.Ս.Օ. Ալեքսի Բ Պատրիարքի հետ սրբագործեցինք հայկական խաչքարը՝ որպես մեր երկու Եկեղեցիների և մեր ժողովուրդների անխախտ բարեկամության մի նոր խորհրդանիշ: Հայցում ենք առ Աստված. որ մեր հավերժ եղբայրության ուխտի խաչքարը թևատարած Ամենափրկիչ խաչի զորությամբ օրհնություն խառնի այս հողին, որ դարեր շարունակ սիրով հյուրընկալել է հայորդյաց:*

*Ռուսաստանի հայ համայնքն այսօր նույնպես վայելում է ռուսաց պետության, Եկեղեցու և ժողովրդի բարի կամեցողությունը, որի լավագույն վկայությունը օրերս Սանկտ Պետերբուրգում Սուրբ Կատարինե հայոց եկեղեցու վերաբացումն էր, որը նույնպես միասնաբար կատարեցինք Նորին Սրբություն Պատրիարքի հետ:*

*Ձերդ Սրբություն.*

*Ընդունեք Մեր խորազգաց շնորհակալությունը Ձեր սիրալիր հրավերի համար, որով մեկ անգամ ևս երջանիկ առիթն ունեցանք հանդիպելու Ձեզ և բերկրանոք սրտի մասնակից լինելու համայն Ռուսիո ուրախությանը: Մեր աղոթքն է, որ Ռուսաստանի արձակ տարածքներում երբեք չխոնարհվեն սրբության տաճարները, և Բարձրյալի կամքով ու օրհնությամբ բարեշեն ու երջանիկ երկիր կերտելու հավատավոր ռուս ժողովրդի ճանապարհը մշտապես ուղեկցված լինի քրիստոնեահավատ Սուրբ Եկեղեցու փրկագործ լույսով, Տիրոջ կենարար հավատով ու անմնացորդ սիրով:*

*Թույլ տվեք ի հիշատակ այս բարի օրվա՝ Ձեզ նվիրել արծաթյա այս խորանանկարը, ուր պատկերված են հայոց հավատի օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Ռուսիո հոգևոր ու աշխարհիկ դարավոր կենտրոն Մոսկվան խորհրդանշող Սուրբ Ամենափրկիչ Տաճարը: Թող Բարձրյալն Աստված օրհնի մեր սուրբ Եկեղեցիների եղբայրությունը՝ ի փառս Իր անվան. ի շինություն իրենց նոր կյանքը կերտող մեր երկու ժողովուրդների ու երկրների:*

*Սիրով Ձեզ ենք փոխանցում նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի նվերը նորակառույց և նորաօծ Սուրբ Ամենափրկիչ Տաճարին՝ ի նշան մեր պետությունների բարեկամության ու համագործակցության:*

*«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»:*

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱԿ-Ի ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԿՐՈՆԱՊԵՏԵՐԻ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Օգոստոսի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մոսկվայի Ամենափրկչյան փաճարի օծման արարողությանը ներկա գտնվելուց հետո մեկնեց Միացյալ Նահանգներ՝ մասնակցելու կրոնապետերի՝ ՄԱԿ-ի հովանավորությամբ կազմակերպված գագաթնաժողովին:

«Ինձ համար մեծ պատիվ է արժանանալ Ձեր, իբրև աշխարհի ամենից հռչակավոր կրոնական առաջնորդներից մեկի, մասնակցությանը Կրոնական և Հոգևոր Առաջնորդների՝ Հազարամյակի Աշխարհի խաղաղության գագաթնաժողովին»,- գրում է գագաթնաժողովի գլխավոր քարտուղար Բաուա Ջեյնը՝ Վեհափառ Հայրապետին ուղղված հրավեր-նամակում:

Նախքան գագաթնաժողովի աշխատանքներին մասնակցելը՝ օգոստոս 28-ը, Նորին Սրբությունը գործուն մասնակցություն ունեցավ ԱՄՆ արևելյան թեմից ներս կազմակերպված միջոցառումներին՝ հանդիպումներ ունենալով Տիրախնամ թեմի թեմական-վարչական մարմինների պատասխանատուների, պատվարժան հայորդյաց և հոգևոր դասի անդամների հետ՝ ամենուր հավաստելով, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն իր առաքելության ծավալման նոր փուլ է մտել և այդ նպատակով կատարվում են վերակազմակերպման ու ուժերի համախմբման աշխատանքներ:

Իր խոսքերում Նորին Սրբությունը շեշտում էր հատկապես համախմբման կարևորությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շուրջը և համակողմանի աջակցությունը՝ Մայր Եկեղեցու գործունեությունը ևս առավել արդյունավետ դարձնելու համար:

Օգոստոսի 27-ին Միացյալ Նահանգներ էին ժամանել արդեն կրոնների և կրոնական համայնքների՝ գագաթնաժողովին մասնակցող գրեթե բոլոր պատվիրակությունները, վերջիններիս հետ, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, նաև Հայ Եկեղեցու պատվիրակության անդամները՝ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը և Տ. Արշակ աբղ. Խաչատրյանը:

Գագաթնաժողովին մասնակցելու էին եկել տարբեր կրոնների պատվիրակությունների շուրջ 3500 անդամներ՝ աշխարհի տարբեր ցամաքամասերից՝ ներկայացնելով խճանկարը աշխարհի կրոնական քարտեզի:

Օգոստոսի 28-ին, ժամը 16.00-ին, ՄԱԿ-ի շենքի գլխավոր ժողովասրահում սկսվեց գագաթնաժողովի բացման հանդիսությունը: Թմբուկների անառոր և որոտըն-

դուրս հնչյուններից ներկաները փոքր-ինչ ցնցվեցին՝ հետևելով առաջին հայացքից տարօրինակ, սակայն ատտիճանաբար գերող թմբուկային երաժշտությանը:

Բացման արարողությունից հետո գագաթնաժողովի բոլոր մասնակիցներին ողջույնի խոսք հղեց Բաուա Ջեյնը՝ ընդծելով հատկապես, որ կրոնապետերի այս հավաքը եզակի մի երևույթ է՝ կոչված կենտրոնացնելու իր ջանքերը՝ աշխարհում խաղաղության ամրապնդման համար:

Գլխավոր քարտուղարի խոսքից հետո եռեթականությամբ բեմահարթակ բարձրացան տարբեր կրոնների և կրոնական հարանվանությունների ներկայացուցիչներ՝ ներկաներին մատուցելով սեփական ծիսական ավանդություններից աղոթքներ, հոգևոր երգեր ու ծիսական պարեր:

Արդեն աղոթքների բազմազանությունից և արարողությունների տարատեսակությունից ակնհայտ էր, որ գագաթնաժողովն ունի ներկայացուցչական հարուստ կազմ, որով ի մի են խմբվել քրիստոնյաներ և ուրիշ կրոնների ու դրանց հարանվանությունների ներկայացուցիչներ:

Կրոնապետերի շարքում ամբիոնից աղոթեց նաև Վեհափառ Հայրապետը՝ սկսելով «Զգործս ձեռաց մերոց...» մաղթանքով և ապա շարունակելով.

*«Ո՜վ Արարիչ Տե՛ր Աստված, մենք՝ Քո ծառաները, Քեզ ենք հղում մեր աղոթքները բերկրանքի և եղբայրության ու բարեկամության այս առիթով:*

*Օրհնի՛ր այստեղ հավաքվածներին, ովքեր ի մի են խմբվել համայն զավակներիդ համար ավելի խաղաղ մի աշխարհ կերտելու նպատակով:*

*Փոխադարձ սիրո և եղբայրության զգացումով բերկրանք ենք ապրում այսքան մեծաթիվ հարգարժան մարդկանց ներկայությամբ: Ո՜վ Տեր, օրհնի՛ր Քո արժանավոր զավակներին, որպեսզի նրանք շարունակեն իրենց կարևոր հանձնառությունն ամբողջ աշխարհում, իրենց հոտն առաջնորդեն իմաստությամբ, սիրով և հավատքով:*

*Ո՜վ Տեր, մենք տեղյակ ենք, որ կրոնական տարբերություններն անցյալում վեճ ու պայքար են հարուցել: Մարդկային ուժից ու իշխանությունից բարձր ու վսեմ արժեք ունեցող հավատն այն միակ հաստատուն հիմքն է, որի վրա կարելի է կառուցել արդար և հանդուրժող հասարակություններ, արժանապատիվ կյանք:*

*Ո՜վ Տեր, Քո բոլոր զավակներին և բոլոր ազգերին առաջնորդիր այս ուղիով:*

*Թող Քո անունը փառաբանվի՛ այժմ և միշտ, ամեն»*:

Աղոթքների շարքը եզրափակվեց Տիբեթական հոգևոր երաժշտությամբ, ժամը 21-ին, և մասնակիցները վերադարձան հյուրանոց:

Հաջորդ օրը, օգոստոսի 29-ին, ժամը 18.15-ին, ավտոշարասյուները կրկին շարժվեցին դեպի ՄԱԿ-ի շենք:

Հանդիսասրահում ներկաներին ողջունեց Բառա Ջեյնը՝ մասնակիցներին ծանոթացնելով օրակարգին: Այնուհետև հոգևոր առաջնորդներին ողջույնի և արդյունավետ աշխատանքի իր բարեմաղթանքները հղեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը: Գլխավոր քարտուղարը հատկապես կարևորեց կրոնապետերի բացառիկ հավաքի՝ հազարամյակի նախաշեմին գումարվելու իրողությունը՝ հույս հայտնելով, որ այն, ավանդական բնույթ ստանալով, էապես նպաստելու է տարբեր կրոնների հավատացյալների փոխըմբռնմանն ու դրանով իսկ աշխարհում խաղաղ համակեցության ապահովմանը: Նրա խոսքից հետո սկսվեց բուն ժողովը, որը բաղկացած էր լինելու չորս նիստերից՝ յուրաքանչյուրը համապատասխան կոչ-խորագրերով:

Ա. Կոչ երկխոսության.

Բ. Կրոնական առաջնորդների դերը կոնֆլիկտների փոխակերպման մեջ.

Գ. Դեպի ներողամտություն և հաշտություն.

Գ. Վերջ աղքատությանը, բռնությանը և միջավայրի դեգրադացիային:

Թեմաներից յուրաքանչյուրի շրջանակներում ներկայացված էին բանախոսների անունները և հերթականությունը: Սահմանված կարգով Վեհափառ Հայրապետը բանախոսելու էր երրորդ՝ «Դեպի ներողամտություն և հաշտություն» վերտառությունը կրող նիստի ընթացքին:

*«Մեծարգո ատենապետ.*

*Հարգարժան մասնակիցներ.*

*Մեզ համար, որպես Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս, պատիվ է խոսք ուղղել Միացյալ Ազգերի Կազմակերպությանը, Աշխարհի Խաղաղության Գագաթնաժողովի կազմակերպիչներին, հովանավորներին և հարգարժան մասնակիցներին: Այս աննախադեպ համաժողովը վկայությունն է միջազգային փոխըմբռնման և համագործակցության նոր ուղիներ փնտրելու գործում ՄԱԿ-ի կողմից կրոնի դերի ողջունելի գնահատման:*

*Փորձություններով լեցուն պատմական ընթացք է ապրել մեր ժողովուրդը՝ հաճախ կանգնելով լոկ իր գոյությունը պահպանելու և վերապրելու խնդրի առջև: Հակառակ ամեն դժվարության ու աղետների, ութ միլիոն հայեր 2001 թվականին ի սփյուռս աշխարհի տոնախմբելու են Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանը: Թե՛ բարենպաստ, և թե՛ դառնաղետ ժամանակներում մենք երբեք չենք հրաժարվել մեր հավատքից և խաղաղության երազանքից: Բոլոր ժողովուրդների նման հայ ժողովուրդը նույնպես երազում է կայուն ու ներդաշնակ աշխարհի մասին և ջանում գտնել կորուսյալ դրախտը:*

*Չնայած վերջին հազարամյակում կատարված համընդհանուր զարգացումներին ու առաջընթացին, դարը նշանավորվեց պատերազմներով, կոտորածներով, էթնիկական ու կրոնական հակասություններով և ընդհարումներով, մարդկային համատարած տառապանքներով: Արդյո՞ք այս ամենը չեն վկայում միմյանց հասկանալու, ներելու և հաշտվելու մեր անկարողության մասին: Արդյո՞ք այս ամենն այն պատճառով չէ, որ մենք բոլորս շատ հաճախ հանձն չենք առնում պատասխանատվությունը մարդկության վշտերի համար: Արդյո՞ք մեր անհատական և հավաքական պատասխանությունը չէ արգելակել բռնությունը, անտարբերությունն ու անհանդուրժողությունը:*

*Եկել է ժամանակը, որպեսզի մենք 21-րդ դարի համար կերտենք այլ իրականություն: Թեպետ կան տարբերություններ մեր հավատքների միջև, որպես եկեղեցական ու հոգևոր պետեր, մենք բոլորս հավատում ենք սիրո և կարեկցանքի կարևորությանն ու նշանակությանը՝ որպես պայմաններ հասնելու ներողամտության և հաշտության: Ամենևին դյուրին չէ այդ ճանապարհը: Ով հաշտություն է փնտրում, պիտի սիրի ճշմարտությունն ու արդարությունը և անխախտորեն հարգի անհատների ու ազգերի իրավունքները:*

*Մարդկության պատմությունը համոզում է, որ առանց հոգևոր ու բարոյական արժեքներով կյանքի իմաստավորման ու զորացման, անարդյունք է հասարակությունների խաղաղ գոյակցության պահպանումը: Առանց այս արժեքների մարդկությունը անզոր է անկորուստ ու անխաթար պահպանել աշխարհը:*

*Հոգևոր ու բարոյական հավերժական արժեքների, ճշմարտության, ազատության, արդարության և իրավունքի ոտնահարումը մշտապես դուռ են բացում տառապանքների ու հակամարտությունների: Միայն վերջին հազարամյակում մարդկությունը վերապրել է համաշխարհային երկու պատերազմ: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Օսմանյան Թուրքիայի կողմից մեկ ու կես միլիոն հայեր կոտորվեցին և գրեթե նույնքան տարագրվեցին իրենց պատմական Հայրենիքից: Եթե միայն մարդկային հասարակությունը ուժ և քաջություն ունենար կանխելու այդ կոտորածը և կամ ցեղասպանությունից հետո դատապարտելու այդ եղելությունը, Հիտլերը, վեց միլիոն հրեաների ոչնչացումը նյութելիս, հնարավորություն չէր ունենա հայտարարել «Ո՞վ է հիշում հայկական կոտորածները»: 85 տարի անց Հայաստանը և ողջ աշխարհում սփռված հայությունը դեռևս սպասում են Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու համընդհանուր դատապարտմանը, որ որպես արդարության հաղթանակ՝ նույնքան անհրա-*

*մեշտ է աշխարհի բոլոր ժողովուրդներին, նաև թուրք ժողովրդին, քանզի չարիքը բացառելու ճանապարհը չարիքի մերժումն է մեր հոգիներում:*

*Ավարտվում է դարը. աշխարհի տարբեր անկյուններում այսօր առկա են բռնություն, պատերազմ ու սով. պայթյունավտանգ իրավիճակներ: Այս և նման այլ հիմնախնդիրները կարոտ են համընդհանուր հոգածության ու միացյալ ջանքերի:*

*Բացառիկ այս գագաթնաժողովի մասնակիցներին նայելով. Մենք մտածում ենք, որ ավելի քան հինգ միլիարդ մարդկանց ուժ ենք ներկայացնում, որ հավաքվել ենք ամբողջացնելու, ի մի բերելու մեր ջանքերը՝ ճշմարիտ հավատի, հոգևորի արժևորման ճանապարհով վերջ դնելու բռնություններին և նպաստելու խաղաղության ու հաշտության ամրապնդմանը: Հարավային Աֆրիկան և Հյուսիսային Իռլանդիան կարող ենք ունենալ որպես ոգեշնչող օրինակ այն բանի. թե ինչպես տևական և անզիջելի թվացող հակամարտություններն անգամ վճռելի են համառ ու տքնաջան աշխատանքի, միջազգային ջանքերի, շահերի և հետաքրքրությունների հավասարակշռության և ներգրավված բոլոր կողմերի իրավունքների նկատմամբ հարգանքի միջոցով:*

*Հայ ժողովրդին, որ պայքարում է հանուն Լեռնային Ղարաբաղում իր ազատ ու անկախ կյանքի, խորապես հասկանալի է մարդու և ժողովուրդների իրավունքների փոխադարձ հարգման կարևորությունը: Մեր ժողովուրդը հույս ունի, որ Ղարաբաղյան հակամարտությունն իր կարգավորումը կգտնի մոտ ապագայում՝ որպես ևս մեկ օրինակ, որ կարելի է հասնել հակամարտությունների լուծման ու հաշտության:*

*Մեր դիրքորոշումը հստակ է: Ինչպիսի կերպարանափոխությունների էլ ենթարկվի աշխարհը, մարդկության կյանքի սկզբնական ու ճշմարիտ պատկերի, բնույթի և նպատակի վերականգնումը հնարավոր է միայն Աստծո առաջնորդությամբ, հավատքի ճանապարհով: Մենք կոչված ենք ջանադրորեն գործելու՝ մեզ հավատ ընծայողներին ցույց տալու համար մարդկային համերաշխության ստեղծագործ ուժը, որպեսզի երկխոսության ու համագործակցության միջոցով գալիք սերունդներին թողնենք խաղաղ ու ապահով Երկիր մոլորակ:*

*Մեր խոնարհ աղոթքն է, որ Աստված զորացնի և զորակից լինի մեզ բոլորիս մեր պարտքի մեջ: Մեր հույսը Մենք հայտնում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Իր առաքյալներին ուղղված ողջույնի խոսքով. «Խաղաղություն ձեզ»: Խաղաղություն մեզ բոլորիս»:*

Չորրորդ նիստի ավարտից հետո մասնակիցները վերստին մեկնեցին հյուրանոց, որտեղ կազմակերպված էր համերգ-երեկույթ:

Հաջորդ՝ օգոստոսի 30-ի օրվա ժողովը գումարվեց «Ուոլդորֆ Աստորիա» հյուրանոցում: Նիստը բացվեց աղոթքով, և ապա նախորդ օրվա չորս նիստերին ներկայացված զեկույցների շրջանակում ծավալվեցին քննարկումներ՝ թեմաներից յուրաքանչյուրի շրջանակներում արտահայտված մտքերի ու գաղափարների ամփոփումներով: Այս տեսանկյունից օգոստոսի 30-ի նիստը կրում էր արդյունքների ամփոփման բնույթ: Հաջորդ օրը շարունակվեցին ամփոփման աշխատանքները, և հնչեցին մի քանի ելույթներ: Կեսօրին պատվիրակներին բաժանվեց գագաթնաժողովի վերջնական հռչակագրի նախագիծը, որի վրա կատարվելիք դիտողություններից ու հավելումներից հետո վերջնական տեսքի էին բերվելու գագաթնաժողովի մասնակիցների ակնկալությունները:

Հռչակագրի վերջնական տարբերակը ընդունվելու է ավելի ուշ: Նրանում սահմանվելու են կրոնական առաջնորդների դերն ու աշխարհում խաղաղության ամրապնդման համար գործունեության ծավալման հիմնական ուղղությունները:

Հետկեսօրին, ժամը 18-ին, գագաթնաժողովի աշխատանքներն ավարտվեցին: Ամփոփիչ ելույթով կրկին հանդես եկավ գագաթնաժողովի քարտուղար Բաուա Ջեյնը՝ իր շնորհակալությունը հայտնելով բոլոր մասնակիցներին՝ հրավերին սիրահոժար ընդառաջելու համար:

Գլխավոր քարտուղարը արտահայտեց իր ակնկալությունը, որ տարված աշխատանքները շոշափելի արդյունքներ են ապահովելու ապագային:

Վերջում, համաձայն որդեգրված սկզբունքի, ժողովը փակվեց աղոթքով՝ «Ընդհանուր Տան բոլոր բնակիչների խաղաղության ու բարօրության համար»:

Գագաթնաժողովի աշխատանքների ավարտից հետո Վեհափառ Հայրապետը ներթեմական շրջանակներում որոշ հանդիպումներ ունեցավ համայնքի պատվարժան անդամների հետ՝ ԱՄՆ հայոց արևելյան թեմի առաջնորդարանում ընդունելով նաև ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին, ապա սեպտեմբերի 9-ին վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Սեպտեմբերի 10-ին Նորին Սրբության Մայրավանքի միաբանները հոգու խնդությամբ դիմավորեցին Մայր Աթոռում և «Հրաշափառ»-ի երգեցողությամբ, հանդիսավոր թափորով ուղեկցեցին Մայր Տաճար, որտեղ Վեհափառ Հայրապետը համառոտ ներկայացրեց ուղևորության արդյունքները և իր փպավորությունները:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՌՈՒՄԻՆԻԱ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ռումին Ուղղափառ Եկեղեցու պետ, Նորին Սրբություն Թեոկտիստ Պատրիարքի հրավերով մեկնեց Ռումինիա: Քրիստոնեության 1700-ամյակի նախաշեմին Ռուս և Վրաց Ուղղափառ Եկեղեցիներից հետո սա Վեհափառ Հայրապետի թվով երրորդ պաշտոնական այցելությունն էր:

## ՄԵԿՆՈՒՄ

Սեպտեմբերի 17-ին, ժամը 02.00-ին, Մայրավանքի միաբանության, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաների և պաշտոնեության ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը իջավ Մայր Տաճար, ուր Իջման Սուրբ Սեղանի առջև կատարվեց «Եկեղեցւոյ երկրպագութեան» արարողությունը, որից հետո Վեհափառ Հայրապետին ուղեկցող շքախումբը շարժվեց դեպի Երևանի «Զվարթնոց» օդանավակայան: Հրաժեշտի համար օդանավակայան էր ժամանել նաև ՀՀ Կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ, փիար Ռազմիկ Մարկոսյանը: Վեհափառ Հայրապետին Ռումինիա ուղեկցող պատվիրակության անդամների մեջ էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Սիոն վրդ. Ադամյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ փիար Վլադիմիր Բարխուդարյանը, Տ. Մարկոս աբղ. Հովհաննիսյանը և Բաբկեն սրկ. Նանյանը:

## ԺԱՄԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 18-ին, առավոտյան, ինքնաթիռը վայրէջք կատարեց Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստի միջազգային օդանավակայանում: Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Ռումին Ուղղափառ Եկեղեցու պետ, Նորին Սրբություն Թեոկտիստ Պատրիարքը, պատրիարքական երեք փոխանորդները, Ռումինիայի կրոնի խորհրդի նախագահը, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջ-

նորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը, Տ. Զարեհ վրդ. Պարոնյանը, Ռումինիայում ՀՀ դեսպան, տիկին Կարինե Ղազինյանը և տեղի հայ համայնքի ներկայացուցիչները: Օդանավակայանի հյուրընկալության սրահում տեղի զանգվածային լրատվամիջոցներին տրված ճեպազրույցից հետո մեքենաների շարասյունը շարժվեց դեպի քաղաքի կենտրոնում գտնվող Պատրիարքարանը: Ռումին Ուղղափառ Եկեղեցու Մայր Տաճարում Հայրապետներին էր սպասում խանդավառ հավաքացյալ ժողովուրդը: Ժամանելուն պես հոգևոր պետերը եկեղեցական թափորով մուտք գործեցին Տաճար, ուր կատարվեց ողջույնի արարողություն, ի ընթացս որի ողջույնի խոսքով Վեհափառ Հայրապետին դիմեց Թեոկտիստ Պատրիարքը: Իր խոսքում Պատրիարքը հատկապես կարևորեց այն ներդրումը, որ դարեր շարունակ ռումինաբնակ հայերը ունեցել են Ռումինիայի հասարակական, մշակութային և տնտեսական կյանքից ներս: Բարձր գնահատելով Հայ Առաքելական Եկեղեցու դերն ու արժեքը թե՛ հայ ժողովրդի, և թե՛ միջեկեղեցական կյանքում, Նորին Սրբությունը բնութագրեց այն իբրև «Քրիստոնեությանը ամենամոտ կանգնած Եկեղեցի»: Ողջույնի խոսք ասաց նաև Ամենայն Հայոց Հայրապետը.

*«Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս.*

*Առ Աստված գոհունակութեան աղօթքն է այս պահին Մեր շուրթերին Ձեզ հետ հանդիպման, Ձեր հյուրընկալությունն ընդունելու և մեր երկու Եկեղեցիների եղբայրությունը հավաստելու երջանիկ առիթը Մեզ պարգևելու համար:*

*Հայության հավատի օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեր ժողովրդի ողջույնը, սերն ու լավագույն մաղթանքներն ենք բերել հավատավոր համայն ռումին ժողովրդին:*

*Մենք, որպես Ամենայն Հայոց Հայրապետ, խորին հուզմունք ու բերկրանք ենք ապրում այսօր գտնվելով հյուրընկալ այն երկրում, արգասաբեր ու օրհնյալ այն հողի վրա, որը մեր ժողովրդի համար դժվարին ժամանակներում ընդունեց և սրտաբացորեն տեղ տվեց նրա զավակներին:*

*Արդարև, շուրջ 1000-ամյա հարուստ կենսագրություն ունի ռումինահայ համայնքը, որի հիմնադիրները Հայաստանում Բագրատունյաց թագավորության կործանումից հետո, սելջուկ-թուրքերի արշավանքներից հալածված, հաստատվեցին այստեղ և գտան իրենց երկրորդ հայրենիքը:*

*Հետագա դարերում էլ ռումինահայ համայնքը համալրվեց պարագիր այն հայերով, որոնք լքում էին ավարառու թշնամիներից ոտնակոխ, օտար բռնապետություններից կեղեքվող Հայաստանը և կամ այստեղ գալիս դժվարություններ ապրող հայկական այլ գաղթօջախներից: Հաստատվելով Ռումինիայի տարածքում՝ հայ բնակչությունն ազատ էր եկեղեցի կառուցելու, դպրոցներ հիմնելու, քրիստոնեական ու ազգային ավանդույթներով ապ-*

բերելու և գործուն մասնակցություն բերելու երկրամասի քաղաքական-հասարակական կյանքում:

Այսօր մենք սրտի գոհունակությամբ ու անկեղծ հպարտությամբ ուզում ենք նշել, որ մեր ժողովրդի զավակները հավատարիմ ու ազնիվ քաղաքացիները դարձան ռումինական երկրի՝ դարեր ի վեր վայելելով նրա ժողովրդի և իշխանությունների հարգանքն ու վստահությունը: Ռումինական հնագույն քաղաքների հայ բնակչությունն օժտված էր ներքին ինքնավարությամբ, միավորված արհեստակցական և առևտրական միություններում, անգամ ուներ սեփական զինջոկատներ, որոնք հարկ եղած դեպքում ռումին ժողովրդի կողքին կանգնում էին երկրամասի պաշտպանների շարքերում:

Ռումինահայությունը կիսել է ռումին ժողովրդին բաժին ընկած դժվարությունները. թուրքական տիրապետության բռնությունները և հավատարմորեն նվիրվել Ռումինիայի ազատագրության գործին: Հայ ժողովրդի զավակները ներդրում ունեն 19-րդ դարասկզբին Մոլդովիայի և Վալախիայի ինքնավարության հաստատման և հետագայում դրանց միավորման գործում: Նրանք իրավամբ արժանացան միացյալ Ռումինիայի առաջին իշխան Ալեքսանդրու Յոհան Կուզայի համակրանքին:

Ռումինահայերը նվիրումով ծառայել են ռումինական գիտությանը, արվեստին ու լուսավորության գործին՝ տալով բանաստեղծների, իրավաբանների, դիվանագետների, բժիշկների, ուսուցչապետների և լուսավորիչների համաստեղություն, այնպիսի անվանի զավակներ, ինչպես բժշկագետներ Անդրեաս Փոփովիչը, Կարոլ և Հակոբ Միկուլիները, քաղաքական գործիչ ու դիվանագետ Մանուկ Բեյ Միրզայանը, ճարտարապետ Հակոբ Մելիքը, որի անունով կոչվում է Բուխարեստի փողոցներից մեկը, մեծ լուսավորիչ, հրապարակիչ, թատերագիր ու բանաստեղծ, ռումինական թատրոնի և օպերայի ռահվիրա Գեորգի Ասաքին, որը համենայնի նպաստեց նաև հայ դպրոցի ծաղկմանը Ռումինիայում, բանաստեղծ Նիկոլայե Պրունկուն, հրապարակիչ Թեոդոր Պալլասանը: Շատ են արժանիները անուն առ անուն հիշելու, որոնցից յուրաքանչյուրն իր բնագավառում աստվածատուր իրենց շնորհներով ծառայելով Ռումինիայի և ռումինահայ հասարակական կյանքին՝ միաժամանակ ամրապնդել են երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը, որն ունի թանկ ու հարուստ ավանդներ, և որոնք շարունակվում են այսօր:

Համայն հայությունը մեկ անգամ էլ սիրեց Ռումինիան երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի անձով, ում բազում արժանիքների արմատները տեսնում էր նաև նրա սիրելի, չքնաղ ծննդավայրում: Որպես հոգեզավակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մեզ համար ևս Ռումինիան հարազատ է և ունի առանձնակի հմայք ու գրավչություն: Մենք

*ռումինահայ համայնքի հոգևոր առաջնորդ, Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի միջոցով բազմիցս առիթ ենք ունեցել հավաստիանալու, որ մեր ժողովրդի զավակները համայնքային փարթամ կյանքով են ապրում այստեղ՝ վայելելով Ռումինիայի ներկա իշխանությունների և Ռումինական Ուղղափառ Եկեղեցու վստահությունը, բարի կամեցողությունն ու հոգածությունը:*

*Մեր երկու ժողովուրդներն ու երկրները ունեն ընդհանրություններ ոչ միայն պատմական հեռու անցյալում, այլ՝ արդի կյանքում: Տառապյալներ ապրելով խորհրդային անաստվածության ժամանակները և ազգային հոգևոր զարթոնքի հուժկու ալիքով թոթափելով բռնության կապանքները, հայ և ռումին քրիստոնյա բարեկամ ժողովուրդները և մեր երկու Եկեղեցիները այսօր նույնական խնդիրներ ունեն հաղթահարելու աստվածամերժության ավերները մարդկանց հոգիներում, շենացնելու և բարգավաճ դարձնելու իրենց նորանկախ հայրենիքները, կերտելու բարօր, օրինահարգ հասարակություն: Քրիստոնեական եղբայրության, բարեկամության ու համագործակցության մեր դարավոր կապերը միայն նպաստելու են նորօրյա մեր կյանքի վերափոխմանը, քրիստոնեական հավատի վերարժևորմանը, որ ծառայում է Բարու հաղթանակին:*

*Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին 2001 թ. նշելու է Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյա հոբելյանը: Անսահման հույսով է լեցուն Մեր հոգին, որ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Աստվածհայտնության 2000-րդ տարեդարձով եզրագծվող և ազգային քրիստոնեական մեր կյանքում նշանակալի իրադարձության հոբելյանով բացվող նոր՝ երրորդ հազարամյակը առանձնանալու է Հավատի ու Սիրո պտղաբերումով՝ աշխարհում խաղաղության, փոխհասկացողության ու բարի կամեցողության հաղթանակներով:*

*Ձերդ Սրբություն, մեր հանդիպման այս երջանիկ առիթով Ամենայն Հայոց Հայրապետիս աղոթքն ու մաղթանքն է, որ Բարձրյալն Աստված հանապազ Իր օրհնության ու խնամքի ներքո պահպանի Ռումինիայի հնագույն և բարեբեր հողը, նրա բարեջան, ստեղծագործ ու հյուրընկալ ժողովրդին: Թող Տերը արգասավորի մեր երկու Եկեղեցիների, ժողովուրդների ու պետությունների բարեկամությունը՝ հանուն մեր նախնյաց բարի հիշատակի ու սրբազան ավանդների, հանուն նորօրյա մեր կյանքի ու ապագայի:*

*«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»:*

Ապա Թեոկտիստ Պատրիարքը Վեհափառ Հայրապետին և պատվիրակության անդամներին ուղեկցեց դեպի մատուռ և եկեղեցի, ինչպես նաև ծանոթացրեց Պատ-

ռիարքարանում պահվող թանգարանային արժեքներին. որից հետո, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, տրվեց ճաշ Պատրիարքի նստավայրում:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը Տիրայր Սրբազանի, տիկին Կարինե Ղազինյանի և պատվիրակության անդամների հետ այցելեցին Բուխարեստի կենտրոնում գտնվող հայկական գերեզմանատուն: Ամենայն Հայոց Հայրապետը հոգեհանգստյան պաշտոն կատարեց լուսահոգի Վազգեն Ա Կաթողիկոսի հոր շիրիմի առջև:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ 19-20, ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԹԵՄԵՐ

Հաջորդ օրը, առավոտյան, Ռումին Եկեղեցու թեմական կյանքին մոտիկից ծանոթանալու նպատակով, Վեհափառ Հայրապետը Թեոկտիստ Պատրիարքի ուղեկցությամբ մեկնեց քաղաքամայր Բուխարեստից: Առաջին թեմը Ռամնիկուլուի թեմն էր, ուր Հայրապետներին եկեղեցական դասի և հավատացյալ ժողովրդի ներկայությամբ ընդունեց Գերասիմ Քրիստեա եպիսկոպոսը: Նույն թեմի տարածքում Վեհափառ Հայրապետն այցելեց Դինտրուն Լեմն և Հուրեզի վանքեր, ուր մոտիկից ծանոթացավ տեղի վանական միաբանությունների ներքին կյանքին, կանոնադրությանը, առօրյային և հուզող խնդիրներին: Երկրորդ թեմը Արճեշն էր: Թեմի առաջնորդը՝ Կալինիկ եպիսկոպոսը, հոգևորականության, ճեմարանականների և տեղի քաղաքապետի ու պաշտոնեության հետ Վեհափառ Հայրապետին և Թեոկտիստ Պատրիարքին դիմավորեց առաջնորդանիստ եկեղեցում, ուր տեղի ունեցավ բարիգալստյան կրոնական արարողություն, որից հետո առաջնորդարանում, ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տրվեց ճաշ:

Վերադառնալով մայրաքաղաք՝ Նորին Սրբությունն այցելեց Ռումինիայում Հայաստանի Հանրապետության դեսպանատուն, ուր տիկին Կարինե Ղազինյանը Վեհափառին մանրամասն տեղեկացրեց դեսպանատան ծավալած աշխատանքների և ընթացիկ գործունեության մասին:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

Նույն օրը Վեհափառ Հայրապետը Թեոկտիստ Պատրիարքի ուղեկցությամբ այցելեց Ռումինիայի Հանրապետության նախագահ Էմիլ Կոնստանտինեսկուի նստավայր, ուր Վեհափառ Հայրապետին, ի գնահատումն իր էկումենիկ ոգու և ի հաստատումն Հայ և Ռումին Եկեղեցիների և ժողովուրդների միջև բարեկամական և հոգևոր կապերի վերամրացման, հանձնվեց երկրի ազգային բարձրագույն պարգևը՝ «Ռումինիայի աստղ» շքանշանը:

Այնուհետև Ռումինիայի նախագահն ասաց.

«Ձերդ Սրբություն, փիկնայք և պարոնայք.

«Ռումինիայի Աստղ» ազգային շքանշանն այսօր հանձնվում է Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս, Նորին Սրբություն Գարեգին Բ-ին, Որը մեզ ուրախացնում է մեր մեջ լինելով:

Հավաստացնում եմ, Ձերդ Սրբություն, որ մեր այս քայլը նշան է բնական այն երախտագիտության ու բարեկամության, որ մշտապես ցուցաբերում եք Ռումինիայի և ռումին ժողովրդի հանդեպ:

Դուք Ձեր բարձր անհատականությամբ ճանաչված անձնավորություն եք քրիստոնյա ողջ աշխարհում: Ռումինացիները հիացած են այն ջանքերի համար, որ Դուք ներդնում եք ազատ և բարգավաճ կյանք սփռելու, 1988 թ. երկրաշարժի նյութական և Սովետական Հայաստանի հոգևոր ծանր ավերածությունները վերացնելու համար: Դուք հանդես եք գալիս որպես մի շնորհաշատ հոգևոր առաջնորդ և նվիրված կազմակերպիչ Ձեր ղեկավարած Եկեղեցու և Ռումին Ուղղափառ Եկեղեցու հարաբերությունների սերտացմանը՝ գիտակցելով, որ քրիստոնյաների միասնության պակասը միայն ժամանակավոր է և արհեստական: Դուք էկումենիկ ոգով մտերմնցելով մերձեցնում եք Եկեղեցիները:

Հանրածանոթ են մեր ժողովուրդների բարեկամության ավանդական հարաբերությունները, այն չափազանց գործուն և բեղմնավոր դերը, որ ունեցել է հայ համայնքը Ռումինիայի պատմության ընթացքում: Դնեսս Մոլդովայի իշխան Ալեքսանդր Բարեգութի օրոք է հիմնվել Հայ եպիսկոպոսությունը Աոչեվավա իշխանանիստ քաղաքում, և հայերը հանդես են եկել որպես ազնվաբարո, աստվածասեր մարդիկ՝ փալով մեր երկրին շնորհաշատ անհատականություններ:

Ձերդ Սրբություն. Դուք, որպես Հայ Եկեղեցու առաջնորդ, դեպի հաջորդող հազարամյակն եք փոխանցում բարեկամության և քրիստոնեական համագործակցության մղումները, որոնք առկա են դարերի ընթացքում մեր ժողովուրդների և Եկեղեցիների միջև»:

Նախագահական պալատից անմիջապես հետո երկու հոգևոր պետերը ուղևորվեցին դեպի հայոց եկեղեցի, ուր ոգևորված հայ համայնքը Վեհափառին դիմավորեց «Հրաշափառ»-ով և ծափողջույններով: Հուրախություն ամենքի, Նորին Սրբությունն իր Հայրական պատգամը հղեց ներկա հայորդիներին: Ապա Վեհափառն այցելեց առաջնորդարանի շենք ու եկեղեցու փարածքում գտնվող թանգարան: Վերադառնալով պատրիարքարան, Ամենայն Հայոց Հայրապետը հրաժեշտ փվեց Թեոկփիստ Պատրիարքին:

Սեպտեմբերի 21-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ավարտելով պաշտոնական այցը Ռումին Ուղղափառ Եկեղեցի, վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ ԱՐՑԱԽԻ ԹԵՄ

Սեպտեմբերի 25-ին Վեհափառ Հայրապետը Հովվապետական անդրանիկ այցելությամբ մեկնեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Շիրակի թեմից հետո, սա Վեհափառ Հայրապետի երկրորդ Հովվապետական այցելությունն էր ներքին թեմերի հավատացյալներին:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Գերաշնորհ Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Ս. Հռիփսիմե վանքի վանահայր, Հոգեշնորհ Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանը, ՀՀ ԶՈՒ Հոգևոր ծառայության առաջնորդ Տ. Արշեն աբեղա Սանոսյանը (որպես գավազանակիր), Բարեշնորհ Բաբկեն սրկ. Նանյանը և լրագրողներ:

Առավոտյան ժամը 11.00-ին Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի միաբանության և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսանողության ուղեկցությամբ թափորով մուտք գործեց Մայր Տաճար և, հավուր պատշաճի կանոնական աղոթքից և բարի երթի խոսքից հետո, միաբաններին, ուսանողությանը, Մայր Աթոռի պաշտոնությանը և ներկա հավատացելոց ներկայացրեց իր այցելության նպատակները՝ մասնավորապես շեշտելով պատերազմ բոված արցախահայոց հոգեպես զորեղացնելու և զորակցելու անհրաժեշտությունը:

Այնուհետև մեքենաների շարասյունը ուղղվեց դեպի Արցախ: Հայաստան-Արցախ կամուրջ հանդիսացող Քաշաթաղի շրջանն առաջինն էր, որ ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Շրջանի սահմանագլխին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, շրջանի վարչակազմի ղեկավար Ալեքսան Հակոբյանը, ԼՂՀ իշխանության ներկայացուցիչներ:

Բերձոր ավանի նորակառույց Ս. Համբարձում եկեղեցու բակում հավաքվել էին բազմաթիվ քաշաթաղցիներ, ովքեր ավանդական «աղ ու հացով», ծաղիկներով ու երգ-երաժշտությամբ դիմավորեցին Վեհափառ Հայրապետին, և «Հրաշափառ»-ով ուղեկցեցին եկեղեցու ափյան, ուր կանոնական աղոթքից հետո բարի գալուստի խոսք ասաց Արցախի թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը: Սրբազան Հայրը մեծապես կարևորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Արցախի թեմ՝ մատնանշելով, որ արցախցին այսօր կարիք ունի իր Հայ-

րապետի օրհնությանը, պատգամներին և մխիթարությանը: Խոսքի ավարտին Սրբազան Հայրը խնդրեց Վեհափառ Հայրապետին՝ տալու իր Հայրական օրհնությունը ներկա հոգևորականաց, իշխանության ներկայացուցիչներին և հավատացյալներին:

Վեհափառ Հայրապետը, Արցախի թեմ Հովվապետական այցելությամբ գտնվելու առիթով, գոհություն մատուցելով Բարձրյալին՝ դիմեց ներկաներին.

*«Հոգու անհուն բերկրանք ենք ապրում այս պահին, երբ կանգնած ենք Արցախի ազատագրված, հերոսական հողի վրա: Մեր անդրանիկ Հովվապետական այցելությունն է Արցախ աշխարհ, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Հոգու պարտք է Մեզ համար հայրապետական գահակալության սկզբին իսկ կատարում այցելել հերոսական Արցախ աշխարհ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունը փոխանցել հավատավոր Մեր ժողովրդին, որ յոթանասուն և ավելի տարիներ զրկված է եղել հոգևոր կյանքին հաղորդակցվելուց, կրոնական ծեսից ու արարողությունից: Բայց փառք Աստուծո, որ առատորեն օրհնություն իջեցրեց մեր ժողովրդի և Արցախ աշխարհի վրա և 1988 թ. ազգային-ազատագրական շարժումով ազգը հայոց կարողացավ նվաճել իր ազատությունը և անկախությունը ու դեպի երկինք խոյացնել իր եկեղեցիները, աղոթքի տաճարները, որոնց մեջ աղոթքով և աղոթարկու գործերով օրավուր զորացնում ու ամրապնդում է իր հոգին, կամքը և հավատքը:*

*Մեր այցելությունը Արցախ աշխարհ ուղեկցվում է գոյապայքարի ընթացքում զոհված մեր հերոս զավակների հիշատակի առջև հարգանքի տուրք մատուցելու, մեր գլուխները խոնարհելու գիտակցությամբ, մեր աղոթքը միախառնելու նրանց արյան և Արցախի աշխատասեր, ստեղծագործ ժողովրդի արդար քրտինքի հետ, որոնցով նվիրագործվել է հողը Արցախի: Մենք եկել ենք այստեղ նաև մեր ժողովրդի հավատավոր զավակաց հետ վերանորոգելու մեր ուխտը՝ հավատարիմ մնալու սրբազան մեր հավատքին, հավատարիմ մնալու այն գաղափարներին, այն երազներին, որոնց համար իրենց կյանքը տվեցին բազմահազար զավակունք մեր ժողովրդի: Նրանց երազը՝ ազատ ու անկախ տեսնել Արցախ աշխարհը մեր, տակավին ամբողջական լրումին չի հասել, որովհետև տակավին Հայոց աշխարհի սահմաններից հեռու չի վանված վտանգը և սպառնալիքը պատերազմի:*

*Մենք՝ ձեզ հետ միասին, որ շնորհն ունենք այսօր այս հողի վրա ապրելու, նաև պարտականությունն ունենք ավարտին հասցնելու մեր նահատակ զավակաց երազները՝ կերտել Հայոց անկախ պետականությունը Հայաստան և Արցախ աշխարհում, ապահովել անվտանգ և բարգավաճ կյանք Հայոց երկնքի ներքո: Մենք հավատում ենք, որ հայրենյաց հողին հեղված մեր*

սիրելի զավակների արյունից պիտի վերընձյուղվեն. պիտի ծլարձակվեն նոր շիվեր ի դեմս անուշիկ. քաղցր գեղեցիկ մեր մատաղ սերնդի. այս փոքրիկ երեխաների, որոնք պիտի գան նույն ոգով կանգնելու հայրենյաց պաշտպանության սրբազան գործի պատվանդանին և կերտելու Հայոց զորեղ Հայրենիքը, Հայոց զորեղ երկիրը՝ Հայաստան և Արցախ, իր աշխարհներով:

Այս առիթով ուզում ենք Մեր գնահատանքը փոխանցել բոլորին՝ ձեր հերոսական, արի ոգու համար, որ այս տարիների ընթացքում անձկուն կամքով ու հավատքով փարված եք մնացել Արցախ աշխարհին և քայլ առ քայլ մոտեցրել երկիրը այս մեր նահատակ զավակների երազների իրականացմանը:

Մենք մեր գնահատանքն ենք բերում մեր հոգևորականներին, որոնք մեր ժողովրդի զավակաց կողքին, ծանր ու դժվարին ժամանակներում պատերազմի, հրանոթների որոտյունի ներքո իրենց առաքելության, իրենց ծառայության նվիրական սուրբ գործին լծված աշխատում էին մխիթարություն բերել, աշխատում էին ոգևորություն, խանդավառություն, անձկուն ոգի հաղորդել մեր ժողովրդի զավակաց:

Այսօր խաղաղության պայմաններում նրանք նույն ջանադրությամբ ու նախանձախնդրությամբ շարունակում են իրենց ծառայությունը, որպեսզի հավատքով շենանա Արցախ աշխարհը, որպեսզի հայորդին իր հայացքը մշտապես հառի դեպի երկինք՝ Աստված փառաբանելու այն ամեն ցնծության, բերկրանքի ու հաղթանակի համար, որ Աստված պարգևեց մեզ: Իրապես, որքան էլ ցավ ու տրտմություն է մեր հոգում, բայց գոհաբանական զգացումը և աղոթքը միշտ ուղեկից են մեզ, միշտ մեր շուրթերին են:

Մենք մեր գնահատանքն ու բարեմաղթանքն ենք հղում նաև Արցախ աշխարհի իշխանավորներին, պետական այրերին, որոնց արի, քաջ կամքով և իմաստուն առաջնորդությամբ Արցախ աշխարհը ձեռք բերեց իր անկախությունը, պահպանեց և դուրս է եկել ճանապարհ՝ այն հավերժական և անշրջելի դարձնելու: Թող Աստված օրհնի բոլոր ջանքերը մեր ժողովրդի, որոնք նպատակաուղղված են Իր փառքը հաստատելու Հայոց հողի վրա՝ շենացնելով երկիրը մեր, զորացնելով աշխարհը Հայոց, բարօր դարձնելով կյանքը հայրենական մեր երկնքի ներքո:

Աստծո խաղաղությունը մշտական թող թևածի մեր աշխարհում և պարգևի մեզ ստեղծագործելու նույն հավատքը, որով կերտվել են աղոթավայրերը, սուրբ տաճարները Հայոց, որով զարդարվել է երկիրը մեր մշակութային այնպիսի ձեռքբերումներով ու իրագործումներով, որ սերունդները ոչ միայն Հայոց աշխարհի, այլև համայն մարդկության, հպարտությամբ են լցվում, և որոնք ամբողջացնում են գանձարանը մարդկության մշակու-



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
ԵՎ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՊԱՐԳԵՎ ԱՐՔԵՊՍ.
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ

*թային արժեքների: Թող Տերը լինի մեզ օգնական մեր արդար ընթացքին, դեպի խաղաղություն, դեպի շենացում հայրենական մեր երկրի:*

*Խաղաղություն, սեր և միաբանություն թող մեզ այժմ և հավիտյանս. ամեն»:*

Այնուհետև Վեհափառ Հայրապետն այցելեց Բերձորի նորաստեղծ թանգարան, ուր ցուցադրվում էին արցախյան մշակույթի բազմաթիվ նմուշներ:

Վեհափառ Հայրապետն իր շքախմբով Բերձորից ուղևորվեց դեպի Ստեփանակերտ: Շուշի քաղաքի մերձակայքում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ փոխ Օլեգ Եսայանը, Վարչապետ փոխ Անուշավան Դանիելյանը, պաշտոնատար այլ անձինք, որոնց ուղեկցությամբ էլ Վեհափառ Հայրապետը և իր շքախմբի անդամները հասան Ստեփանակերտ և հանգրվանեցին կառավարական նյութանոցում:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Նույն օրը, երեկոյան, ԼՂՀ նախագահի նստավայրում Նորին Սրբությունը հանդիպեց ԼՂՀ նախագահ փոխ Արկադի Ղուկասյանին: Հանդիպմանը ներկա էին նաև ԼՂՀ Ազգային ժողովի նախագահը և պաշտոնատար այլ անձինք:

Նախագահը բարի գալուստի խոսք ասաց և ողջունեց Վեհափառ Հայրապետին՝ Արցախ աշխարհ Հովվապետական այցելությունը արցախցուն նոր լիցք հաղորդելու առիթ նկատելով:

Վեհափառ Հայրապետն իր հերթին նշեց, որ ուրախություն է իր համար Հայրապետական այցելությամբ գտնվել Արցախի հերոսական հողում և առաջին իսկ առիթով հանդիպել նախագահին: Նորին Սրբությունը կարևորեց Եկեղեցու դերը և առաքելությունը ներկա մեր կյանքում, որն է՝ ժողովրդին փալ այն բարոյական հենքը, առանց որի չի կարող ստեղծվել ամուր պետություն, և առանց որի որևէ հաղթանակ չի կարող լինել մնայուն ու արժեքավոր:

Զրույցի ընթացքում նախագահ Ա. Ղուկասյանը ներկայացրեց Արցախի ներքաղաքական կյանքին, սոցիալ-տնտեսական խնդիրներին և խաղաղության ամրապնդման ու արցախյան հարցի արդարացի լուծմանը նպատակաուղղված աշխատանքները: Մատնանշեց այն կարևոր իրողությունը, որ արցախցին այսօր հավատով է լցված իր ապագայի նկատմամբ, և բազմաթիվ փախստականներ վերադառնում են հայրենի երկիր:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը և ԼՂՀ նախագահը փոխանակեցին հուշանվերներ:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼՂՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Սեպտեմբերի 26-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց ԼՂՀ Ազգային ժողով, հանդիպում ունեցավ ԱԺ նախագահ Օլեգ Եսայանի և Արցախի խորհրդարանականների հետ:

Պատգամավորների հետ հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը նշեց, որ իբրև Հայոց Կաթողիկոս առաջնահերթ պարտք է համարում այցելել հատկապես այն տարածաշրջանները, որտեղ անցնող տասնամյակը եղել է առավել դժվարին և փորձություններով լի: Այդպիսին էր Հովվապետական անդրանիկ այցը աղետյալ Շիրակ, այդպիսին է նաև այցը Արցախ աշխարհ: Վեհափառ Հայրապետն իր ուրախությունը հայտնելով, որ այլևս խաղաղություն է հաստատված Արցախում, իր աղոթքը հղեց առ Աստված, որպեսզի ընդմիշտ վերանա պատերազմի սպառնալիքը, և երբեք չընդհատվի զավակների արյան գնով ձեռք բերված խաղաղությունը:

Հանդիպման ընթացքում Հայոց Հայրապետն իր օրհնությունը փոխեց և իր գնահատանքը հայտնեց արցախցի պատգամավորներին՝ համոզմունք հայտնելով, որ ազգային արժեքների և միաժամանակ ժողովրդավարական սկզբունքների վրա խարսխված նրանց իմաստուն աշխատանքը այսուհետ ևս ուղենիշ է լինելու հզոր ու շեն երկրի ստեղծման համար:

ԱԺ նախագահ Օլեգ Եսայանն իր հերթին նշեց, որ ԼՂՀ Ազգային ժողովը ամենայն պատասխանատվությամբ է լծված օրինաստեղծ իր աշխատանքին:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը և Գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը պատասխանեցին պատգամավորներին հետաքրքրող հարցերին, որոնք վերաբերում էին Արցախում եկեղեցաշինությանը, 1700-ամյակի տոնակատարությունների կազմակերպման ընթացքին, ազգային կյանքում Եկեղեցու ներկայիս առաքելությանը: Մասնավորապես տեղեկացվեց, որ 1989 թ. ի վեր Արցախում վերակառուցվել են մեկ տասնյակից ավելի եկեղեցիներ, կառուցվում են նորերը: Այսօր վերանորոգման աշխատանքներ են ընթանում Դադիվանքի երկու եկեղեցիներում, Ծիծեռնավանքում: Հուրախություն ստեփանակերտցիների, Վեհափառ Հայրապետը ծանուցեց նաև Ստեփանակերտում նոր եկեղեցի կառուցելու մտադրության մասին:

Ապա Վեհափառ Հայրապետը ԱԺ նախագահի, թեմակալ առաջնորդի և իրեն ուղեկից շքախմբի անդամների հետ Հովվապետական այցելությամբ մեկնեց ԼՂՀ Մարտունու շրջանի գյուղերն ու սրբավայրերը:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

### ՄԱՐՏՈՒՆԻ

Նորին Սրբության գալուստն ամենուր ընդունվում էր մեծագույն խանդավառությամբ: Հայոց Հայրապետի համար այս շրջագայությունը բազում փորձություններ կրած արցախցիների հոգսերին, կարիքներին և մտահոգություններին հաղորդակցվելու լավագույն հնարավորությունն էր: Մարտունի քաղաքի կենտրոնում նոր կառուցվող Ս. Մեծն Ներսես եկեղեցու տարածքում հավաքվել էին հարյուրավոր հայորդիներ, բազմաթիվ դպրոցականներ՝ ծաղկեփնջերով, քաղաքային և շրջանային իշխանության ներկայացուցիչներ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր օրհնությունն ու մաղթանքը հղեց մարտունեցիներին՝ հորդորելով նրանց հավատարիմ մնալ Քրիստոսի Ավետարանի պատգամներին, առաքելական մեր ավանդներին և վարդապետությանը: Իր խոսքում Վեհափառ Հայրապետն ի մասնավորի ասաց.

*«Որպես Հայրապետ Հայոց հպարտորեն ենք ուխտ դրել հողը Արցախի, հպարտության զգացումով, քանզի ձեր մեջ տեսնում ենք մարմնավորված, խտացված և կենսունակ մեր պատմության լավագույն ավանդները, մեր հայրերի բարձր, վսեմ ու վեհ հատկանիշները հավատի, կամքի, արիության և աշխատասիրության: Գիտեմ, որ տակավին ցանկալի պայմանները չեն ստեղծված հետպատերազմյան այս շրջանում, որով պիտի ապահովվեր ձեր բարեկեցիկ, երջանիկ կյանքը այս տարածաշրջանում, այս նվիրական, այս սուրբ հողի վրա, բայց գիտեմ նաև, որ դուք, զավակունք հայ ազգի, Ձեր արյունը ներարկել խմանալով այս հողի մեջ՝ պիտի կարողանաք այս հողից ծնեցնել կյանքը բարօր ու երջանիկ ձեր զավակաց համար: Ձեր կամքը աննկուն է, ձեր ոգին՝ մարտունակ, ձեր վճռականությունը՝ աննվազ ու աննահանջ: Աստված պիտի պարգևատրի, պիտի բազմապատիկ անգամ փոխադարձի ձեր դրսևորած կամքը, ձեր արժանիքները: Առաջինը արդեն իսկ տեսնում ենք. իրականություն դարձած Ս. Ներսես Մեծ եկեղեցու շինարարությունն է, որի օրհնությունը պիտի գա բարեփոխելու ձեր կյանքը ամբողջապես, որովհետև եկեղեցու օրհնության ներքո ձեր ճանապարհը ընթանալու է աստվածսիրության և Աստծո պատվիրանների պահպանության, Աստծո պատգամների, ճանապարհների ընթացքով: Գիտեմ, ոչինչ, քան ավելի, միաբանում է ժողովուրդը, ոչինչ, քան ավելի, շաղախում է սերը մարդկանց հոգիներում, քան գոյամարտը, բայց առավել չափով աստվածսիրությունն է, որ բարի պտուղներ է ապահովում մարդկությանը, և մարդկանց հոգիները լցվում են աստվածային պատվիրաններով, ու մարդիկ գիտակցաբար իրենց կյանքը կազմակերպում են այդ պատվիրանների համա-*

*ձայն՝ միմյանց սիրելու, միմյանց ներելու, միմյանց զորակցելու, մեկը մյուսի եղբայրությամբ ցնծալու:*

*Այնժամ քրիստոնեական սիրով շաղախված պիտի կարողանանք միասնական ու համախումբ, ինչպես որ եղել ենք, հետայսու ևս ապրել ընդհանրական մեկ շնչով, որ է կերտել զորեղ հայրենիք, կերտել շեն երկիր ապահով ու երջանիկ իր ապագայով, որպեսզի մեր զավակները անցնեն կյանքի այն ճանապարհը, ինչ որ բաժին ընկավ մեզ»:*

Այնուհետև Վեհափառ Հայրապետը իրեն ուղեկցող խմբի հետ շարունակեց այցելությունը Մարտունու տարածաշրջանի գյուղերով:

**ՃԱՐՏԱՐ**

Ճարտար գյուղում բնակիչների հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հղեց այն նվիրյալներին, որոնք, հերոսաբար մարտնչելով արցախյան պատերազմում, անսասան են պահել հայրենի հողը և խաղաղ կյանք ապահովել իրենց զավակների համար:

*«Արցախն ապրում է ազատության մեջ, Արցախը անկախ է, Արցախը նաև նվաճել է իր խաղաղ կյանքը: Միանշանակ է՝ դյուրին չեղավ, թանկ վճարեցինք, շատ թանկ. մարդկային հազարավոր կյանքեր զոհաբերեցինք անկախության մեր նվիրական զոհասեղանին: Մխիթարական է, սակայն, Հայոց Հայրապետիս համար՝ տեսնել հպարտության ոգին, հպարտ կեցվածքը մեր ծնողաց, ովքեր իրենց զավակներին են կորցրել, տեսնել արի, քաջ պահվածքը մեր մայրերի, մեր հայրերի, ովքեր որ ցավի մեջ, իրենց կորուստի մեջ չեն կքել և չեն ընկճվել և այսօր կանգնած են թանկ վճարված ազատությունը մնայուն դարձնելու, հավերժական դարձնելու նվիրական առաքելության ճանապարհին, որովհետև ժողովուրդը հասու է այն ճշմարտությանը, որ նահատակաց հիշատակին արժանի հատուցումը այն երազների կերտումն է, որոնց համար մեր ժողովրդի զավակունք իրենց կյանքը զոհաբերեցին: Նրանց հոգու մեջ բյուր երազներ կային, իսկ երազները երբեք չեն մահանում, երազները անմեռ են շնորհիվ ապրողաց, որոնք լծվում են այդ երազների իրականացման նվիրական առաքելությանը:*

*Ես հավատում եմ ձեզ, հավատում եմ մեր զավակներին Արցախի և Հայաստանի, ովքեր գիտցան կամք դրսևորել դժվարին գոյամարտում, առավել ևս պիտի գիտնան ու կարող պիտի լինեն խաղաղության պայմաններում արձանագրել նույնպիսի հաղթանակներ, բոլոր այն ոլորտներում, որոնց համար ապրել ենք, մարտիրոսացել որպես ժողովուրդ, ապրելու ենք և հավերժի մեր ընթացքով հպարտորեն քայլելու ենք դեպի նոր հորի-*

*ցանկերը մեր ժողովրդի գալիքի: Թող Աստված օրհնի ձեզ, սիրելիներ, ուժ, կարողություն պարգևի և միշտ ձեր քայլերը ուղղորդի մեր հայրերի սրբազան հավատքի ճանապարհներով, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանի պատվիրաններով ու պատգամներով, որպեսզի Աստծո օրհնությունը միշտ մեզ հետ լինի, մեր կյանքը օրհնող, մեր կյանքը երջանկացնող: Աստված մեզ օգնական ու պահապան մեր կյանքի նոր ճանապարհին, մեր կյանքի նոր ընթացքում: Ողջ եղեք. Սուրբ Հոգու շնորհներն ու զորությունը ձեզ ամենքիդ, մեզ բոլորիս. ամէն»*,- ճարտարի բազմամարդ հրապարակում պատգամեց Վեհափառ Հայրապետը՝ աղոթք բարձրացնելով առ Աստված նաև խաղաղության համար նահատակվածների հիշատակին:

## ՍՈՍ

Մարտունու շրջանի Սոս գյուղում փեղացիներն իրենց հոգսերն ու մտահոգությունները պատմեցին Հայոց Հայրապետին՝ ականկալելով Մայր Եկեղեցու զորակցությունը: *«Բարօր կյանքի հաստատման և դժվարությունների հաղթահարման միակ երաշխիքը*,- ասաց Նորին Սրբությունը,- *Աստվածահաճո պատգամների հավատարիմ մնալն է, միմյանց ապավեն և աջակից լինելը»*: Նորին Սրբությունը հայրապետական իր օրհնությունը բաշխեց հավատավոր հոտին՝ հորդորելով մշտապես ամուր կառչել մեր սրբազան հավատին և աստվածահաճո գործերով շենացնել հայրենի գյուղը, պետությունն ու Եկեղեցին:

## ՄԽՏՈՐԱՇԵՆ

Օրվա ավարտին Նորին Սրբությունն այցելեց նաև Մխտորաշենի հանրահայտ այն վայրը, որտեղ կանգնած է երկհազարամյա սոսենին, և որը արցախցու համար դարձել է յուրօրինակ մի սրբատեղի:

## ԱՄԱՐԱՍ

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցելեց Ամարաս և «Հրաշափառ»-ի երգեցողությամբ մուտք գործեց վանական համալիր: Հայոց Հայրապետը գոհություն մատուցեց Աստծուն, որպես Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոս, Ամարասի լուսեղեն կամարների փակ գտնվելու համար, մի սրբավայր, որի հիմքերը դրվել են դեռևս Հայոց առաջին Կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից, և որտեղից իր գրերն է տարածել Ս. Մեսրոպ Մաշտոցը: Ամարասի դարավոր վանքում հոգեհանգստյան արարողությամբ Նորին Սրբությունը հարգանքի տուրք մատուցեց բոլոր այն նվիր-

յալներին, որոնք կառուցել ու պահպանել են եկեղեցին՝ դարձնելով այն հայի լինելության խորհրդանիշ: Այդ նվիրյալներից է նաև Ս. Գրիգոր Լուսավորչի թոռը՝ Ս. Գրիգորիսը, որի օրոք ավարտվել է եկեղեցու շինարարությունը, և որի դամբարանը գտնվում է եկեղեցու խորանի տակ:

### ՀԵՐ-ՀԵՐ

Ավելի ուշ, երեկոյան, Հեր-Հերի հինավուրց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կեսնելով ցուցապաստառներով իրեն դիմավորելու եկած գյուղի մանուկներին և անսալով նրանց խնդրանքին, Վեհափառ Հայրապետը խոստացավ միջոցներ գտնել նաև այս գյուղի 1300-ամյա եկեղեցու վերակառուցման համար:

Հեր-Հերը վերջին գյուղն էր, ուր իր օրհնությունը բաշխեց Հայոց Հայրապետը՝ ավարտելով Հովվապետական այցելությունը ԼՂՀ Մարտունու շրջան:

Ուշ երեկոյան Վեհափառ Հայրապետը իր շքախմբի ուղեկցությամբ վերադարձավ Ստեփանակերտ:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սեպտեմբերի 27-ին, առավոտյան, Վեհափառ Հայրապետը Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանի, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի և Հոգեշնորհ ու Արժանապատիվ Հայրերի ուղեկցությամբ այցելեց ԼՂՀ կառավարություն, հանդիպում ունեցավ երկրի վարչապետ Անուշավան Դանիելյանի և կառավարության ողջ անձնակազմի հետ:

Ողջունելով Հայոց Կաթողիկոսի այցը Արցախ աշխարհ, պրն Դանիելյանը և կառավարության անդամները Վեհափառ Հայրապետին ներկայացրեցին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանին նվիրված կառավարական ծրագրերը: Վեհափառ Հայրապետը և իրեն ուղեկցող հոգևորականները ԼՂՀ կառավարության անդամներին ներկայացրեցին Հայ Եկեղեցու առջև ծառացած խնդիրներն ու մարտահրավերները, նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախատեսած փոփոխությունների նախապատրաստական ընթացքին: Հանդիպման ընթացքում խոսվեց նաև Եկեղեցի-պետություն հարաբերությունների շուրջ:

Պրն վարչապետը կարևորեց Հայ Եկեղեցու և նրա քրիստոնեական քարոզչության դերը համազգային խնդիրների լուծման գործում և նշեց, որ այդ գիտակցությամբ Արցախի կառավարությունը ձգտում է Եկեղեցու հետ համագործակցության ու փոխադարձ աջակցության: Որպես ասվածի հաստատում՝ վարչապետը նշեց, որ

արդեն երրորդ տարին է, ինչ Արցախի կառավարության անմիջական հովանավորությամբ հանրակրթական դպրոցներում դասավանդվող առարկաների թիվը համալրվել է «Կրոն»-ի առարկայով:

Վեհափառ Հայրապետն իր ուրախությունն ու գոհունակությունը հայտնեց կառավարության անդամներին, որոնք, նախանձախնդիր Հայ Առաքելական Եկեղեցու դերի բարձրացմանը, նպաստում են հոգևոր կյանքի զորացմանն ուղղված Եկեղեցու ջանքերին:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԽՆԱԾԱԽ, ՎԱՆՔ ԵՎ ԳԱՆՁԱՍԱՐ

Վեհափառ Հայրապետը իր Հովվապետական այցելությունը շարունակեց Մարտակերտի շրջանում:

Դեպի Գանձասար ձգվող ճանապարհին Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ Խնածախ գյուղի բնակիչների հետ: Բազմաթիվ բարեպաշտ խնածախցիներ հավաքվել էին գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում, որպեսզի Հայոց Հայրապետին դիմավորեն, իրենց աղոթքը բարձրացնեն առ Աստված և ստանան Նորին Սրբության օրհնությունը:

*«Անչափ ուրախ եմ, որ անդրանիկ այցն ենք կատարում Արցախ աշխարհ որպես Հայրապետ Հայոց և մեծ միխիթարություն ունենք՝ տեսնելով, որ հոգևոր կյանքը վերածննդության մեջ է Արցախ աշխարհում: Երեկ Մենք շրջեցինք բավականին գյուղեր, և պետք է ասեմ, որ դուք այն քիչ երանելիներից եք, որ ունի եկեղեցի, թեև տասնյակ տարիներ այդ եկեղեցին փակ է եղել ձեր առջև, բայց վստահ եմ, որ այն ապրում էր և գործում ձեր հոգում ներս: Եղիշե պատմիչը, գրելով Վարդանանց հերոսամարտի պատմությունը՝ արձանագրում է հետևյալ տողերը. «Հայրն մեր զԱստուածն գիտեմք, եւ մայրն՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին»: Իրապես, մեր ժողովրդի զավակունք անցյալի մեր պատմության ընթացքին ապրել են և առաջնորդվել Քրիստոսի Ավետարանի ճշմարիտ պատգամներով, իրենց կյանքը կերտել այդ պատվիրանների համաձայն, Քրիստոսի աստվածային օրենքների համաձայն, ապրել են խոնարհվելով Աստծո շնորհի, Աստծո սիրո առջև, և աստվածային լույսը, Ավետարանի ճշմարտության լույսը զորացել է մեր Սուրբ եկեղեցիների խորաններից՝ մեր ժողովրդի զավակաց հոգիներից ներս ու կյանք դարձել և արդյունք ու ապահովություն մեր ժողովրդի զավակների համար մեր պատմության ողջ ընթացքում:*

*Փառք և գոհություն ենք տալիս Աստծուն, որ ահա վերստին մայրը իր դռները բացել է ու պատրաստ է ընդունելու իր զավակներին կարոտով,*

*սիրով, այնպես, ինչպես կորուսյալ զավակին կընդուներ մայրն իր գրկում, իր թևերի մեջ»*,- իր օրհնության խոսքում ասաց Վեհափառ Հայրապետը:

Մեծագույն ոգևորությամբ էին Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցին սպասում նաև Գանձասարի ստորոտին փռված Վանքում: Ճանապարհը լի էր նաև չնախատեսված կանգառներով, որ թելադրում էին կատարել մայրուղի դուրս եկած բարեպաշտ գյուղացիների խմբերը՝ շրջակա Ծմակահող, Գառնաքար, Առաջաձոր գյուղերից:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ու ուրախությամբ ականատեսը եղավ նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով այս տարի սկսված «Հյուսիս-հարավ» կոչվող ավտոմայրուղու լայնածավալ շինարարությանը, որ ընդգրկում է նաև Ստեփանակերտ-Գանձասար ճանապարհահատվածը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շքախմբի ուղեկցությամբ այցելեց հռչակավոր Գանձասարի վանք՝ խոնարհվելու Արցախի երբեմնի Կաթողիկոսական Աթոռի Հայրապետների հիշատակի առջև: Հայ ժողովրդի համար նվիրական այս սրբատեղին, որ դարեր շարունակ եղել է հայոց հոգևոր կենտրոններից մեկը, այսօր վերադառնում է իր ամբողջական առաքելությանը: Գանձասարի եկեղեցուն կից սկսվել է դպրատան շինարարությունը, որի ավարտից հետո Հայ Առաքելական Եկեղեցին կունենա մի նոր հոգևոր դպրոց՝ իր երկու տասնյակ ապագա հոգևորականներով: Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Հրաշափառ»-ով մուտք գործեց պատմական տաճար և Ս. խորանի առջև ծնկաչոք գոհաբանական աղոթք և մաղթանք արտասանեց Հայաստանի և Արցախի զորացման ու շենացման համար: Այնուհետև արցախցիներին ուղղված իր օրհնության խոսքում Վեհափառ Հայրապետն ասաց.

*«Այս սուրբ տաճարի մեջ, սրբազան կամարների ներքո Հայրապետներն իրենց աղոթքն են առ Աստված բարձրացրել, մեր ժողովրդի զավակաց աղոթքները միախառնելով իրենց աղոթքին: Այսօր մենք եկել ենք խոնարհվելու մեր Հայրապետների շիրիմների առջև, խոնարհվելու Հայոց մեծաց առջև, որոնք որ պահել են հավատը հայոց և ամրորեն այն հաստատել մեր ժողովրդի զավակաց հոգիներում, ովքեր Սուրբ Հոգու առաջնորդությամբ և աստվածապարգև իմաստությամբ առաջնորդել են դեպի խաղաղ ափերը մեր կյանքի: Այսօր մենք մեր տկար ուժերով, մեր տկար անձով եկել ենք շարունակելու նրանց գործը, նրանց ընթացքը, հովվելու և առաջնորդելու մեր ժողովրդին: Մեր անձին չէ, որ ապավինած ենք, այլ Աստծո օգնականությանը, Աստծո զորությանը, մեր ժողովրդի հավատքի ամրությանը, մեր ժողովրդի նվիրումին իր Առաքելական Եկեղեցուն:*

*Աղոթք ենք առ Աստված բարձրացնում, որպեսզի Տերը միաբան սիրով պահի մեզ ամենքիս, որպեսզի մենք կարողանանք միշտ շեն ու պայծառ պահել մեր հավատքի օջախները, մեր սրբազան տաճարները, որոնց մեջ*

*կերտվել է հոգին հայկական, որոնց մեջ կերտվել է կամքը հայոց, որոնց մեջ նաև ուղենշվել է ընթացքը մեր ժողովրդի, որ առաջնորդում է մեզ դեպի փրկություն, դեպի մեր հայրերի Սուրբ Աստված»:*

Վեհափառ Հայրապետը Գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանի ուղեկցությամբ ծանոթացավ նորակառույց միաբանական շենքին և կառուցվող դպրատան շինարարության ընթացքին: Կեսօրին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի այցելության, միաբանական սեղանատանը տեղի ունեցավ սիրո մտերմիկ ճաշկերույթ:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը վերադարձավ Ստեփանակերտ:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՇՆՈՐՀՎԵՑ ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԿՈՉՈՒՄ

Սեպտեմբերի 28-ին Վեհափառ Հայրապետը Հովվապետական իր այցը Արցախի թեմ շարունակեց Ստեփանակերտում: Առաջին հանդիպումը Ստեփանակերտում Արցախի պետական համալսարանի ուսանողների և դասախոսների հետ էր, որոնք Վեհափառ Հայրապետին դիմավորեցին «Հրաշափառ»-ի երգեցողությամբ: Համալսարանի առաջին հարկում արցախյան հերոսամարտում զոհված ավելի քան 70 համալսարանականների հուշատախտակի առջև Վեհափառ Հայրապետը և իրեն ուղեկից հոգևորականաց դասը հոգեհանգստյան աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ բոլոր զոհվածների հիշատակին:

Ողջունելով Վեհափառ Հայրապետին՝ ռեկտոր Կարլեն Ադամյանը նշեց, որ վերջին տասը տարիներին հոգևոր վերազարթոնք ապրող Արցախի ժողովրդին Հայոց Կաթողիկոսի այցը մի նոր լիցք է հաղորդում: Գիտխորհրդի նախորդ օրվա որոշմամբ պրն Ադամյանը Վեհափառ Հայրապետին հանձնեց համալսարանի պատվավոր դոկտորի վկայական և կրթօջախի 30-ամյակին նվիրված հուշամեդալ:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց պարգևի համար՝ ընդունելով այն որպես մի նոր հանձնարարական ու պարտավորություն: Ապա Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց ուսանողներին՝ պատգամելով նրանց ուսանել նույն հերոսությամբ, որով իր պայքարն է մղում քաջարի Արցախը: Վեհափառ Հայրապետն ուրախությամբ նշեց, որ Արցախում տեսնում է ամուր ոգի, զուսպ և արժանապատիվ կեցվածք, որ, անշուշտ, արդյունք է արցախցու ներքին հոգևոր դաստիարակության: «*Եկանք ձեզ զորակցելու, վերադառնում ենք ինքներս առավել զորացնելով*»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Վեհափառ Հայրապետի հաջորդ հանդիպումը Ստեփանակերտի հավատացյալ ժողովրդի հետ էր: Քաղաքի եկեղեցին ավերվել է 30-ական թվականներին, և բարեպաշտ ստեփանակերտցիներն արդեն իններորդ տարին է, ինչ իրենց հոգևոր պա-

խանջները բավարարում են թատրոնի շենքում տեղակայված Ս. Աստվածածին եկեղեցում: Վեհափառ Հայրապետը հավատավոր ստեփանակերտցիների հետ աղոթք բարձրացրեց առ Աստված՝ ուրախությամբ հաստատելով, որ այդ անպաճույճ սրահում տեսնում է քրիստոնեական ոգի և բարեպաշտական կյանք: Իր օրհնությունը տալով ներկաներին՝ Վեհափառ Հայրապետը պատգամեց նրանց մշտապես ամուր ու անսասան լինել իրենց հավատքում:

*«Մեր նախնյաց հավատքը, սիրելիներ, Աստծո բարեգթությունը և ողորմածությունն է բաժին հանել այսօր մեզ. այս ողորմածությամբ, աստվածային այս ուժով մենք կարողացանք հաղթանակներ արձանագրել մեր թշնամյաց դեմ՝ պաշտպանելով հող հայրենին, պաշտպանելով մեր հավատքը, մեր սրբությունները, սակայն այդ բոլորը վարձք էր, վարձք էր այն ոգու, այն հավատքի, որ տածել են մեր նախնիք մեր Հայր Աստծո նկատմամբ, որ ունեցել են մեր նախնիք մեր Երկնավոր Տիրոջ հանդեպ: Աստված մեղք չհամարեց մեզ այն անհավատությունը, որ այսօր շատ ու շատ հայորդիների հոգում ներս բնակություն է հաստատել, որովհետև յոթանասուն տարիներ բռնատիրության պայմաններում, աստվածմերժության վարչակարգի տակ մեր ժողովրդի զավակները կտրվեցին իրենց հայրերի սրբազան ավանդներից, իրենց հայրերի սրբազան հավատքից և զրկվեցին հոգևոր այն կրթությունից, աստվածպաշտական բարեպաշտությունից, որ ունեին մեր նախնիք և որ դարերի ընթացքին մշտապես փոխանցվում է մեզ՝ Աստծո երկյուղը կրթելով մեր հոգիներից ներս: Այսօր, սակայն, Աստծո այդ ողորմածությունը մենք է, որ մեր հավատքով, մեր աղոթքով պետք է երկնքից իջեցնենք այս աշխարհի վրա, որովհետև Աստված տվեց մեզ ազատությունը ապրելու և ընտրելու բարու և չարի միջև, ընտրելու արդարի և սխալի, անճշտի, անարդարի միջև. մեզ է մնում մեր ընտրությամբ ապահովելու Աստծո ողորմածությունը, ապահովելու Աստծո սերը և հույսը: Կկարողանա՞նք կրթել մեր զավակաց հոգիներից ներս աղոթասաց հոգի, կկարողանա՞նք դաստիարակել մեր մեջ աստվածպաշտության խոնարհ ապրում և զգացում. դրանից և կախված կլինի, թե որքան ողորմածություն կիջնի Հայոց աշխարհի վրա երկնքից»*,- իր խոսքում ասաց Վեհափառ Հայրապետը:

Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության խնդրանքով, Վեհափառ Հայրապետը եղավ նաև նրանց հյուրը, ծանոթացավ միության խնդիրներին՝ հավաստելով, որ կարողության սահմաններում կփորձի առավելագույնս օժանդակել նրանց:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱԳ ԵՎ ՊՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը Վեհափառ Հայրապետը հանդիպեց Լեռնային Ղարաբաղի արտաքին գործերի նախարար տկն Նաիրա Մելքումյանի հետ:

Տիկին Մելքումյանը նշեց, որ ինքնորոշված Արցախը փորձում է իր տեղը գտնել ազատ ու անկախ երկրների շարքում: Նա համոզմունք հայտնեց, որ ամենատարբեր երկրների ներկայացուցիչների այցերը Արցախ վկայությունն են այս իրողության, որ Արցախը գտնվում է անկախության ճանաչման ճանապարհին:

*«Հավատում ենք, որ Աստծո ողորմածությամբ գեղեցիկ արշալույս է բացվելու Արցախի վրա՝ որպես հատուցում բոլոր այն զոհողությունների, որ հանձն առավ վերջին այս տասը տարիների ընթացքում»*,- ասաց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը վստահեցրեց, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, ինչպես միշտ, սատար է լինելու Արցախին՝ իր նպատակներին հասնելու գործում:

Հետմիջօրեին Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ ԼՂՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի և ապա սպայական անձնակազմի հետ, այցելեց նախարարության ենթակայության տակ գտնվող զորամասեր: Պրն Օհանյանը նշեց, որ զինվորականները գիտակցում են հոգևորականների դերը Հայոց բանակում, ովքեր ոգի և կորով էին հաղորդում զինվորին արցախյան հերոսամարտում: Այսօր խաղաղություն է հաստատված, և անհրաժեշտ է նույն ոգին հայրենիքի սահմանների ամուր պաշտպանության համար:

*«Հայոց Հայրապետիս համար մխիթարություն է գտնվել մարտական հաջողություն արձանագրած բանակում»*,- սպայական անձնակազմի հետ հանդիպման ընթացքում ասաց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով նրանց միաբանություն, առանց որի չկա հաղթանակ:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ հաղթանակած բանակը կյանքի նոր փուլ է մտնում, որտեղ կարևոր է հոգևոր-բարոյական խնդիրների լուծումը: Ոգին է անպարտելի, և այդ գիտակցությամբ Հայ Եկեղեցին ձեռնամուխ է եղել հոգևոր դաստիարակությանը բանակում՝ որպես մեկն իր գլխավոր առաքելություններից:

*«Մեր հաղթանակները միանշանակորեն արդյունք էին ազգի միաբանության, մեր ազգային միաբանության: Մտովի եթե անդրադառնանք այդ օրերին, ուրախությամբ կհաստատենք, որ չկար մի հայորդի, որը գաղափարական, քաղաքական, այլևայլ շահերից առաջնորդված այլ կամային դրսևորում ունենար: Մոռացել էինք ամեն տարաձայնություն, համերաշխ էինք ազգով, միակամ էինք, ընդառաջող, կամեցող, զիջող, ներող, մեկս մյուսին զորավիգ, մեկս մյուսին թև ու թիկունք, և դա իր բնական արտահայտությունը գտավ մեր պայքարում, մեր գոյամարտում, բերեց մեզ հաղթանակներ, Հայոց բանակին՝ փառք, ազգին՝ փառք, և երկրին՝ խաղաղություն:*

*Իմ աղոթքն ու մաղթանքն է, որ ոչ մի կերպով չխաթարվի մեր ժողովրդի միաբանությունը, որ Աստծո օրհնության ներքո մենք շարունակենք մնալ հզոր, ունենալով ազգային այս միասնականության ոգին*,- ասաց Վեհափառ Հայրապետը:

*Ես իմ աղոթքն եմ բարձրացնում, որպեսզի Տիրոջ օրհնությունը լինի վահան ամրության, որին թշնամյաց նետերը բախվելով փշրվեն, ջարդվեն, չկարողանան խոցել, անխոցելի լինի ձեր անձը, և ձեր հոգու առջև պարտվի թշնամյաց զորությունը: Մեր մաղթանքն է, աղոթքն է, որ երբեք հայ զինվորը ստիպված չլինի զենքով պաշտպանելու Հայոց հողը և մեր ժողովրդի պատիվը, որ հայ զինվորը պահապանը լինի մեր աշխարհի, որպեսզի մեր ժողովրդի զավակունք խաղաղության մեջ իրենց ի վերուստ վերապահված ստեղծագործական կյանքով ապրեն, շենացնեն երկիրը՝ որպես փառաբանություն մեր երկնավոր Տիրոջ»*,- խոսքի ավարտին մաղթեց Վեհափառ Հայրապետը:

Այցելելով զորամաս՝ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը տվեց զինվորներին: Վեհափառ Հայրապետը եղավ նաև ազգային հերոս Վազգեն Սարգսյանի անվան զորամասում, ծաղկեպսակ դրեց նրա հուշարձանին:

Նույն օրը Նորին Սրբությունն այցելեց նաև Արցախի պատմաերկրագիտական թանգարան: Զոհված ազատամարտիկների «Սոսե» մանկապարտեզում նա իր օրհնությունը փվեց փոքրիկներին:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ 29

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱՅՑԵԼԵՑ ՇՈՒՇԻԻ ՂԱԶԱՆՉԵՑՈՑ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Վեհափառ Հայրապետի վերջին հանգրվանը Արցախում պատմական Շուշին էր, ուր մեկնեց ԼՂՀ ԱԺ նախագահ Օլեգ Եսայանի, վարդապետ Անուշավան Դանիելյանի և եկեղեցական շքախմբի ուղեկցությամբ:

Շուշիում Վեհափառ Հայրապետը կանգ առավ ազգային հերոս Վազգեն Սարգսյանի հուշարձանի մոտ և իր հարգանքի տուրքը մատուցեց նրա հիշատակին՝ կատարելով հոգեհանգստյան արարողություն:

Նշանավոր Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում, որ լի էր հավատացյալների բազմությամբ, Հայոց Հայրապետը աղոթք բարձրացրեց առ Աստված՝ Հայաստանի և Արցախի անսասանության և հավերժության համար: Նորին Սրբությունը, իր հայրապետական օրհնությունը տալով ժողովրդին, պատգամեց նրանց ապրել աղոթքով ու Քրիստոսի պատվիրաններով, անսասան պահել թանկ ծնոք բերված

Արցախի Հանրապետությունը: Բարեշինության ու առաջընթացի մի նոր ուղի բա-ցավ Վեհափառ Հայրապետը Արցախում, որի համար իր գնահատանքը ուղղեց երկրի իշխանավորներին ու եկեղեցականներին:

*«Գոհություն և փառք ենք վերառաքում առ Աստված այս պահին ցնծությամբ համակված մեր հոգուց: Գոհություն և փառք այն ողորմածության և շնորհի համար, որ Աստված արժանացրեց Մեզ՝ տասնյակ տարիներ իր դռները հայ հավատացյալի առջև փակ պահած Շուշիի Ղազանչեցոց այս հոյակերտ, այս պայծառաշուք տաճարի կամարների ներքո աղոթք բարձրացնել առ Աստված՝ իբրև գլուխ Հայաստանյայց Եկեղեցվո, իբրև Հովվապետ հայոց: Գոհություն և փառք ենք վերառաքում առ Աստված, սիրելի բարեպաշտ հայորդիք, որ վերանորոգված, բարեկարգված հավատի այս օջախում մենք առ Աստված աղոթք բարձրացրեցինք՝ անսասանության և հավերժության համար Հայաստանի և Արցախի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, և արժանավոր ու աստվածահաճո մեր ժողովրդի զավակաց համար: Հինգ օր է, որ մենք շրջում ենք Արցախ աշխարհով: Հինգ օր է, որ մենք աղոթում ենք մեր ժողովրդի զավակների հետ, այն ժողովրդի, որ ութսուն և ավելի տարիներ առիթ չի ունեցել աղոթքի կանգնելու իր սրբազան տաճարների մեջ, առիթ չի ունեցել իր աղոթքը միախառնելու իր հոգևոր առաջնորդների և իր Հայրապետի՝ առ Աստված բարձրացող աղերսանքին ու խնդրանքին: Եվ ամենուր, ուր որ եղանք, տեսանք հոգու խնդություն, տեսանք բերկրանք ու ցնծություն մեր ժողովրդի զավակաց հոգիներում: Եվ թունդ առավ մեր սիրտը, ու նոր ուժգնությամբ, նոր ջերմեռանդությամբ մեր աղոթքը խունկի քուլաների հետ մեր սրտից բարձրացավ առ Աստված նոր անուշահոտ բույրով: Եվ անսասան էր մեր հավատքը, և հայորդյաց շուրթերից առ Աստված բարձրացող աղոթքը ընդունելի էր որպես անուշահոտ զոհ Աստուծո առջև:*

*Սիրելի բարեպաշտ հայորդիք, սիրելի արցախցիներ, այս օրերին մենք նաև ուրախությամբ ու ցնծությամբ հաստատեցինք մեկ այլ իրողություն, որ արցախցու ոգին ոչ միայն անպարտելի է ազատության և անկախության նվիրական պայքարում ու մարտում, այլև անընկճելի է բոլոր տեսակի դժվարությունից առջև, բոլոր տեսակի նեղությունների մեջ, համբերող է և իր հույսը առ Աստված է, հավատարմությամբ նայում է իր կյանքի առաջիկա օրերին: Այսօր շնորհիվ ձեզ և մեր ժողովրդի զավակաց անհուն զոհաբերության արյամբ ու կյանքով ձեռք ենք բերել անկախ հանրապետությունը Արցախ աշխարհի: Եվ նոր գիտակցությամբ լցված ենք հայրենաշեն քայլերով անսասան պահելու թանկ գնով ձեռք բերված այս հանրապետությունը:*

*Առաքելությունն այս պարտավորեր է մեզ համար. առաքելությունն այս սուրբ ու նվիրական է պատմությամբ զոհված մեր զավակների հիշատակի և մեր գալիքի առջև: Յուրաքանչյուրս առանձնաբար և բոլորս միասնաբար ունենք մեր բաժին աշխատանքը հանրապետության շենացման, հանրապետության զորացման և մեր ժողովրդի բարօր, երջանիկ կյանքի կերտման գործում: Եթե արդարությունը չկայ հիմք մեր կյանքի նորանկախ այս հանրապետության մեջ, զուր պիտի լինեն ու ի չիք կդառնան բոլոր տեսակի ձեռքբերումները: Զոհողությունը, որը մեր ժողովուրդը տանում է արժանապատիվ վեհությամբ, պիտի ծխացող, մխացող, անհուն, անդադրում ցավ պատճառող, չսպիացող վերք լինի մեր ժողովրդի զավակաց հոգիներում: Որպես ժողովուրդ հերոսական էությամբ ու նկարագրով, անկախությունը կերտած ժողովուրդ՝ այսօր նվիրական պարտք ունենք, ինչպես առաջի, մեր քրտինքով, մեր անվերապահ նվիրումով, առավել հանձնառություններով ամրացնել հիմերը անկախ մեր հանրապետության:*

*Այս նվիրական առաքելության մեջ, սիրելի բարեպաշտ հայորդիք, առանձնակի դերակատարություն է վերապահված հատկապես ձեզ, որպես Քրիստոսի հավատացյալների, որպես Աստծո երկյուղը ունեցող ժողովրդի, որովհետև Քրիստոս ձեզ կոչեց և պատվիրեց լինել աղը երկրի և լինել լույսը աշխարհի: Այսպիսի պատիվ, այսպիսի առաքելություն է վերապահված ձեզ որպես քրիստոնյա, Աստծո հավատավոր ժողովուրդ: Աղը համ է տալիս կերակուրին: Քրիստոսի հավատով զինված, Քրիստոսի պատվիրաններով ու պատգամներով ապրող, Աստծո առջև հանապազօր աղոթքի կանգնած հայորդիք բարեպաշտ պարտ են համ տալ երկրավոր մեր կյանքին՝ իրենց բարի օրինակով, իրենց վարքով, իրենց կենցաղով, իրենց առաքինությամբ, իրենց աշխատասիրությամբ, իրենց հանձնառու և զոհաբերվող ոգով:*

*Մենք շնորհը ունենք, սիրելիներ, նաև ըստ Ավետարանի խոսքի, կոչվելու լույսը աշխարհի: Որպեսզի մենք կարողանանք մեր կյանքը լուսավորել, պարտ է նախ, որ մենք ունենանք մեր հոգիներից ներս ճրագը՝ լուսավորող մեր մարմիններից, մեր էությունից ներս: Եթե չունենք, եթե խավար ենք, ինչպե՞ս կարող ենք լուսավորել մեր շրջապատը, ինչպե՞ս կարող ենք առաջնորդը լինել մեր եղբայրների ու քույրերի, ինչպե՞ս կարող ենք օրինակ դառնալ նրանց, ովքեր տակավին իրենց հայացքը չեն դարձրել մեր Փրկչին, մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին: Լույսը անմար, մշտավառ լույսը աստվածային մեր հոգիներում ունենալու համար պետք է որ մենք ապրենք Ավետարանով՝ այն կյանք դարձրած, և ոչ թե վարդապետություն, ոչ թե գաղափարախոսություն, ոչ թե գեղեցիկ ընթերցանության գիրք: Յուրաքանչյուր խոսքը, յուրաքանչյուր պատգամն ու պատվիրանը պետք է կարողանանք*

հավատով, գործերով, որպես վկայություն մեզ շրջապատող հանրությանը ներկայացնել: Միայն այս ճանապարհով, միայն աղոթքով և հավատո գործերով կկարողանանք աստվածային յույսը մեր մեջ կրել և այդ յույսը մեր անձերից ճառագել և լուսավորել մեզ շրջապատող աշխարհը և մեզ շրջապատող մարդկանց հոգիները: Հիշում ենք պայծառակերպության պատումը, թե ինչպես երբ Քրիստոս աղոթքի էր կանգնած, հանկարծ կերպարանափոխվում է, պայծառակերպվում է. ամբողջությամբ ճերմակում են նրա զգեստները, և լույս է ճառագում նրանից, և փոխվում է նրա դեմքը, և առաքյալները, որ կանգնած էին այդ պահերի առջև, զարհուրած ընկնում են գետնին, ամպը գալիս-ծածկում է նրանց հայացքից հրաշալիքն այդ, պայծառակերպությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի: Եվ մինչ պատկերը հրաշակերտ կծածկվեր հայացքներից առաքյալների, Պետրոս առաքյալն ասում է. «Տեր, ցանկալի է մեզ այստեղ լինել և տեսնել այս հրաշագործ, այս հրաշափառ երևույթը»: Այդպես, սիրելիներ, յուրաքանչյուր հավատացյալի պարագային, որ անկեղծ հավատքով կանգնում է աղոթքի Տիրոջ առջև, պայծառակերպվում է նրա անձը: Բազմիցս, հավանաբար, ականատես ենք եղել նման երևույթի, երբ ինքնամոռաց աղոթքի կանգնած անձից չենք կարողացել հեռացնել մեր հայացքը, որովհետև հրաշագեղ է եղել այդ անձը, պայծառատեսիլ, և ունեցել ենք այն զգացողությունը, որ կարծես լույս է շողարձակում աղոթող հավատացյալ այդ անձի էությունից: Ուրեմն, սիրելի բարեպաշտ հայորդիք, մեր աղոթասաց ոգով, մեր հավատավոր գործերով տանք օրինակը մեր ժողովրդի զավակներին գեղեցիկ, աստվածահաճո կյանքի: Դառնանք հավատի գործերով լույսը մեր կյանքի, որպեսզի այն աննվազ լինի Հայոց աշխարհից, որպեսզի մեր աղոթքն ու հավատքի գործերը լինեն մշտամնա Հայոց աշխարհում:

Մենք, սիրելի բարեպաշտ հայորդիք, այսօր վերադառնում ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածին, մեր աղոթքը և մեր օրհնությունը թողնելով ձեզ հետ՝ որպես ուղեկիցներ ձեր կյանքի, որպեսզի Տերը ձեզ պահի անփորձանք ու անվտանգ, խաղաղ՝ երկնքի ներքո Արցախի աշխարհի: Հրաժեշտի այս պահին մենք ուզում ենք մեր գնահատանքի և շնորհակալության խոսքը հղել Հանրապետության իշխանավորներին՝ աղոթքով հանդերձ նրանց կենաց արևշատության և գործոց հաջողության համար: Մեր գնահատանքը և շնորհակալությունը Հանրապետության նախագահ տիար Արկադի Ղուկասյանին, որի հետ քանիցս առիթ ունեցանք հանդիպելու և մեր մտածումներն ու զգացումները կիսելու: Մեր գնահատանքը ԱԺ նախագահ տիար Օլեգ Եսայանին և վարչապետ Անուշավան Դանիելյանին, բոլոր նախարարներին, իշխանության բոլոր պաշտոնյաներին, ովքեր տքնում են Արցախի մեր

*ազգաբնակչության բարօր կյանքի համար և հոգ տանում նրանց լավ օրվա համար: Մենք տեսանք այս այցելության ընթացքին, որ Արցախում կյանքը նոր փուլ է մտել. առաջընթացի, բարեշինության, երջանկաբեր կյանքի մի նոր ուղի և մի նոր ընթացք՝ շնորհիվ իշխանության, շնորհիվ բարեպաշտ և հավատավոր ժողովրդի մեր զավակաց աշխատանքի, տքնության և համբերությունների: Մենք մեր գնահատանքն ենք ուզում բերել եկեղեցականաց մեր դասին, որոնք արցախյան գոյամարտի առաջին իսկ պահից մեր ժողովրդի հետ, մեր զինվորների հետ կողք-կողքի մաքառել են հանուն ազատության ու անկախության, նրանց հավատով և հույսով խանդավառել և լավատեսությամբ զինել դեպի նոր օրը մեր կյանքի, դեպի անկախության, դեպի ազատ կյանքի այս աստվածապարգև պահը, որ շնորհված է մեզ:*

*Մեր գնահատանքը ի մասնավորի ուզում ենք բերել Արցախի թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանին, որ գլուխը անցավ եկեղեցական սպասավորների և հավատավոր ժողովրդի: Որ կարողացավ կարճ ժամանակահատվածում բարեշեն դարձնել մի շարք եկեղեցիներ, համախմբել այս եկեղեցու կամարների տակ մեր ժողովրդի զավակաց ի մասնավորի մատաղ սերնդին, որի շուրթերը Տերունական աղոթքն են առ Աստված հնչեցնում, որոնց մաքրամաքուր աղոթքով երկնքից բարիքներ են իջնում Արցախի օրհնյալ հողի վրա: Մենք վստահ ենք, որ Աստծո հովանավոր աջի ներքո առավել զորացած ու զորեղացած, այս կարճ ժամանակում արձանագրված հաջողություններով պիտի խանդավառությամբ լցվեն մեր եկեղեցականները՝ առաջնորդ սրբազան հոր գլխավորությամբ՝ բարեկարգելու, վերանորոգելու խոնարհված մեր բոլոր եկեղեցիներն ու վանքերը, Քրիստոսի Ավետարանի խոսքը քարոզելու և կյանք դարձնելու մեր հավատավոր ժողովրդի համար: Մեր աղոթքն է, որ Տերը զորավիգ լինի, Իր խաչը զորեղ դարձնի մեր եկեղեցականների ձեռքերում, որ Իր խաչը ծաղկյալ խաչ լինի նրանց ձեռքերում և հրաշագործի մեր ժողովրդի կյանքում»:*

Նորին Սրբությունը մասնավոր գնահատանքի խոսք ուղղեց Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանին, որի առաջնորդությամբ կարճ ժամանակահատվածում վերանորոգվել ու վերասրբագործվել են շատ եկեղեցիներ՝ իրենց կամարների տակ համախմբելով հավատավոր ժողովրդին: Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ Աստծո հովանավոր Աջի ներքո բարեկարգվելու ու վերանորոգվելու են խոնարհված մյուս բոլոր եկեղեցիներն ու վանքերը: Ի հիշատակ իր անդրանիկ այցելության՝ Նորին Սրբությունը Ս. Ամենափրկիչ եկեղեցուն բուրվառ նվիրեց:

Հրաժեշտից առաջ Վեհափառ Հայրապետը ներկա եղավ առաջնորդարանի հովանավորությամբ գործող Եկեղեցասեր տրենյամայրաձնի մանկական միության հանդեսին: Նորին Սրբությունը այցելեց նաև Շուշիի նշանավոր բերդ, շրջեց բանտախցերում ու զրույցներ ունեցավ ձերբակալվածների հետ:

Կեսօրին Առաջնորդարանի սեղանատանը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի այցելության, տրվեց ճաշ, որին մասնակցում էին ԼՂՀ ԱԺ նախագահը, վարչապետը, Թեմական խորհրդի անդամներ և այլ պաշտոնյաներ: Ճաշկերույթի ավարտին Վեհափառ Հայրապետը շնորհակալության և գնահատանքի խոսքեր ասաց թեմակալ առաջնորդին, իշխանությանց ներկայացուցիչներին՝ Արցախ աշխարհի այցելության ընթացքում իր նկատմամբ ցուցաբերած այս խիստ գնահատելի վերաբերմունքի համար:

Սեպտեմբերի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ավարտելով Հովվապետական այցը Արցախի թեմ, վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ՀԱԼԼԵՈՒՄ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Սիրելի ներկաներ.

Հոգու անսահման բերկրանքով ու սիրով, որպես Ամենայն Հայոց Հայրապետ, ողջունում ենք Գերմանիայի ավանդաշատ հողում Կիլիկյան Հայաստանի մշակույթին նվիրված ցուցահանդեսի բացումը, որ ժողովուրդների փոխըմբռնման ու բարի կամեցողության փոնահանդեսի իր խորհրդով այսօր միաբանել է մեր հոգիները. «Զի՜ բարի, կամ զի՜ վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին»:

Ուրախ ենք անչափ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի հետ Մեր օրհնությունը հղելու բազմադարյան հայ մշակույթի փառապանծ մի հատվածի ներկայացմանը կոչված շնորհակալ այս նախաձեռնության բացման արարողությանը և հանուն աշխարհասփյուռ մեր ժողովրդի՝ գնահատանքի Մեր խոսքն ուղղելու ցուցահանդեսի կազմակերպիչներին և հովանավորներին:

Կիլիկյան Հայաստանի մշակույթը ներկայացնող գեղեցիկ այս ցուցահանդեսը կազմված է արվեստի յուրօրինակ նմուշներից, որոնք փոխադրում են մեզ շուրջ 1000-ամյա վաղեմության ժամանակներ, երբ Միջերկրածովյան հարավ-արևելյան ափերին ծնունդ առավ հայոց մի նոր պետականություն և 300-ամյա գոյության ընթացքով պայմանավորեց քրիստոնեաբույր հինավուրց հայ մշակույթի նոր զարթոնքը՝ որպես նրա «Արծաթե դար»: Կիլիկյան հայկական արվեստը դարձավ հոգևոր-մշակութային այն միջնասահմանը, ուր նոր դրսևորումով միախառնվեցին արևելաքրիստոնեական ավանդույթը և արևմտաքրիստոնեական արվեստի ոճն ու կատարողական վարպետությունը՝ մարմին փալով հայ հոգու ու մտքի սլացքին:

Հուզիչ մի խորհուրդ ունի Կիլիկյան արվեստին նվիրված ցուցահանդեսի բացումը` այսօր այստեղ` Գերմանիայի հնագույն հողում: 890 տարի առաջ Կիլիկիայի հայկական իշխանությունը, որն ութ տարի անց թագավորություն պիտի հռչակվեր, ընդունեց, ապաստան տվեց և օգնեց դեպի Պաղեստին շարժվող հոգնատանջ խաչակիր ասպետներին, որոնց առաջնորդում էր Գերմանիայի Ֆրեդերիկոս Շիկամորուս կայսրը: 1190 թ. հայոց իշխան Լևոն Մեծագործի դեսպանները հանդիպեցին կայսեր հետ, որը խոստացավ այս` ավելի քան բարեպատեհ օգնության դիմաց ճանաչել Կիլիկիայի հայկական թագավորությունը և արքայական թագ ուղարկել Լևոն իշխանին: Երկու օր անց կայսրը խեղդվեց Սելևկիա լեռնային գետն անցնելիս, սակայն նրա խոստումը կատարեց որդին, Գերմանիայի հաջորդ` Հենրիկոս Զ կայսրը: Այս դեպքերի, խաչակրաց երրորդ արշավանքի մասին արժեքավոր սկզբնաղբյուրներ են ժամանակի հայ պատմիչների վկայությունները, ձեռագրերի հիշատակարանները և գրությունները Ներսես Լամբրոնացու, որ ժամանակակիցների, այդ թվում նաև արևմտյան հեղինակների կողմից հռչակվել է որպես երկրորդ Պողոս առաքյալ:

Սիրելիներ.

Ակամայից հիշում ենք Սուրբ Էջմիածնի նվիրյալ միաբան և Մեծի Տանն Կիլիկիո շնորհազարդ Կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանի խոսքերը. «Եթե կորցրել ենք նյութական Կիլիկիան, եթե մեր ձեռքը չէ տեր դառնալ կրկին մեր հայրենիքին, կորած չէ, և մեր ձեռքին են Հոգևոր Կիլիկիո վերակենդանության և բարգավաճման հնարավորությունները»:

Ցուցահանդեսը շոշափելիորեն ներկայացնում է հանրահայտ այն իրողությունը, որ մշակույթը արտացոլում է իրեն արարող ժողովրդի անցած պատմական ուղին և կիսում նրան բաժին ընկած ճակատագիրը, որ առավել բացահայտ իր դրսևորումն է գտել հայ ժողովրդի պարագայում:

1915 թ. ողջ Արևմտահայաստանով և Թուրքիայի հայաշատ վայրերով անցած Մեծ եղեռնի խորշակը, դրան նախորդած և հատկապես 20-րդ լուսավորյալ կոչված դարի 20-ականներին Կիլիկիայում կազմակերպված ջարդերը, ոչնչացնելով և տեղահան անելով իր պատմական Հայրենիքում ապրող ու արարող, 2000-ամյա քրիստոնյայի իր աղոթքը առ Աստված վերառաքող մեր ժողովրդին, ողջ աշխարհով մեկ սփռեց ու ցրեց նաև նրա բազմադարյա մշակույթի հրաշքով փրկված բեկորները` կիրառական արվեստի նմուշներից մինչև համաշխարհային քաղաքակրթության գանձերը համալրած ռոսլինյան ձեռագիր մատյանները:

Այդ բեկորների մի զգալի մասը հայ գաղթականության ուժասպառ քարավանները հասցրեցին Արարատյան աշխարհ, իսկ մնացյալը երկար ճանապարհներով, դարձյալ «ընդ հուր և ընդ ասր» անցնելով, հանգրվանեց տարբեր երկրների թանգարաններում և մասնավոր հավաքածուներում:

Այսօր Հալլե-Վիտտենբերգում բացվող այս ցուցահանդեսը կազմված է փրկված այդ բեկորներից, որոնք ներկայացնում են Հայ Եկեղեցու և թագավորության Կիլիկյան փառքի շրջանը: Արդարև, այս ցուցանմուշները լուսավոր մի շողն են Կիլիկիո հոգևոր կենդանության, որի առջև անզոր է անցնող ժամանակը և անկարող՝ արյունոտ յաթաղանը: Հոգևոր Կիլիկիո հավերժության վկայություններից է նաև այս ցուցահանդեսը, որ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի նախօրեին արժանի ընծան է Հայ Եկեղեցուն:

Համայն հայության Սրբություն Սրբոց լուսապատկեր ու լուսակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որպես Հայրապետ Ամենայն Հայոց, Մեր սերը, գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Կիլիկյան հայոց մշակույթին նվիրված այս ցուցահանդեսի կազմակերպիչներին, մշակութասեր գերման ժողովրդին և բոլոր այցելուներին: Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Տիրոջ օրհնությամբ ցուցահանդեսը ծառայի իր վսեմ նպատակին՝ մշակույթի համընդհանուր լեզվով ժողովուրդների հավերժ փոխճանաչման ու համագործակցությանը:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»:

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

2000 թ. սեպտեմբեր 2

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ՀԱԼԼԵՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆ - 2000» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

«Հայաստան - 2000» գիտաժողովի հարգարժան մասնակիցներ,

Քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն ընդունման 1700-ամյա հոբելյանին նվիրված ներկայացուցչական այս գիտաժողովի հրավիրումը բարեպաշտ Գերմանիայի աստվածաբանական և գիտական նշանավոր կենտրոն, սալանդաշտ Հալլե-Վիտտենբերգում մեծապես գնահատելի է Մեզ համար՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, և բերկրանքով է լցնում Մեր հոգին: Ջերմորեն ողջունում ենք Ձեզ գիտաժողովի բացման հանդիսավոր առիթով և համայն հայոց Սրբազան Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սիրով բերում Հայրապետական Մեր օրհնությունը՝ հայցելով ու մաղթանքով առ Աստված, որ հաջողությամբ պսակվի գիտաժողովի աշխատանքներին՝ հանուն ժողովուրդների փոխադարձ ճանաչողության, սիրո ու համագործակցության:

Հայաստանն ու հայ ժողովուրդը հարուստ պատմությամբ ու մշակույթով, այլ ժողովուրդների հետ հնագույն առնչություններով, որ բացահայտում են մարդկության պատմության վաղնջական ժամանակները, հաճախ են գտնվել գիտական հետաքրքրության շրջագծում: Այսօր՝ երկու հազարամյակների խորհրդավոր սահմանագծին գումարվող մեծավայելուչ այս միջազգային գիտաժողովին խորհրդանշական և խորիմաստ անվանում է տրված՝ «Հայաստան - 2000»: Արդարև, մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի Հայտնությամբ թվագրվող վերջին երկու հազարամյակը և հատկապես նրա 17 դարերը հայ ժողովրդի կյանքում քրիստոնեական ճշմարիտ վկայություն եղան հայ մարտիրոսագրությամբ, «իւրն զգօն ի մօրթոյ» կերտված մեր ժողովրդի քրիստոնեական նկարագրով ու դիմագծով, քրիստոնեաշունչ հայ մշակույթով, քրիստոնեական հավատքին հավատարմությամբ ապրված բազմադարյան հոսագրությամբ:

Անկախ իր պետականությունը վերստին հաստատած մեր ժողովուրդը ոչ միայն գնահատողն ու պահպանողն է մեր նախնյաց հարուստ ժառանգության, այլև ազատության պայմաններում, հոգևոր վերարթնությամբ համակված՝ նոր ավյունով շարունակողն ու զարգացնողն է իր ավանդույթների: Կարծում ենք, այս բերումով է, որ գիտաժողովի կազմակերպիչներն այն անվանել են «Հայաստան-2000»: Հայ-

նախոծ և նպատակային մի մոտեցում. որն իր արտահայտությունն է գտնել նաև գիտաժողովի հայտագրում. ուր ներառված են ինչպես հայագիտությանը հուզող ավանդական թեմաներ. այնպես և արդի ազգային-մշակութային և հոգևոր կյանքին վերաբերող հարցեր, որոնք այժմեական են աշխարհի բոլոր ժողովուրդների համար:

Մերօրյա ընդհանրական հիմնախնդիրներից է համաքրիստոնեական և համամարդկային չափանիշներին խարսխված հասարակական համակեցության արժևորումը, ամրապնդումն ու պահպանումը՝ որպես երաշխիք խաղաղության. փոխհասկացողության ու բարի կամեցողության, որպես երաշխիք հավատով, հույսով ու սիրով իմաստավորված կյանքի երջանկության:

Աշխարհը ներառած համընդհանրացման (գլոբալիզացիա) ներկա ընթացքը չպետք է համահարթեցնի մշակույթները, նրանց բնորոշ տարբերակիչ հատկանիշները, այլ ճանաչելի դարձնելով միմյանց՝ ծառայեցնի ընդհանուր առաջընթացին. ստեղծարար կյանքին, բարու հաղթանակին: Այս խնդիրը կրկնակիորեն կարևորվում է հայ ժողովրդի ու Եկեղեցու համար. քանզի լինելով ավանդական հնագույն Եկեղեցիներից մեկը. իր բազմադարյա ավանդույթը շարունակում է աշխարհասփռված՝ տարբեր միջավայրերում ապրող հայության կյանքում, որի համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հոգևոր կենտրոնն ու կապող օղակն է Հայրենիքի ու միմյանց հետ:

Մեծապես ողջունելի է, որ գիտաժողովում այս հարցերին նվիրված մի շարք քննարկումներ են կազմակերպվելու՝ զուտ հայագիտական խնդիրներն առնչելով զարգացող կյանքին և նրանց հաղորդելով արդիական հնչեղություն ու կարևորություն:

Հայրապետական Մեր գնահատանքն ենք հայտնում գիտաժողովի կազմակերպիչներին ու մասնակիցներին՝ հավատով, որ Եվրոպայի գիտական դասական կենտրոններից մեկում գումարվող նման համաժողովը, այժմյան ընդհանուր քաղաքակրթական խնդիրների տեսանկյունից դիտարկելով, հոգևոր-մշակութային ալեհեր և հարուստ ժառանգությամբ 21-րդ դար մտնող հայ ժողովրդի պատմության ու այսօրվա կյանքի ամենատարբեր ոլորտներին վերաբերող հարցեր, հավատի ու գիտության ճանապարհով մարդկությանը ծառայելու իր կոչման հաստատումով մի նոր էջ կգրի ժողովուրդների գիտամշակութային կապերի ու համագործակցության գրքում: Հավատում ենք, որ Բարձրյալն Աստված պիտի օրհնի և առաջնորդի գիտաժողովի աշխատանքը, քանզի «Որ նիւթէ զբարիս, խնդրէ զշնորհս բարութեան...»:

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

2000 թ. սեպտեմբեր 2

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ՝ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 31 օգոստոսի 2000 թ.:**

Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը 2000-2001 ուսումնական տարվա բացման առիթով Հայրապետական օրհնությամբ հետևյալ շնորհավորական ուղերձն է հղել կրթական հաստատությունների ուսանողներին և ուսումնական գործի բոլոր նվիրյալներին.

*«Նոր հույսերով է սկսվում ուսումնական տարին, որպես լույսի ճանապարհ, որ առաջնորդում է դեպի գիտելիքի ու արժեքների ճանաչողության մեծասքանչ աշխարհ:*

*Ուսումնատենչ ու ոգեպաշտ մեր ժողովուրդը բազմափորձ իր պատմության ողջ ընթացքում հոգևորով իմաստ է հաղորդել իր կյանքին, կարևորել գիտությունն ու արվեստը և միտք ու հոգի կերտող, ջանասիրությամբ ու երջանկությամբ լեցուն ուղին՝ ուսումն ու կրթությունը: «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» հայերեն առաջին գրավոր նախադասության ուղենիշ խորհրդով հայոց Սահակ-Մեսրոպյան դպրոցը առաջնորդել ու պիտի առաջնորդի հայորդիներին՝ ոգեշնչելով ու զորացնելով Աստվածաշնչյան անանց ճշմարտությամբ:*

*Սիրասուն սաներ կրթական հաստատությանց՝ աշակերտներ և ուսանողներ, ուսումնական շնորհակալ գործի բոլոր նվիրյալներ. Լույս խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմորեն ողջունում և սրտաբուխ Մեր շնորհավորանքներն ենք բերում Ձեզ 2000-2001 ուսումնական տարվա բացման բերկրաշատ առիթով: Հայրական սիրով և Հայրապետական օրհնությամբ մաղթում ենք, որ Տերը շնորհազարդի և հաջողություններ պարգևի Ձեզ նոր ուսումնական տարում՝ բեղուն դարձնելով Ձեր ընթացքը ուրախաբեր արդյունքներով: Թող Թարգմանչաց արարող ոգին ուղեկից լինի ձեզ՝ հանուն մեր նախնյաց սուրբ հիշատակի, հանուն մեր ժողովրդի այսօրվա ու գալիքի:*

*Օրհնությամբ՝*

**ԳԱՐԵԳԻՆ Բ**

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»

# ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿՈՆՐԱԴ ՌԱՅԶԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 12 սեպտեմբերի 2000 թ.:**

Այսօր Ն. Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի հրավերով եռօրյա պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Կոնրադ Ռայզերը՝ ԵՀԽ Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու փիլ. Թենի Սիմոնյանի ընկերակցությամբ: Սա ԵՀԽ գլխավոր քարտուղարի երկրորդ այցն է Հայաստան:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ մեծարգո հյուրի հետ:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս կարևորում է էկումենիկ շարժումը, որին և միտված է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի գործունեությունը: Նորին Սրբությունը հավաստեց նաև, որ Հայ Առաքելական Եկեղեցին շարունակելու է իր նպաստը բերել ԵՀԽ առաքելությանը:

Իր հերթին դոկտոր Կ. Ռայզերը հավաստեց, որ ԵՀԽ-ն շարունակում է խորացնել փոխըմբռնման մթնոլորտը քրիստոնյա եկեղեցիների միջև, քանի որ Քրիստոսի հավատքը բոլոր այդ եկեղեցիներին դարձրել է նույն ընտանիքի անդամներ, որոնք օտար լինել միմյանց չեն կարող: Անդրադառնալով Հայ Առաքելական Եկեղեցուն, ԵՀԽ գլխավոր քարտուղարը նշեց, որ Հայ Եկեղեցին հատուկ տեղ ունի հին Եկեղեցիների կողքին ոչ միայն իր 1700-ամյա պատմությամբ, այլ նաև իր ուրույն նկարագրով:

Առիթից օգտվելով Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Կ. Ռայզերին մարդասիրական այն աջակցության համար, որ ցուցաբերում է ԵՀԽ-ն Հայաստանի ժողովրդին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գործող «Հայաստանյան կլոր սեղան» և ECLOF գրասենյակների միջոցով:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ԵՀԽ ներկա վիճակին ու զարգացումներին առնչվող հարցեր: Նորին Սրբությունն ու դոկտոր Կ. Ռայզերն անդրադարձան նաև օգոստոս ամսին Նյու Յորքում կայացած աշխարհի հոգևոր առաջնորդների գագաթնաժողովին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը և Արարատ-

յան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Հանդիպումից հետո Վեհափառ Հայրապետը և դոկտ. Կոնրադ Ռայզերը այցելեցին ՀՀ Ազգային ժողով և Սահմանադրական դատարան:

Սեպտեմբերի 13-ին Կ. Ռայզերի մասնակցությամբ նախատեսվում է Էկումենիկ արարողություն Սպիտակի Ս. Հարություն նորակառույց եկեղեցում, որը 1988 թ. երկրաշարժից հետո ԵՀԽ-ի նվերն է աղետյալ քաղաքին: Սեպտեմբերի 14-ին Կ. Ռայզերը կայցելի նաև Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Նախատեսվում են այցելություններ նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ԵՀԽ «Հայաստանյան կլոր սեղան» և ECLOF գրասենյակներ:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 13 սեպտեմբերի 2000 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդարանի Եվրամիություն-Հայաստան խորհրդարանական հանձնաժողովի անդամներին՝ Եվրախորհրդարանի Սահմանադրական հարցերի հանձնաժողովի նախագահ Ուրսուլա Շլայխերի գլխավորությամբ:

ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովհաննես Հովհաննիսյանը Վեհափառ Հայրապետին ծանոթացրեց պատվիրակության հետ, որի կազմում էին հանձնաժողովի փոխատենապետ Ջիովանի Պիտելան և Հայաստանի հարցերով Եվրախորհրդարանի զեկուցող Պեռ Գարտոնը:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց, որ Հայաստանի անդամագրումը Եվրախորհրդարանին մոտենում է իր բարի ավարտին՝ միաժամանակ նշելով, որ անդամակցումը եվրոպական կառույցներին ժողովրդավարության և իրավական հիմքերի ամրապնդման երաշխավորը կարող է դառնալ: Վեհափառ Հայրապետը երախտագիտությամբ նշեց նաև եվրոպական պետությունների ջանքերը՝ ուղղված տարածաշրջանում խաղաղության և փոխըմբռնման մթնոլորտի ձևավորմանը:

Հյուրերի խնդրանքով Նորին Սրբությունն իր տեսակետները հայտնեց առկա իրավական դաշտում Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ՝ ցավով նշելով, որ հաճախ կրոնական շատ կազմակերպություններ ոտնահարում են երկրի իրավական ու բարոյական նորմերը: Վեհա-

փառ Հայրապետն անդրադարձավ նաև Եկեղեցու ունեցած դերին տարածաշրջանում խաղաղության ամրապնդման գործում: Այս առիթով Հայոց Հայրապետը նշեց, որ իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս ջանում է ըստ ամենայնի նպաստել խաղաղության կայունությանը: Այդ նպատակն է հետապնդում նաև Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգևոր առաջնորդի հրավերով Մոսկվայում կայանալիք առաջիկա հանդիպումը Ադրբեջանի հոգևոր պետ Շեյխ ուլ իսլամ Փաշա-զադեի հետ:

Հանդիպմանը ներկա էր Բենիլյուքսի երկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վիգեն Չիթեչյանը:

# ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀՈԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 14 սեպտեմբերի 2000 թ.:**

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ստորագրվեց ՀՀ զինված ուժերում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր ծառայության կանոնադրությունը:

Կանոնադրության ստորագրմանը ներկա էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Փաստաթուղթը ստորագրեցին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը և ՀՀ պաշտպանության փոխնախարար, գեներալ-մայոր Միքայել Գրիգորյանը:

Կանոնադրության ստորագրման առիթով ներկաներին շնորհավորեց Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ Հայոց Եկեղեցու սպասավորների հոգևոր ծառայությունը բանակում զորացնելու է ազգային-քրիստոնեական ոգին և հայ մարտիկներին առաջնորդելու է առավել նախանձախնդիր ծառայության:

Զինծառայողներին քրիստոնեական-բարոյական սկզբունքներով և ազգային-հայրենասիրական ոգով դաստիարակելու, նրանց կրոնական ու եկեղեցական գիտելիքներ հաղորդելու նպատակով հայոց բանակում ճեմարանավարտ հոգևորականները հոգևոր ծառայություն են իրականացնում դեռևս 1997 թվականից: Այսօր հայկական բանակում իբրև հոգևոր սպասավոր ծառայում է 20 հոգևորական:

Այս կանոնադրությամբ հստակեցվում ու կանոնակարգվում է հոգևոր ծառայության գործունեության դաշտը: Ըստ կանոնադրության հոգևոր ծառայությունը մաս է

կազմում ՀՀ պաշտպանության նախարարության և ղեկավարվում է հոգևոր ծառայության առաջնորդի կողմից:

Փաստաթղթի ստորագրումը կյանքի է կոչում նաև դեռևս այս տարվա մարտ ամսին ՀՀ կառավարության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միջև ստորագրված «Մտադրությունների հուշագրի» այն կետը, որը նախատեսում է համատեղ աշխատանքների իրականացում ՀՀ զինված ուժերում զինծառայողների հոգևոր կյանքի և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԽՈՍՐՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 15 սեպտեմբերի 2000 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների կազմակերպման պետական հանձնաժողովի փոխնախագահ Խոսրով Հարությունյանին:

Տոնակատարությունների կազմակերպման աշխատանքները թևակոխում են ավարտական փուլ: 1700-ամյակի տոնակատարությունների սկիզբը կազդարարվի 2001 թ. փարեմուտի գիշերը, որոնք կշարունակվեն ողջ տարվա ընթացքում՝ Եկեղեցի-պետություն միասնական ծրագրով:

Հանդիպման ընթացքում պրն Հարությունյանը Վեհափառ Հայրապետին շարադրեց տոնակատարությունների անցկացման հետ կապված մի շարք կազմակերպչական խնդիրներ, որոնք Եկեղեցու հետ համատեղ լուծման կարիք են զգում: Նշվեց Հայ Եկեղեցու 1700-ամյա հոբելյանին միջազգային անհրաժեշտ հնչեղություն հաղորդելու կարևորությունը:

Վեհափառ Հայրապետը իր գոհունակությունը հայտնեց հանձնաժողովի նախանձախնդիր աշխատանքի համար և հույս հայտնեց, որ բոլոր միջոցառումները կանցկացվեն բարձր մակարդակով:

Հանդիպմանը ներկա էր 1700-ամյակի եկեղեցական գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին. 20 սեպտեմբերի 2000 թ.:**

Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Հայաստանի անկախության 9-րդ տարեդարձի առիթով հետևյալ շնորհավորական ուղերձն է հղել համայն հայությանը.

*«Անկախության Օրվա առիթով Հայրապետական օրհնությամբ ջերմորեն ողջունում և շնորհավորում ենք Մեր ժողովրդի բազմաչարչար զավակաց ի Հայաստան և ի Սփյուռս:*

*Բոլոր ժողովուրդների կյանքում մեծագույն իրադարձություն է անկախ պետականության հռչակումը, քանզի ազդարարում է ազատ ապրելու նրա կամքը և հաստատում անձեռնմխելի իրավունքը: Ազատությունը շնորհ է երկնային, աստվածատուր, անկողոպտելի պարգև, որի մեջ միայն մարդիկ ու ժողովուրդներ ինքնարտահայտվում և ինքնահաստատվում են իրենց ողջ կարողությամբ և ստեղծագործում լիարժեքորեն:*

*Ազատության քաղձանքից զորություն առած Հայկյան զարկով է ծնունդ առել մեր ժողովուրդը և ազատության քրիստոնեական ճանաչողությամբ ընտրել իր երթը դեպի հավերժություն:*

*Թանկ ենք ձեռք բերել նորօրյա մեր ազատությունն ու անկախությունը: Վճռակամ ենք ինքնիշխան մեր Հայրենիքին տեր լինելու քաջությամբ ու պատասխանատվությամբ, այն պահպանելու և ամրապնդելու միաբանության ոգով: Անկախության օրվա սրբազան խորհուրդը թող լինի մեր հոգիներում, որպես անխորտակ ամրոց՝ դիմագրավելու ամեն փորձություն և որպես նորոգ ուժ՝ շաղկապելու մեր անցյալը, ներկան ու ապագան:*

*Սիրելի հայորդիք, հավատում ենք, որ մեր Հայրենիքի երկնքում եռագույնի հպարտ ծածանումը հանապազ ջերմացնելու է մեր սրտերը, միավորելով մեզ աշխարհի չորս ծագերում: Հավատում ենք մեր ժողովրդի հանճարունակ արարող հոգուն, ստեղծագործ մտքին ու կերտող բազկին: Առ Աստված ապավինությամբ հավատում ենք հայոց լուսավոր գալիքին:*

*Թող Բարձրյալն Աստված զորացնի մեզ մեր պայքարի մեջ և Իր օրհնության ներքո անսայթաք առաջնորդի բոլորիս, նաև՝ հայրենի պետական այրերին, որպեսզի մշտապես արևորված լինի հույսի արշալույսը հայորդյաց կյանքի:*

*Օրհնությամբ՝*

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»**

# ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 28 սեպտեմբերի 2000 թ.:**

Այսօր Հայաստանի Ավետարանչական Ընկերակցության կենտրոն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու, Հայաստանի Աստվածաշնչական Ընկերակցության Ատենապետ Գերշ. Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը՝ ընկերակցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Արշավիր Գաբուճյանի, Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի ներկայացուցիչ, Վերապատվելի Ռընե Լևոնյանին ցավակցություններ հայտնելու Հայ Ավետարանչական Ընկերակցության գործադիր տնօրեն, Վերապատվելի Մովսես Ճանպազյանի անժամանակ մահվան առիթով:

Սրբազան Հայրը, հանուն Վեհափառ Հայրապետի, նշեց կորստի ծանրությունը՝ նկատի ունենալով հատկապես, որ երջանկահիշատակ հոգևոր հովիվը աչքի էր ընկնում էկումենիկ, քրիստոնեական սիրով լեցուն, նվիրյալ և օրինակելի կյանքով:

Այցելության ավարտին Սրբազան Հայրը աղոթեց հանգուցյալ Վերապատվելիի հոգու խաղաղության համար:

# ՀԱՅՐ ՋՈՆ ԲՈՆԻՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քրիստոնեական Միությունը Խրախուսելու Կենտրոնի աշխատակից Հայր Ջոն Բոնին սեպտեմբերի 12-ից 19-ը այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի հրավերով:

Այցելության նպատակն էր, որքան հնարավոր է, շատ տեղեկություններ քաղել Հայ Առաքելական Եկեղեցու, նրա պատմության, ներկայումս ծավալող գործունեության մասին, ինչպես նաև նախապատրաստել Գրիգոր Լուսավորչի մասունքները Նեապոլից Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելու նպատակով Վեհափառ Հայրապետի Հռոմ կատարելիք ճանապարհորդության մասին մանրամասներ:

Այցելության ընթացքում Հայր Բոնիին ուղեկցում էին Ս. Գայանե վանքի վանահայր Ներսեհ աբեղա Խալաթյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի աշխատակիցները:

Մեկշաբաթյա այցելությունների ընթացքում Հայր Բոնին հանդիպում ունեցավ Վեհափառ Հայրապետի հետ, եղավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական Հարաբերությունների Գրասենյակում, ապա Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնում, ուր ՔԴՔԿ-ի տնօրեն Մակար վարդապետ Հովհաննիսյանը ծանոթացրեց կենտրոնի ծավալած կրոնա-դաստիարակչական աշխատանքներին և հրապարակչական գործունեությանը:

Ի թիվս այցելությունների, նա եղավ Նորքի Հայորդյաց Տանը, Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, Սևանի Վազգենյան Դպրանոցում, ուր մասնակցեց ուսումնական տարվա բացման հանդիսավոր ցերեկույթին:

Լինելով Հռոմեական կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ՝ հայր Բոնին այցելեց Գյումրիում գտնվող կաթոլիկ համայնքին:

Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր մշակույթին ավելի ծանոթանալու նպատակով նա այցելեց մի շարք եկեղեցիներ և վանքեր, եղավ Ս. Գայանե և Ս. Հռիփսիմե վանքերում, զրուցեց հոգևորականների և պաշտոնեության հետ, եղավ Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, Ծիծեռնակաբերդում, Երևանի Պատմության և Էրեբունիի թանգարաններում:

*ԳԱՅԱՆԵ ԱԵՔՍՄԱՆՅԱՆ*

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ՀՐԱՉ ՆՈՐԻԿՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԱՌ ԱԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԻԱՐ ՀՐԱՉ ՆՈՐԻԿԵԱՆ, ՈՐ Ի ՍԻԴՆԻ, ԱՒՍՏՐԱԼԻԱ

Աւստրալիայի հայոց թեմի բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիօզեանից սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք, որ Դուք երկար տարիներ անսակարկ ու նուիրեալ Ձեր ծառայութիւնն էք մատուցել եւ առ այսօր ամենայն բծախնդրութեամբ շարունակում էք Ձեր կարեւոր նպաստը բերել հեռաւոր Աւստրալիայում հաստատուած Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, որ, շնորհիւ նաեւ Ձեզ, գործուն է իր առաքելութեան մէջ՝ մեր ժողովրդի զաւակաց ի մի խմբելու եւ ի Տէր առաջնորդելու:

Արդարեւ, Ձեր կեանքի ութերորդ տասնամեակի այս խանգրուանին, որպէս երեսնամեայ գործունէութեան աւանդ ունեցող Սիդնիի եկեղեցւոյ վարչութեան բարեջան անդամ, Դուք արժանիօրէն վաստակել էք սէրն ու յարգանքը թեմակալ առաջնորդի եւ հաւատաւոր աւստրալահայոց:

Գնահատելով բազմամեայ նուիրեալ Ձեր ծառայութիւնը եւ ընդառաջելով թեմակալ Սրբազան Հօր խնդրանքին, Միածնաէջ Մայր Աթոռից յղում ենք Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը՝ շնորհելով Ձեզ

## Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

մեր Եկեղեցւոյ պատուոյ շքանշանը:

Աղօթում ենք առ Բարին Աստուած, որպէսզի «Նորոգողն Տիեզերաց» ծառայասիրութեան Ձեր ոգով նորոգի ու արդիւնաւորի կեանքը աւստրալահայոց՝ ի մխիթարութիւն վաստակեալ Ձեր հոգու եւ ի շինութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Ամենախնամ Աստուած Ամենազօր Իր Աջի հանապազ օրհնութեամբ քաջառողջութիւն եւ խաղաղ ու անվրդով բազում տարիների կենաց արեւշատութիւն բաշխի Ձեզ:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալք ի Մէնջ», ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս
ի 30 Մայիսի յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 10

# ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՇՆՈՐՀԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն թվականի սեպտեմբեր ամսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակով «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

Տիար Ճորճ Չագրյանը (Ռոփ Այլընդ, ԱՄՆ),
Բարեշնորհ Խաչատուր սարկավագ Քազարյանը (Ռոփ Այլընդ, ԱՄՆ),
Տիար Լևոն Թերզյանը (Շարվիլեո, Ֆրանսիա):

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գրերով պարգևատրվել են.

Իրաքի ՀԲԸ Միության անդամները (Իրաք),
«Հայ ընտանիքը 21-րդ դարում» գիտաժողովի մասնակիցները (Երևան),
Բասրայի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միության անդամները (Բասրա, Իրաք),
Արժանապատիվ Տեր Վրթանես ավագ քահանա Գալայճյանը (Վաշինգտոն, ԱՄՆ):

# ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԾՈՒՄ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 17-ին Հայ Առաքելական Եկեղեցին նշեց տարվա վերջին տաղավար տոնը՝ Խաչվերացը: Այդ տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կրկնակի ուրախության և տոնախմբության վերածվեց, քանի որ նույն օրը, խրնթացս Սուրբ և անմահ Պատարագի, տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում: Ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի «ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն» կոչվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանների տնօրեն Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը:

Ուրախ էր և հուզված Վեհափառ Հայրապետը, քանի որ իր հայրապետության ընթացքին սա երկրորդ ձեռնադրությունն էր, որ կատարվում էր նրա ձեռամբ:

Նախորդ օրը, սեպտեմբերի 16-ին, երեկոյան ժամերգության ավարտին, համաձայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ավանդ կանոնների, նախքան ձեռնադրությունն ու օծումը կատարվեց եպիսկոպոսական աստիճանի ուխտադրությունը: Իջման Սուրբ Սեղանի առջև ծնկի գալով՝ ընծայյալ Հայր Սուրբը բարձրաձայն ընթերցեց ուխտագիրը, համաձայն որի նվիրյալը, հանուն Ամենասուրբ Երրորդության, խոստացավ և ուխտեց «անխոտոր եւ անսայթաք ընթանալ ի վարդապետութեան հաւատոյ եւ պատուիրանաց Հայաստանեայցս Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ...», Ս. Ավետարանը մեկնելիս չմոլորվել երբեք նրա շավիղներից, ծիսական յուրաքանչյուր արարողություն վարել ըստ Հայաստանյայց Եկեղեցու «Մաշտոց»-ի և մինչև ցվախճան հավատարիմ մնալ Ս. Էջմիածնին, «եւ կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան եւ հրամանաց Սրբոյ Կաթողիկէ Մայր Աթոռոյս»:

Երդումնագրի ընթերցումից հետո ընծայացուն Ս. Խաչն ու Ս. Ավետարանը համբուրելով «յարուցեալ ստորագրէ ի ներքոյ երդումնագրոյն զանուն իւր»: Այն ձեռնագրեցին նաև ուխտադրության վկաները՝ առընթերականները՝ Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը և Մայր Աթոռի փոխլուսարարապետ Տ. Արշակ վրդ. Տիգրանյանը, որով և ավարտվեց երեկոյան արարողությունը:

Հաջորդ օրը, սեպտեմբերի 17-ին, ժամը 10.30-ին, Մայր Տաճարի քաղցրահունչ զանգերն ազդարարեցին Ս. Պատարագի սկիզբը, և հանդիսավոր թափորը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության ներքո, Վեհարանից ուղևորվեց դեպի Մայր Տաճար: «Հրաշափառ Աստուած» շարականի երգեցողությամբ Վեհափառ Հայրապետը և հանդիսավոր թափորի մասնակիցները մուտք գործեցին Մայր Տաճար և առաջնորդվեցին դեպի Ս. Ստեփանոսի խորան: «Մեղա»-ն կարդալուց հետո հնչեց «Հովիւ քաջ» շարականը, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը խնկարկեց Ս. Սեղանին ու ժողովրդին և բազմեց Հայրապետական գահին, որպեսզի ունկնդիր լինի Մայր Աթոռի միաբանության և «համօրէն ուխտի» ներկայացնելիք խնդիրներին:

Այնուհետև հերթով, ըստ կարգի, Վեհափառ Հայրապետին մոտեցան «միաբանք մեծի Սրբոյ եւ Առաքելական Աթոռոյս Էջմիածնի», Հայոց Եկեղեցու նվիրապետական աստիճանների ներկայացուցիչները՝ սաղմոսասացները, դռնապանները, ընթերցողները, երդմնեցուցիչները, ջահընկալները, կիսասարկավագները, սարկավագները, քահանաները, եպիսկոպոսները, ինչպես նաև ժողովրդի ունոր (իշխանք) և չքավոր (աղքատք) խավերը ներկայացնող զույգ աշխարհականները՝ «աղաչանօք» բացահայտելու իրենց խնդիրը: Այս ամենից հետո, համաձայն ձեռնադրող Հայոց Հայրապետի հարցումի, խարտավիլակ Տ. Շահե արքեպս. Աճեմյանն ընթերցեց նվիրյալի վկայագիրը:

«Սուրբ Աստուած» շարականի երգեցողությունից հետո, ընձայացուն, աստիճան առ աստիճան բարձրանալով, ուխտեց լինել ազգի հավատավոր սպասավորը՝ անկախ դիրքից ու հարստությունից:

Երկրորդ, երրորդ և չորրորդ աստիճանները շնորհելիս, Վեհափառ Հայրապետն ընձայալին խորդորեց լինել ջանադիր, պահել Աստվածային պատվիրանները և Առաքելական Եկեղեցու կանոնները՝ ըստ Հին և Նոր Կտակարանաց:

Հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ աստիճանների շնորհումով նվիրյալը խոստացավ պատվել մեր Սուրբ Հայրերի հրամանները, մաքրվել Տիրոջ զորությամբ, խնամել և ուսուցանել «զՀօտն Քրիստոսի»:

Լսելով խարտավիլակին ուղղած հարցերի պատասխանները, Վեհափառ Հայրապետը կատարեց հրապարակային հավատաքննություն՝ ըստ ձեռնադրության «Մաշտոց»-ի, որի ընթացքում նվիրյալն ուխտեց հավատարիմ մնալ Քրիստոսավանդ հավատքին և նզովեց «զամենայն հերձուածողս եւ հերետիկոսս եւ զաղանդաւորս...»: Այնուհետև «Զողորմութիւնս Քո, Տէր, յաւիտեան օրհնեցից» սաղմոսասացությամբ ընձայացուի ուսերին անցկացվեց եպիսկոպոսական զգեստի մաս կազմող եմիփորոնը:

Ապա Վեհափառ Հայրապետը, խնկարկություն կատարելով՝ Ս. Ստեփանոսի խորանից ուղղվեց դեպի Ավագ Ս. Խորան՝ օծելու նվիրյալի ճակատն ու ձեռքերը:

Ս. Պատարագի արարողությունը շարունակվեց մինչև «Զի ողորմած եւ մարդասէր ես...» մաղթանքը: Ապա Վեհափառ Հայրապետը բազմեց գահին, և նվիրյալը մոտեցավ ու ծնրադրեց նրա առջև: Վեհափառ Հայրապետը, իր Աջը նրա գլխին դնելով, ընթերցեց «Տէր Աստուած մեր ...» աղոթքը:



«Ընկալ զայս զաւազան ...»

Այս ամենից հետո նվիրյալը, «ձեռսն ի վեր առեալ», ի նշան աշխարհից հրաժարվելու, շրջվեց դեպի հավատացյալ ժողովուրդը. դպրաց դասը երեք անգամ երգեց «Աստուածային եւ երկնաւոր շնորհ ...» շարականը՝ Փառեն ծայրագույն վարդապետին քահանայությունից կոչելով եպիսկոպոսության: «Կենդանարար Աստուած» շարականի երգեցողության ներքո հանդիսավորապես Ավագ Ս. Խորան բերվեց քողա-

ձանկ և Սրբալույս Մյուռոնով ի Մյուռոնաթափ Աղավնին: Վեհափառ Հայրապետը Կենսատու Մյուռոնով օրհնեց, օծեց և սրբագործեց նվիրյալի ճակատը և աջ ու ահյակ ձեռքերը:

«Օծումն զոր հեղեր...» աղոթքի ընթերցումից հետո Վեհափառ Հայրապետը նորընծա եպիսկոպոսին փոխանցեց առաջնորդության գավազանը, իսկ ճկույթ մատին հագցրեց եպիսկոպոսության մատանին՝ ասելով. «Ընկա՛լ մատանի առհաւատչեայ հաւատարիմ. եւ մնա՛ զգուշութեամբ յաստուածայինդ քո փեսայութիւն սուրբ Եկեղեցւոյս ճշմարիտ եւ ուղիղ հաւատով», և ապա, ի նշան Աստծո Կենաց Խոսքի անձանձիր քարոզչության, նրան փոխանցեց նաև Ս. Ավետարան:

Հուզված էր Տ. Փառեն Սրբազանը, որովհետև այս ձեռնադրությամբ ոչ այնքան պատիվ էր տրվում իրեն, որքան ծանր պատասխանատվություն, քանի որ նա համալրում էր Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց դասը:

Եպիսկոպոսական ձեռնադրությունն ու օծումն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով, որից հետո Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական օրհնության և շնորհավորանքի խոսքը հղեց նորընծա եպիսկոպոսին և հավատավոր հայորդիներին:

Ս. Պատարագի արարողությունից հետո, ի պատիվ նոր ձեռնադրյալ և օծյալ եպիսկոպոսի, Մայր Աթոռի սեղանատանը Տ.Տ. Գարեգին Բ Հայոց Հայրապետի մասնակցությամբ տեղի ունեցավ ճաշկերույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը, որպես եպիսկոպոսական աստիճանի խորհրդանիշ, նորաօծ եպիսկոպոսին նվիրեց եպիսկոպոսական պանակե:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Աստված բազմայապկի Վեհափառ Հայրապետի շնորհաբեր Աջի զորությունը և Իր շնորհներով առատապես պարգևատրի նորաօծ Սրբազան Հորը, որպեսզի նա երկար տարիներ կարողանա իր ծառայությունը բերել Հայոց Եկեղեցուն:

*ՎԱՀԵ ՍՐԿ. ՀՈՎՍԵՓՅԱՆ*



## Տ. ՓԱՌԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Ծնվել է Բեյրութում (Լիբանան), 1939 թ.:

Ուսանել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Անթիլիասի Դպրեվանքում, ապա՝ Բեյթ Մերիի Անկախ Դպրեվանքում և Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Ընծայարանում:

1960 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1963 թ. ուսումը կատարելագործելու նպատակով մեկնել է ԱՄՆ, սովորել ամերիկյան մի շարք համալսարաններում:

1964 թ. սկսած ուսման աորնթեր հովվական պաշտոններ է վարել Հյուսիսային Նյու Յորք նահանգի, Վաշինգտոնի, Միչիգան նահանգի Դետրոյտ և Իլինոյս նահանգի Չիկագո քաղաքների Հայաստանյայց Առաքելական եկեղեցիներում:

1967 թ. ստացել է վարդապետական, իսկ 1975 թ.՝ ծայրագույն վարդապետական աստիճաններ:

Երկու հաջորդական չորս տարիների համար ընտրվել է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի թեմական խորհրդի անդամ: 1977-1999 թթ. եղել է Արևելյան թեմի միության հանձնախմբի ընտրյալ անդամ:

Դետրոյտում նրա պաշտոնավարության տարիներին ամբողջությամբ վերանորոգվել է Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու համալիրը, կառուցվել են Երիտասարդական կենտրոնը, պատմության և գեղարվեստի Մանուկյան թանգարանը, Մարտիկյան գրադարանը: Նրա շնորհիվ հայտնաբերվել, ի մի է բերվել, վերծանվել և ցուցադրության ներկայացվել պատմության և գեղարվեստի Մանուկյան թանգարանի ողջ հավաքածուն:

1988-1993 թթ. Դետրոյտում իր նախաձեռնությամբ և միջոցով շուրջ 2 մլն դոլար է հանգանակվել՝ ի նպաստ Հայաստանի և Արցախի կարիքների:

1996 թվականից ի վեր ծառայության է անցել Հայաստանում: Նշանակվել է նախ՝ որպես փոխանորդ, ապա՝ տեղապահ Շիրակի թեմում:

2000 թ. հունվար ամսից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրությամբ նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանների տնօրեն:

# ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 2000-2001 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Աշունը հողին է վերադարձնում այն տերևները, որոնք ամառը փոխ էր վերցրել հողից: Ասել է, թե ամեն ինչ փոփոխվում է ժամանակի մեջ, բայց ոչինչ չի կորչում, այլ մի ինչ-որ շրջապտույտով վերադառնում է այնտեղ, որտեղից սկսել էր: Շրջաններ, շրջաններ... սակայն անընդհատ ձգվող ու վեր բարձրացող, ինչպես մի պարույր: Այսպես է լինում զարգացումը ժամանակի մեջ:

Ինչպես բոլոր սեպտեմբերները ճեմարանական կյանքում սկիզբ են դնում նոր տարեշրջանի, զարգացման մի նոր օղակի, այս սեպտեմբերն էլ եկավ ու իր աշնանային շնչով կրկին բացեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դռները՝ ներս հրավիրելով բոլոր նրանց, ովքեր ծարավն ունեն ուսման ու կրթության, և ոչ միայն մտավոր:

Սեպտեմբերի 23-ն էր, երբ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում, բարձրից հայող երախտաշատ Կոմիտասի հանդարտ հայացքի ներքո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, հերթական անգամ հնչեց Տերունական աղոթքը՝ սկիզբ դնելով նոր ուսումնական տարեշրջանի բացման հանդիսությանը: Ներկա էին բարձրաստիճան հոգևոր հայրեր, Մայր Աթոռի միաբաններ, ուսուցիչներ, ճեմարանական սաների ծնողներ և հյուրեր:

Տիրավանդ աղոթքից հետո ճեմարանի սաներից կազմված երգչախումբը, պրն Ռ. Շարբաթյանի ղեկավարությամբ, կատարեց Հայաստանի Հանրապետության ու Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հիմները, որից հետո ճեմարանի փոխտեսուչ Տ. Վաչե քհն. Հայրապետյանն ընթերցեց Մարկոսի Ավետարանի՝ այդ օրվա իմաստը խորհրդանշող Դ 1-6 հատվածը, ուր պատմվում է «Սերմնացանի առակը»: Այնուհետև երգչախումբը ներկաների ունկնդրությանը հանձնեց «Աշակերտք Քրիստոսի» շարականը:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչի պաշտոնին կոչված Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը բացման իր խոսքում, դիմելով ներկաներին, ասաց.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ, Հոգեշնորհ Հայրեր, սիրելի դասախոսներ, ուսանողներ և ներկաներ.

Ինչպես սեպտեմբերին բացվում կամ վերաբացվում են բոլոր ուսումնական հաստատությունները, այսօր մենք էլ պաշտոնապես բաց ենք անում Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դռները, որն իր գիրկն է առնում 130 ուսանող: Անցյալ տարի մեր ուսա-

սողների թիվը 83 էր: Ինը սանսր մեզ մոտ ուսումը շարունակելու եկան Վազգենյան դպրանոցից: Այս տարի Հոգևոր Ճեմարան են դիմել 72 դիմորդներ, որոնցից 38-ը, հաջող քննություններ հանձնելով, ընդունվել են մեր այս հաստատություն, և այս տարի, ճեմարանի պատմության մեջ առաջին անգամ լինելով, մենք երկու Ա լսարան ունեցանք: Ուրախ եմ հայտարարելու, որ այս տարի Գևորգյան Հոգևոր Ճեմարանն իր ընթացքը սկսում է բավականին լավ պայմաններում: Ձերդ Սրբություն, դեռ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության տարիներին, ցանկություն հայտնեցիք, որ մեր հոգևոր երեք ուսումնական հաստատությունները մեկ ծրագրով առաջնորդվեն: Այդ մտահղացումն իրականացավ այս տարի, երբ Դուք Ձեր բազմազբաղ առօրյայից ժամանակ գտաք գլխավորելու մանկավարժական-ուսումնական խորհուրդը, և ուսումնական ծրագիրը խմբագրվելուց հետո հաստատվեց: Եվ այսօր մեր երեք հոգևոր դպրանոցներն առաջնորդվում են հենց այդ միասնական ծրագրով:

Հպարտ եմ հայտարարելու նաև, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանն այս տարի Վեհափառ Հայրապետից նվեր ստացավ հոյակապ մի ննջարանային համալիր՝ իր շուրջ 40 առանձնասենյակներով, որոնք օժտված են ժամանակակից բոլոր հարմարություններով, և մեր ուսանողները պիտի ապրեն 3 կամ 4 տեղանոց սենյակներում: Նարծում եմ, որ Ձեր հայրական այս ողջ ուշադրության հանդեպ մեր ուսանողությունը պիտի պատասխանի բարձր ուսումնառությամբ, նկարագրով, ապագայի տեսիլքով, հայրենասիրությամբ ու եկեղեցասիրությամբ:

Վեհափառ Տեր, 2000-2001 ուսումնական տարեշրջանն այսօրվանից մեզ համար սկսում է իր իննամյա ճանապարհը, և հայցում ենք Ձերդ Սրբության օրհնությունը, որպեսզի այն լինի հարթ, անսայթաք, իսկ ամավերջին, երբ տնտեսության հաշիվը տալու լինենք, հպարտորեն կանգնենք Ձեր առջև ու ասենք. «Ձերդ Սրբություն, մեր ուսանողները ոչ միայն մեկ տարով մեծացան, այլև ձեռք բերեցին գիտելիքների մեծ պաշար, եկեղեցասիրություն, իսկ ամենակարևորը՝ ամրացան հավատքի մեջ»:

Թույլ տվեք խոսքիս ավարտին մեր բոլորի անունից աղոթք առաքել առ Բարձրյալն Աստված՝ ձայնակցելով մեր ժողովրդի աղոթքին, որն իր հոգու խորքից է բխել.

> Ամեն հայի սրտից բխած,
> Լսիր այս ձայն, ո՛վ Աստված,
> Երկար կյանք տուր Հայրապետին,
> Երկար օրեր Հայոց Հոր:
> Տե՛ր, անսասան պահիր Դու միշտ
> Քո իսկ հիմնած Մայր Աթոռ»:

Արժանապատիվ քահանա Հոր խոսքից հետո Ե լսարանի սան Դավիթ Մարգարյանը մի հատված արտասանեց հայ խոսքի վարպետ Պարույր Սևակի անզուգական

«Անլռելի զանգակատուն» պոեմից, որն ունկնդիրներին փոխադրեց 19-րդ դարի վերջի փոշոտ ու արևոտ հին Վաղարշապատ, ուր ճեմարանի առջև փարազների ու բարբառների բազմազանություն էր, իսկ այդ ամենի մեջ շփոթված ու առանձնացած մի պատանի, որը տարիներ անց պիտի դառնար ազգային ոգու ելևէջները հնչեցնող զգայուն լարը: Այս հույզերը փոխվեցին հայրենասիրության և հայրենիքի լուսավոր ապագան տեսնելու, ձգտելու պայծառ երազների, երբ ճեմարանի սաների կատարմամբ հնչեց Հովհ. Թումանյանի խոսքերով գրված Ալ. Հարությունյանի «Հայրենիքիս հետ» երգը: Ճեմարանական սաների այս համառոտ համերգային ծրագրի ավարտից հետո Վեհափառ Հայրապետը տվեց իր օրհնության խոսքը.

*«Սիրելի տեսուչ Հայր, Գերաշնորհ, Հոգեշնորհ Հայրեր, սիրելի դասախոսներ, սաներ և ներկաներ.*

*Այս պահին բոլորիս հոգին լցված է ուրախությամբ և ցնծությամբ: Սկսվում է նոր ուսումնական տարին, և նոր երազներ, նոր հույսեր, նոր մտածումներ են ձևավորվում յուրաքանչյուրիս հոգում ու մտքում, որոնք առաջիկա այս տարվա ընթացքին պիտի իրականություն դառնան, պիտի կյանք առնեն և իրենց արդյունքներով բերկրանք, ուրախություն պարգևեն յուրաքանչյուրիս: Այս հավատքով ու վստահությամբ է յուրաքանչյուրս մուտք գործում ուսումնական տարվա շեմից ներս: Ինչպես գիտեք, արդեն արձակուրդային շրջանից սկսած, տեսուչի պաշտոնին կոչվեց Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը, որն իր կազմը համալրեց նոր օգնականներով՝ հանձին Տ. Վաչե քհն. Հայրապետյանի և Մուշեղ սարկավագի: Փոփոխություններ կատարվեցին նաև դասախոսական կազմում. հրավիրվեցին նոր մանկավարժներ, կազմվեց նաև ուսումնական խորհուրդ և մշակվեց կրթական ընդհանուր մեկ ծրագիր: Այս ամենը մեզ վստահություն է ներշնչում, որ այս տարին պիտի լինի արդյունավետ գործունեության տարի:*

*Կանգնած հոգևոր սպասավորների գալիք նոր սերնդի առջև՝ չենք կարող չանդրադառնալ Եկեղեցու կարիքներին, կյանքի նոր պայմաններին և այն մարտահրավերներին, որ այսօր ներկայանում են Եկեղեցուն և մեզ՝ հոգևորականներիս: Ժամանակները փոխված են, եկեղեցականի մասին խորհրդային շրջանի հասկացողությունը, ընկալումն ու պատկերացումը ամբողջապես ի չիք են դարձել. հասարակության համար այլևս փակ ու խորհրդավոր ոչինչ գոյություն չունի: Եկեղեցին մատչելի է, եկեղեցականի գործունեությունը՝ տեսանելի յուրաքանչյուրին, որովհետև եկեղեցականն այլևս ապրում ու գործում է իր հավատացյալի հետ, և եկեղեցականին ու հավատացյալին բաժանող սահմաններ, արգելքներ ու վարագույրներ չկան: Այս պայմաններում, բնականաբար, հայ հավատացյալն ակնկալում է իր առջև տեսնել եկեղեցականի այն կերպարը, որ կերտվել ու ձևավորվել է դարերի մեջ և տեղ գտել հայ հավատացյալի պատկերացումներում: Այլևս*

*հայ հավատացյալը եկեղեցականին չի կարող հարգանք մատուցել սոսկ այն բանի համար, որ նրա ուսերին սքեմ է, որ նա պարզապես կրողն է այն արժեքների, որ դարեր շարունակ մեր նախնիք. մեր հայրերն իրենց հավատքով, նվիրումով ու արյուն-քրտինքով են կերտել, այլ ուզում է տեսնել ու հարգանք մատուցել արժանավորին, որը գիտի արժեցնել իր կոչումը: Այդ սպասումները, հոգևոր ու մտավոր առումով, մեր կյանքի, գործելակերպի և հավատքի դրսևորումների վերափոխումն են պահանջում: Վստահ եմ, որ այս զաղափարներով, համոզումներով ու տեսիլքով պիտի առաջնորդվենք առաջիկա ուսումնական տարում, որպեսզի կարողանանք մեր ժողովրդի սպասումներին արժանի սերունդ հասցնել:*

*Անշուշտ մեզ համար էականն ու կարևորը, մեր կյանքի առանցքը աղոթքն է, որը ձևավորում է մեր հավատքը, իմաստավորում ձեռք բերված գիտելիքները: Եթե մենք աղոթքով սնված, աղոթքով պարուրված հավատք ու հավատքի գործեր չունենք, անիմաստ են դառնալու, առ ոչինչ են նկատվելու ուսուցիչներից ստացած կամ աշխատանքով ձեռք բերած մտավոր այն արդյունքները, որոնք ամբարելու ենք այս հաստատությունից ներս: Մեր սպասումն ու մաղթանքն է, որ կյանքը Հոգևոր Ճեմարանում խարսխված լինի աղոթքի վրա, որպեսզի հավատքը դառնա մեր էության շաղախը, որպեսզի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սան լինելու գիտակցությունը կարողանա դրսևորվել մեր պահվածքում, մեր կյանքում ու գործերում:*

*Ցանկանում եմ շնորհավորել ու շնորհակալություն հայտնել տեսչությանը՝ այս շրջանի նախապատրաստական աշխատանքների համար, ինչպես նաև մեր մանկավարժներին, որոնք անվերապահ սիրով ու նախանձախնդրությամբ ամառային այս շրջանում աշխատեցին տեսչության հետ՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանում աշխատանքի ընթացքը ծրագրավորելու և ընդունելության քննություններին իրենց մասնակցությունը բերելու համար: Իմ գնահատանքն ու շնորհակալությունը նաև մեր Հոգևոր Հայրերին, որ հանձն առան իրենց ժամանակը տրամադրելու և Գևորգյան Հոգևոր Ճեմարանում դասաժամեր ստանձնելու համար:*

*Ցանկանում եմ գնահատանքս ուղղել նաև մեր սաների ծնողաց, որ կրթության ու դաստիարակության մի որոշակի բաժին ունեն և նախանձախնդիր են, որ իրենց զավակաց տեսնեն ուսյալ, հավատավոր և մի այնպիսի անձնավորություն, որի արտաքին երևույթն արդեն վկայություն է թողնում և խոսում այն մասին, որ այդ անձը ուրիշ կրթություն, դաստիարակություն և էություն ունի: Դա արդյունքն է այն գիտակցության ու ոգու, որով շաղախված է այս հաստատությունը և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Իմ աղոթքն է առ Աստված, որ Տերը զորավիգ լինի բոլորիս՝ արձանագրելու ցանկալի արդյունքներ և արդարացնելու մեր հայրերի*

*խղճերն ու մեր ժողովրդի՝ արժանավոր հոգևորական տեսնելու սպասումները: Այս առիթով ցանկանում եմ հարգանքի խոնարհումով հիշել և արժանին մատուցել երջանկահիշատակ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին, որը հնարավոր դարձրեց կենցաղային նոր պայմաններ ունենալ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաների համար:*

*Թող Աստծու աջը հովանի լինի մեզ և առաջնորդի ուսումնական կյանքի ճանապարհով՝ ապահովելով «Ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարիւր»:*

Հավարտ հանդիսության երգչախմբի կատարմամբ և ներկաների ձայնակցությամբ հնչեց Տերունական աղոթքը:

Հրաժեշտին Վեհափառ Հայրապետը «Օրհնեալ եղերուք»-ով բարի երթ մաղթեց նոր ուսումնական փարեշրջանին:

*ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ*
*Գևորգյան Հոգևոր Ճեմարանի*
*Զ լսարանի սան*

# ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՎԵՐԱՄՈՒՏԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 18-ին մեծ շուքով տեղի ունեցավ Սևանա գեղատեսիլ թերակղզում հիմնված Վազգենյան Հոգևոր Դպրեվանքի 2000-2001 թթ. ուսումնական տարեշրջանի վերամուտի հանդիսությունը, որին իրենց մասնակցությունն էին բերել Գերաշնորհ Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը, Հոգեշնորհ Հայրեր Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանը, Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը, Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը, Տ. Զարեհ վրդ. Նազարյանը, Տ. Ներսես աբղ. Խառատյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, պրոֆ. Ռաֆայել Պապայանը, Սևանի քաղաքապետ պարոն Աշոտ Ալեքսանյանը: Ներկա էին նաև տեսչական ու դասախոսական կազմի անդամներ, Մայր Աթոռի միաբան սարկավագներ, լրագրողներ, ծնողներ և Սևան քաղաքի մի խումբ հավատացյալներ:

Դպրեվանքի վերամուտի հանդիսությունն սկսվեց կոմիտասյան «Հայր մեր»-ով և հանրապետության հիմնով՝ կատարմամբ դպրեվանքի նորաստեղծ քառաձայն երգչախմբի, ղեկավարությամբ Շոթա Վարդանյանի: Այնուհետև հանդիսության բացման բովանդակալից խոսքով հանդես եկավ Վազգենյան հոգևոր կրթօջախի նորանշանակ տեսուչ, Հոգեշնորհ Տ. Բագրատ աբղ. Գալստյանը.

*«Փառք և գոհություն Ամենակալ Աստծուն, որ մեզ ևս մեկ անգամ առիթն ընձայեց կատարելու Սևանի Վազգենյան Դպրեվանքի ուսումնական շրջանի վերամուտը, մի հաստատության, որ լծված է «արիացեալք մանկունք» պատրաստելու Հայոց փոքրիկ ածուի համար:*

*Այսու որդիական իմ ամենախոնարհ և ջերմ շնորհակալական զգացումներն եմ ցանկանում փոխանցել ազգիս Ընդհանրական Հայրապետ Տ.Տ. Գարեգին Բ Սրբազնագույն Կաթողիկոսին, որ մեկ ամիս առաջ անվարան կերպով ինձ՝ «անարժան մշակիս». կոչեց այս բարձրագույն պատասխանատվություն պահանջող սերնդապատրաստության պաշտոնին: Այդ վստահությունը մղում է ինձ առավել զգոնության և առավելագույնը ներդնելու այս դպրեվանքի կյանքի զարգացման և բարգավաճման համար՝ հստակ գիտակցելով, որ նրա առաքելությունը սահմանափակված չէ միայն այսօրով, այլ այստեղից է դուրս գալու հոգևոր արժեքներին հարազատորեն փարված հայ մարդը, հայ հոգևորականը՝ ծառայության ամենախոնարհ աստիճանից մինչև բարձրագույնը:*

*Գաղտնիք չէ, որ տասը տարիներ առաջ այսպիսի պայմաններում դպրեվանք հիմնադրելը հրաշքին համազոր մի երևույթ էր, որ մարմին զգեցավ այն օրերին Գարեգին Սրբազանի և այսօր Ազգիս Աստվածարյալ Հայ-*

*րայնեցի անկյունում հավատքի համառության, անվհատ հույսի և անսակարկ սիրո շնորհիվ: Մենք, որպես Վազգենյան դպրեվանեցիներ, որպես տեսչություն և ուսանողություն, պարզապես իրավունք չունենք կասկած ներշնչելու մեր պատրաստակամությամբ ու հանձնառությամբ, այլ առավել կենսավորելու այս հոգևոր հնոցը, որպեսզի փարժեքությամբ կարողանանք մեր Տիրոջ Կենսատու Մարմնին ու Արյանը կենդանի հաղորդությամբ, անմեղությամբ և արիությամբ ընծայել մեր ժողովրդին»:*

Խոսքն ուղղելով մասնավորաբար հոգևոր հայրերին՝ տեսուչ Հայր Սուրբն ընդգծեց, որ ինքը՝ որպես երիտասարդ և նորանշանակ տեսուչ, իր այդ դժվարին ու պատասխանատու գործի համար կարիքն ունի նրանց աջակցության՝ իրենց փորձառու իմաստնությամբ, հավատքի ուժականությամբ և աղոթքի զորությամբ. *«Օրհնեցե՛ք և մեզ, առատաբար բաշխե՛ք ձեր շնորհներից՝ մշտապես իմանալով, որ դրանք հեղվելու են պատրաստ և ընկալունակ հոգիների վրա»:*

Ապա դիմելով Դպրեվանքի դասախոսներին՝ Հայր Սուրբը շեշտեց այն կարևորագույն դերը, որ վերապահված է նրանց մարդ կերտելու իրենց սրբազնասուրբ առաքելության մեջ.

*«Թե՛ այս դպրեվանքի, և թե՛ վաղվա հայաշխարհի, աստվածասեր հոգևորականի նկարագրի մեծանուն պատասխանատուները դուք եք՝ այն մշակները, որոնց ցանած սերմերն արդյունավորվելու են ի բարին կամ ի չարը, հետևաբար դուք եք կրողները սերնդապատրաստության՝ ձեր գիտությամբ, իմաստնությամբ և հանճարով»:*

Տեսուչ Հայր Սուրբն անկեղծ ու սրտաբուխ խոսքերով իր շնորհավորանքը և շնորհակալությունը հայտնեց ծնողներին, որոնք իրենց զավակներին վստահել են Դպրեվանքի խնամքին ու գուրգուրանքին՝ կամավորապես հանձն առնելով կտրել նրանց ընտանեկան ջերմ հարկից. *«Որևէ վայրկյան թող կասկածանքի մրրիկը չսարսափեցնի ձեզ, թե այս ճանապարհի վրա կորցրել եք ձեր զավակներին: Ընդհակառակը, դուք շահել եք նրանց ավելիով, քանզի ընծայել եք Աստծո, ազգի և հայրենիքի սուրբ սեղանին՝ որպես անարատ ընծայյալներ»:*

Եվ վերջապես, դառնալով ուսանողությանը՝ Հայր Սուրբն իր պատգամներն ու խորհուրդները փոխանցեց. *«Սիրելի՛ ուսանողներ, որ հանձն եք առել ապրել, ուսանել, աղոթել Սևանի այս հրաշագեղ վանական միջավայրում՝ իր բոլոր դժվարություններով ու դյուրություններով, թերություններով ու առավելություններով. պետք է հեռու վանեք այն ամենը, ինչը հուսահատեցնող է, ծուլացնող և պղծեցնող: Մեկամյա իմ բնակությունն այս միջավայրում և շփումը ձեզ հետ ապացուցել են, որ դուք հոգևոր-բարոյական ամենաբարձր կերտվածքով երիտասարդներ եք, ովքեր պատրաստ են զոհաբերության և ինքնընծայումի իրենց Եկեղեցու և Հայրենիքի համար»:*

Իր ելույթի վերջում Հոգեշնորհ Հայր Սուրբը անդրադարձավ նաև իր առաջիկա ծրագրերին. *«Այս տարի Դպրեվանքն իր ուսումնական շրջանն սկսում է 54*

*ուսանողներով: Կեցության պայմանները դժվարին են, ինչպես ինքներդ կարող եք դատել, սակայն նոր կառուցվող և Աստծո հույսով գալիք տարվա ավարտվող նոր մասնաշենքն ամբողջությամբ կփոխի այս իրավիճակը:*

*Ուրախությամբ պիտի հայտնեմ, որ ընթացքի մեջ է Դպրեվանքի «Ս. Առաքելոց» տարեգրքի պատրաստությունը և Աստծո կամքով պատրաստ կլինի հոկտեմբեր ամսվա վերջին, որ կարտացոլի թե՛ նախկին, և թե՛ ներկայիս ուսանողության ընդհանուր պատկերը՝ ամփոփելով իր մեջ անցած տասնամյա ճանապարհը:*

*Եվ վերջապես, Վեհափառ Հայրապետի բարեհաճ թույլտվությամբ և Աստծո առաջնորդությամբ դեկտեմբերի սկզբներին ծրագրել ենք մեծ շուքով նշել Դպրեվանքի 10-ամյա հոբելյանը: Աստված մեզ զորավիգ:*

*Այս պահին կրկին իմ աղոթքն եմ բարձրացնում դեպի մեր մարմնացյալ Տերը և հայցում մայրերի մայր և Սևանի վանուց հովանավոր Ս. Աստվածածնի բարեխոսությունը, որին ապավինած պիտի շարունակենք մեր կյանքը՝ Տիրոջ խոսքին հավատավոր նվիրումով՝ մշտապես մրմնջալով.*

*«Մայր Սուրբ, բարեխոսեա»»:*

Տեսչի խոսքից հետո Վազգենյան Դպրեվանքի փոխտեսուչ, Արժանապատիվ Տ. Մինաս քհն. Մարտիրոսյանը Մատթեոսի Ավետարանից ընթերցեց «Սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ 1-23): Ապա երգչախումբը կատարեց «Եկեղեցին հայկական», «Սուրբ, Սուրբ», «Ով Հայոց աշխարհ», «Ընտրեալդ Աստուծոյ» հոգեպարար երգերը, որոնք ընդմիջարկվում էին ուսանողների ասմունքներով:

Հանդիսության ավարտին ներկաներին իր օրհնությունը բաշխեց Գերաշնորհ Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը, որից հետո Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրեվանքի վերամուտի սույն հանդիսությունը եզրափակվեց Հայրապետական օրհներգով և Սրբազան Հոր «Պահպանիչ»-ով:

*ՎԱՉԻԿ ԴՊԻՐ ՋԱՐԳԱՐՅԱՆ*
*Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրեվանքի*
*Ե լսարանի սան*



# ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

*ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՆԱՆՅԱՆ*

## ԴՈԳՄԱՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Դոգմատիկ աստվածաբանությունը ընդհանուր աստվածաբանության համակարգում առանցքային տեղ է գրավում և քրիստոնեական աստվածաբանության համար նույն դերն է կատարում, ինչ սիրտը մարդկային մարմնի համար: Սա է թերևս այն հիմնական պատճառը, որով բացատրվում է աստվածաբանների մնայուն ուշադրությունը այս առարկայի նկատմամբ:

Ինչնէ, յուրաքանչյուր դավանաբանական ձեռնարկ, նախքան իր բուն նյութին անցնելը[1], պարտադիր կերպով անդրադառնում է «դոգմա» և կամ «դոգմատիկ հայտարարություն» կոչվող հասկացություններին: Առանց դրանց իմաստի հստակեց-

---

[1] Դոգմատիկ աստվածաբանության ուսումնասիրության հիմնական առարկաներն են.

| | |
|---|---|
| ա. Աստվածաբանական էպիստեմոլոգիա | (Theological epistemology) . |
| բ. Աստծո Վարդապետություն | (Doctrine of God) |
| գ. Արարչության Վարդապետություն | (Doctrine of creation) |
| դ. Աստվածաբանական մարդաբանություն | (Theological anthropology) |
| ե. Քրիստոսաբանություն և փրկչաբանություն | (Christology and soteriology) |
| զ. Մարեմաբանություն | (Mariology) |
| է. Հոգիաբանություն | (Pneumatology) |
| ը. Եկեղեցաբանություն | (Ecclesiology) |
| թ. Խորհուրդների վարդապետություն | (Sacramental doctrine) |
| ժ. Շնորհի վարդապետություն | (Doctrine of grace) |
| ժա. Վախճանաբանություն | (Eschatology) |

ման հնարավոր չէ խորամուխ լինել դավանաբանական աստվածաբանության ոլորտ, որն աչքի է ընկնում իր բացառիկ ճշգրտությամբ: Մինչույն ժամանակ հնարավոր չէ քննության ենթարկել այս բնագավառին վերաբերող որևէ խնդիր այնքան ժամանակ, քանի դեռ գիտական ուսումնասիրման հիմնական «գործիքը» հաստատված և կանոնակարգված չէ:

Հակառակ որ արդի աստվածաբանության մեջ «դոգմա» հասկացությունը, իբրև դավանաբանական աստվածաբանության հիմնական եզր, իր հաստատուն տեղն է գրավում և լիակատար շրջանառության մեջ է այս բնագավառի գրականության մեջ: Հայերենում այն ոչ միայն չի օգտագործվում, այլև բացակայում են այս նյութի հետ առնչվող ուսումնասիրությունները:

Ինչո՞ւ հայ աստվածաբանական ավանդությունը չորդեգրեց այս եզրը: Ինչո՞վ է պայմանավորված նման երևույթը:

Մեզ հուզող հարցի պատասխանը փորձեցինք գտնել Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի մոտ: Այս մասին նա խոսում է իր «Հայոց Եկեղեցին» արժեքավոր աշխատության մեջ:

Ինչպես հայտնի է, Օրմանյան Պատրիարքը հիշյալ գործը նախապես գրել է ֆրանսերեն[2]: Ապա, իբրև `բնական անդրադարձ ընթերցասեր հասարակայնության մեջ և հատկապես գիտնականների շրջանակներում նոր գրքի վերաբերյալ առաջացած հետաքրքրության, Պատրիարքն անձամբ ձեռնամուխ է լինում վերջինիս հայերեն թարգմանությանը:

Համեմատության մեջ դնելով նույն աշխատության ֆրանսերեն, հայերեն և անգլերեն թարգմանությունները՝ ականատես ենք լինում հետևյալ պատկերի.

| «L'ÉGLISE ARMÉNIENNE»[3] | «ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ»[4] | «THE CHURCH OF ARMENIA»[5] |
|---|---|---|
| • Les principes des Dogmes | • Դաւանական սկզբունքներ | • The pricipіes of dogmas |

[2] Առաջին անգամ «Հայոց Եկեղեցին» ֆրանսերենով հրատարակվել է 1910-ին, ապա նույն լեզվով վերահրատարակվել 1954-ին: Անգլերենով առաջին անգամ հրատարակվել է 1912-ին, վերահրատարակվել է 1955-ին: Թ. Ռունտի թարգմանությամբ 1913-ին առաջին անգամ թարգմանվում է ռուսերեն: Հայերենով հրատարակվել է 1911, 1912, 1913, 1947, 1952 թվականներին: Հայերենով այս գործն ունեցել է այլ հրատարակություններ ևս: Քրիստոնեությունը Հայաստանում իբրև պետական կրոն հռչակման 1700-ամյակի կապակցությամբ նախատեսվում է «Հայոց Եկեղեցին» աշխատության հունարեն և արաբերեն թարգմանությունները:

[3] «L'Église Arménienne», Malachia Ormanian, Deuxième Èdition, Antélias-Liban, 1954.

[4] «Հայոց Եկեղեցին» (այսուհետև՝ ՀԵ), Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Կոստանդնուպոլիս, 1911 թ.:

[5] «The Church of Armenia», Malachia Ormanian, translated from the French edition by G. Marcar Gregory, Edited by the Rigth Rev. Terenig Poladian S.T.M., Ph D., London, 1955.

| | | |
|---|---|---|
| • Le dogme | • Դավանություն | • Dogma |
| • Des dogmes | • Դավանական ճշմարտություններ | • Dogmas |
| • Des dogmes | • Հավատոյ դավանություններ | • Dogmas |
| • Le dogme | • Հավատամք | • Dogma |
| • Des dogmes | • Դավանական և պարտավորիչ ճշմարտություններ | • Dogmas |
| • Des dogmes | • Դավանական գաղտնիքներ և անթափանցելի ճշմարտություններ | • Dogmas |
| • Les dogmes | • Դավանական կետեր | • Dogmas |
| • Le dogme | • Դավանական վճիռ | • Dogma |
| • Les dogmes | • Էական դավանություններ | • Dogmas |

Ստացվում է այնպես, որ մենք ստիպված ենք օգտագործել թվով շուրջ 10 տարբեր բառեր և բառակապակցություններ՝ արտահայտելու համար մեկ հասկացության՝ դոգմայի իմաստը: Այն դեպքում, երբ չկա կանոնակարգված և որոշակի մոտեցում այս խնդրի նկատմամբ, բնականաբար սպասելի են թերըմբռնումները ու սխալմունքները: Պատկերացրեք, եթե վերոհիշյալ արտահայտությունների կողքին օգտագործեինք նաև հետևյալները.

| | |
|---|---|
| • Էական սկզբունքներ | • Des points essentiels |
| • Դավանական գաղտնիքներ | • Des mystères |
| • Հիմնական ճշմարտություններ | • Les vérités essentielles |
| • Դավանական կէտ կամ ճշմարտություն | • Fait dogmatique |
| • Ժողովական և դավանական որոշումի մը առարկայ | • Cet objet |

Այս դեպքում կատարյալ խառնաշփոթ կստեղծվի, քանի որ ըստ էության հնարավոր չի լինի հասկանալ, թե կոնկրետ համատեքստում հեղինակն ինչի մասին է խոսում: Անթույլատրելի է, որ դավանաբանական աստվածաբանության մեջ մեկ հասկացությունը հանդես գա 10 տարբերակով: Սա խոսում է տվյալ աստվածաբանական ավանդության՝ եզրաբանական անմշակության և համակարգման անկատարության մասին:

Սրանով է պայմանավորված նաև այն իրողությունը, որ Օրմանյան Պատրիարքի գրքի հայերեն թարգմանության տիտղոսաթերթում գրված է. «Նախապէս գաղղիերէն հրատարակեց եւ այժմ հայերէնի վերածեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան»: Ուշագրավ է, որ հեղինակն այստեղ գործածում է վերածել բառը՝ թարգմանել բառի փոխարեն: Ներածական մասում տրվում է նաև վերջինիս բացատրությունը. «Գաղղիերէնէ հայերէն վերածեղ ըսի մակագրին մէջ, եւ ոչ թարգմանել, վասնզի ստիպուած էի բացատրութեանց ոճը ոչեւս օտարելու ուղղուած ձեւերով պահել: Երբեմն ալ պէտք էր մերայնոց նուազ ծանօթ կէտերը աւելի յստակ կերպով պարզաբանել: Ասկէ զատ եւրոպական լեզուներ շատ մը ճշտաբանութիւններ ունին, որոնց համապատասխանը հայերէնի մէջ վճռուած չէ, եւ պէտք կ՚ըլլայ դարձուածներով բացատրել»[6]:

Փաստորեն, Օրմանյանը նույնպես գտնում է, որ այդ անհրաժեշտ ճշտաբանությունները մենք չունենք:

Թե՛ հունարեն, և թե՛ լատիներեն Նոր Կտակարանները պահպանել են dogma բառը և այն փոխանցել դավանաբանական աստվածաբանությանը, մինչդեռ հայերենում մենք այն թարգմանել ենք «հրաման» բառով:

Անշուշտ, կարելի է առարկել՝ ասելով, որ հայերենում առկա են բառեր: Օրինակ՝ «դաւանութիւն» կամ «դաւանանք», որոնք կարող են օգտագործվել *դոգմա* բառի իմաստով: Սակայն դա այդպես չէ, որովհետև «դաւանութիւն»-ը կամ «դաւանանք»-ը ավելի շատ *դոգմատիկա*-ին են համարժեք, քան թե վերջինիս միավոր՝ *դոգման*-ին: Բացի այդ, լեզվաբանության մեջ գոյություն ունեն causa finalis և causa efficiens կոչվող իրողությունները: Այսպես.

| | | |
|---|---|---|
| causa finalis | մարդկութիւն | դաւանութիւն |
| causa efficiens | մարդիկ | դաւանանք |

Ակնհայտ է, որ երկու բառերը բացի նրանից, որ ուրիշ իմաստ ունեն, նաև հոգնակի են և շատ ընդհանուր, հետևաբար նույնիսկ եթե ընդունենք, որ դրանք այդ իմաստն էլ են արտահայտում, ապա հարց է առաջ գալու տվյալ եզրերի եզակի ձևակերպման առնչությամբ, ուստի և դարձյալ հանգելու ենք «Հայոց Եկեղեցին» աշխատության մեջ տեղ գտած թերցուկին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդի աստվածաբանության մեջ *դոգմա* եզրը բոլորի կողմից ընդունված լինելով՝ արդեն իսկ գրավում է իր պատշաճ տեղը, որ Հայաստանյայց Եկեղեցու ներկայացուցիչները էկումենիկ երկխոսությունների և կամ միջեկեղեցական բանակցությունների ընթացքում[7] ազատ կերպով գործածում

---

[6] Տե՛ս ՀԵ, էջ 7:

[7] Բանակցություններ և երկխոսություններ, որոնք վարվում են իրոն կանոն օտար լեզուներով, լինի դա անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն և կամ որևէ այլ օտար լեզվով:

նն տվյալ եզրերը, ուստի առավել նպատակահարմար կլինի, որ այսօր մեր Եկեղեցու պաշտոնական դիրքորոշումն արտահայտենք այդ եզրի առնչությամբ: Անձնապես հակված ենք կարծելու, որ *դոգմա* բառի ընդունումը դրականորեն կանդրադառնա հայ աստվածաբանության վրա: Անշուշտ, դրա հետ միևնույն անհրաժեշտ է համընդհանուր ճշտել և քննել հայ հայրաբանական գրականության մեջ այս նյութի շուրջ արտահայտած մեր հայրերի բոլոր մտքերը: Այս առումով ստորև ներկայացված համառոտ պատմական ակնարկը հնարավորություն կտա պատկերացում կազմելու, թե *դոգմա* ասելով այսօր ի՞նչ է հասկացվում քրիստոնեական աշխարհում, և թե որոնք են կաթոլիկների, ուղղափառների և բողոքականների աստվածաբանական դիրքորոշումները, նույնություններն ու տարբերությունները այս կարևորագույն հարցի առնչությամբ:

## Ա. ԴՈԳՄԱՅԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Առաջին իսկ քայլերից, այսինքն՝ դոգմայի սահմանումից իսկ արդեն առանցքային տարբերություններ են նկատվում տարբեր աստվածաբանական ավանդությունների բանաձևումների միջև:

Օրթոդոքս ավանդության համաձայն, դոգման քրիստոնեական կրոնի հայտնությամբ տրված՝ դրական, անառարկելի ճշմարտություն է, որը վերաբերում է կրոնի ներքին էությանը՝ հավատքի ոլորտին, այսինքն՝ հայեցողական բնույթի խնդիր է, որը, միևնույն ժամանակ, փրկագործական հավատքի անփոփոխ օրենքն է:

Կաթոլիկ աստվածաբանությունը դոգման սահմանում է հետևյալ կերպ. Դոգման Աստծուց հայտնված, Առաքյալների կողմից Սուրբ Գրքի և կամ ավանդության միջոցով փոխանցված ճշմարտություն է, որը վերաբերում է հավատքին (faith) և բարոյականությանը (moral) և որը Եկեղեցու կողմից մատուցվում է հավատացյալներին՝ ընդունվելու համար:

Հայ աստվածաբանությունն այն ձևակերպում է այսպես. Դոգման Սուրբ Գրքից քաղված եզրակացություն է՝ Եկեղեցու հեղինակությամբ զորացած ճշմարտություն, որը պատկանում է հավատքի և կրոնի ներքին էությանը և որը Եկեղեցու կողմից իսկ հռչակվել է իբրև համապարտադիր սկզբունք[8]:

Այսպիսով նկատելի է, որ հայ և օրթոդոքս աստվածաբանական ավանդությունները համակարծիք են դոգմայի՝ ուղղակիորեն հավատքին և կրոնի ներքին էությանը պատկանելու իրողությանը: Մինչդեռ կաթոլիկ աստվածաբանները, ինչպես հասկացանք վերոնշված բանաձևումից, դոգմայի ոլորտին են հարաբերում նաև

---

[8] Բողոքական աստվածաբանությունը դոգման ձևակերպում է հետևյալ կերպ. Եկեղեցու դոգմաները քրիստոնեական հավատքի վարդապետություններն են՝ տրամաբանորեն բանաձևված և արտահայտված՝ գիտական և ջատագովական նպատակների համար:

բարոյականությանը վերաբերող հարցեր: Իրականության մեջ բարոյականությանը վերաբերող խնդիրները երբեք հանդես չեն եկել իբրև դավանաբանական աստվածաբանության ուսումնասիրության ոլորտում առարկա, այլ ուսումնասիրվել են բարոյական աստվածաբանության ոլորտում[9]: Անշուշտ, դոգմաները ունեն իրենց բարոյական կողմը (**нравственное приложение догмата**), սակայն դրանք ոչ մի կերպ դոգմա համարել չի կարելի: Բարոյական աստվածաբանությունը, որպես այդպիսին, սերտ կապի մեջ է դավանաբանական աստվածաբանության հետ, քանզի քրիստոնեական բարոյականությունը հիմնվում և հետևեցվում է դոգմաներից, սակայն բարոյական աստվածաբանության ուսումնասիրման առարկան դոգման չէ: Ավելին, եթե դավանաբանական աստվածաբանությունը մեկնում է Աստծո, Նրա գործերի և աշխարհի հանդեպ ունեցած Իր հարաբերություններին վերաբերող տեսությունները, ապա բարոյական աստվածաբանությունն ավելի շատ ուսումնասիրում է քրիստոնյայի հարաբերությունները իր Արարչի, շրջապատող աշխարհի (ներառյալ մարդկանց և բնությունը) և ինքն իր նկատմամբ:

## Բ. ԴՈԳՄԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Հունարեն δόγμα բառը ծագում է δοκέω բայից, որը նշանակում է «մտածել», «ենթադրել», «հավատալ»: Այն հստակորեն տարբերվում է իրեն հարազատ δογξα բառից, որը նշանակում է «լույս», «փառք», «համբավ», այսինքն՝ անկայուն, շարժական մի բան: Այսինքն՝ առաջինն արտահայտում է վերջնականապես հաստատված և որոշված մի բան, որը կրոնական հողի վրա դառնում է աներկբա հավատքի առարկա:

Հայերեն «դաւան» արմատն իր հերթին ազգակից է եբրայերեն և ասորերեն «դին» բառին, որը նշանակում է «հավատք»:

*Դոգմա* բառի ընդհանուր պատմական ընթացքը բաժանվում է հիմնական չորս շրջանների.

### 1. ԱՆՏԻԿ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

Անտիկ ճարտասանության մեծագույն դեմքերից մեկի՝ Ցիցերոնի մոտ dogma էր կոչվում այն հաստատուն տեսական ուսմունքը, որը փիլիսոփայության ասպարեզում անվիճարկելի ճշմարտության հեղինակություն էր վայելում. «Sapientia neque de se ipsa dubitare debet, neque de suis decretis, quae philosophi vocant do,gmata quo-

---

[9] Հայտնի է, որ ինչպես դոգմաները են վերաբերում քրիստոնեական դավանանքին, այնպես էլ կանոնները ու օրենքները վերաբերում են քրիստոնեական բարոյագիտությանը:

rum nullum sine scelere prodi poterit»[10]: Հին հույն պատմիչ Քսենոֆոնտի լեզվամտածողության մեջ *դոգմա* բառով արտահայտվում են գլխավոր ռազմական հրամանատարության այն կարգադրությունները, որոնք ենթակա էին անհապաղ և անառարկելի կատարման թե՛ սպայակույտի, և թե՛ պարզ զինվորական դասի կողմից[11]: Հերոդիանես պատմիչի մոտ «դոգման» նշանակում է հռոմեական սենատի որոշում, որը համապարտադիր էր հռոմեական ողջ ժողովրդի համար[12]:

## 2. ՀԻՆԿՏԱԿԱՐԱՆՑԱՆ ԾՐՋԱՆ

Հինկտակարանյան շրջանում գերիշխում են *դոգմա* բառի իմաստային այն կիրառությունները, որոնք հատուկ էին անտիկ փիլիսոփայության շրջանին:

Այսպես, Յոթանասնից թարգմանության մեջ Դանիելի մարգարեությունում (Դան. Բ 13, Գ 10 և Զ 9), Եսթերի գրքում (Գ 9) և Մակաբայեցիների Բ գրքում (Բ Մակ. Ժ 8, ԺԵ 36) δόγμα էին կոչվում արքայական այն հրամանները, որոնք ենթակա էին անհապաղ կատարման, ինչպես նաև պետական կամ նույն թագավորական օրենքները, որոնք պարտադիր էին պետության անխտիր բոլոր հպատակների համար:

## 3. ՆՈՐԿՏԱԿԱՐԱՆՑԱՆ ԾՐՋԱՆ

Նորկտակարանյան շրջանն իր հերթին բաժանվում է երկու փուլերի.

ա) Առաջին փուլում դեռևս տիրում է *դոգմա* բառի անտիկ փիլիսոփայական ընկալումը: Օրինակ՝ Ղուկաս Ավետարանիչը *դոգմա* է կոչում Օգոստոս կայսեր մարդահամարի հրամանը, որը պարտադիր էր բոլորի համար (Ղուկ. Բ 1): Պողոս Առաքյալը կողոսացիներին (Կող. Բ 14) և եփեսացիներին (Եփես. Բ 15) ուղղված նամակներում δόγμασι բառով է կոչում արդեն Մովսեսի օրենքները:

բ) Երկրորդ փուլում առաջին անգամ է, որ Աստվածաշունչ Մատյանում *դոգմա* բառն օգտագործվում է քրիստոնեական վարդապետական ճշմարտության այժմյան իմաստով: Հետագայում հայրերը հիմնվեցին հենց այս վկայության վրա: Խոսքը հետևյալ վկայության մասին է. «Իբրև անցանէին ընդ քաղաքսն, աւանդէին նոցա պահել զհրամանսն (δόγματα) պատուիրեալս յառաքելոցն եւ յերիցանցն, որք յԵրուսաղէմ» (Գործք ԺԶ 4): Անշուշտ պարզ է, որ խոսքն այստեղ սրանից մեկ գլուխ առաջ Գործքում նկարագրված Երուսաղեմում գումարված առաջին Առաքե-

[10] Quest. acad. lib. IV. c. 9 (ed. Amstelaed.) 1724, T. II, p. 574.

[11] Αναβασις, lib. III. cap. 3. n. 5. Lib. VI, cap. 6. n. 8.

[12] Hist. Herodian Lib. VII. cap. 10. n. 8.

յական ժողովի մասին է (Գլուխ ԺԵ), որտեղ առաքյալները հավաքվեցին և քննեցին բոլոր այն հարցերը, որոնք այս կամ այն կերպով երկբայության և տարակուսանքի առիթ էին տալիս: Եվ այդ ժողովից հետո, երբ խնդրո առարկա հարցերը ստանում են բոլորի կողմից հաստատված իրենց վերջնական տեսքը, դրանք դադարում են այլևս սոսկ օրակարգում քննված հարցեր լինելուց՝ վերածվելով դոգմաների: Այստեղից է, որ առաքյալները սփռվելով Պաղեստինից դուրս, անկախ իրենց գտնված աշխարհագրական տեղանքից և միջավայրից՝ ավետարանում էին միևնույն ճշմարտությունները ու նորադարձ քրիստոնյաներին ավանդում Աստծուց տրված և իրենց՝ առաքյալների կողմից հաստատված և պարզաբանված քրիստոնեական դոգմաները:

4. ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԻ ՇՐՋԱՆ

Այս շրջանը ևս, նորկտակարանյան շրջանի նման, բաժանվում է երկու փուլերի.

ա) Առաջին փուլում որոշ եկեղեցական հայրերի հեղինակային աշխատություններում դեռևս նկատվում է *դոգմա* բառի հնավանդ գործածությունը: Օրինակ՝ Իսիդորոսն ու Օգոստինոսը Սոկրատեսին կոչում էին ատտիկական դոգմաների հիմնադիր (ὁ τῶν ἀττικῶν δόγματων νομοθέτης)[13], իսկ Պլատոնի և ստոիկների ուսմունքը՝ դոգմաներ[14]:

բ) Երկրորդ փուլում վերջնականապես ձևավորվում է դոգմայի արդիական աստվածաբանական կաղապարը: Սուրբ Իգնատիոս Աստվածազգյացը դոգմային տալիս է ավետարանական վարդապետության[15], իսկ Կղեմես Երուսաղեմացին՝ քրիստոնեական ճշմարտության[16] նշանակությունը: Սուրբ Գրիգոր Նազիանզացին *դոգմա* ասելով հասկանում է հավատքի կարևորագույն այն ճշմարտությունները, որոնք պարտադիր կերպով պետք է որ ընդունվեն հավատացյալների կողմից[17]: Բարսեղ Մեծը *դոգման* κηρογμα=*քարոզ* բառի հակառակ իմաստով է օգտագործում՝ առաջինի տակ (դոգմա) հասկանալով քրիստոնեական վարդապետության խորին ըմբռնումը, իսկ երկրորդի տակ՝ ժողովրդական պարզ քարոզը: Նա ի մասնավորի *դոգմա* է համարում Քրիստոսի Անձի մասին ուսմունքը՝ այն աստվածաբանության դոգմա (τὸ δόγμα τῆς θεολογίας) կոչելով[18]: Գրիգոր Նյուսացին *դոգ-*

---

[13] Epist. lib. I epist. 11. in Patr. curs. compl. greac. T. LXXVIII, col. 185.

[14] Epist. lib. IV. epist. 91. Ibid. col. 1153 և Cont. Cels. lib. VIII. n. 59.

[15] Ad Magnes. cap.13.

[16] Catech. IV. n. 2. in Patr. curs. compl. graec. T. XXXIII. col. 456.

[17] Orat. 40. in sanct. baptism. n. 45. in Patr. curs. compl. graec. T. XXXVI col. 424.

[18] Homil. VI in Hexamer. n. 2. in Patr. curs. compl. graec. T. XXIX. col. 120.

*մա* է կոչում Սուրբ Երրորդության վարդապետությունը (τὸ τῆς πίστεως δόγμα)[19]։ Սուրբ Հովհան Ոսկեբերանը *դոգմա* ասելով հասկանում է քրիստոնեական վարդապետությունը[20], իսկ Վիկենտիոս Լիրինացին այն ամբողջությամբ նույնացնում է եկեղեցական վարդապետության հետ (catholicum dogma, id est universalis ac vetusta fides)[21]։

Այսպիսով ամփոփելով *դոգմա*-ի պատմական զարգացման վերոհիշյալ չորս շրջանները, ստանում ենք հետևյալ պատկերը.

ա) Դոգման անհակաճառելի աստվածային ճշմարտություն է՝ տրված Աստվածային Հայտնության միջոցով, որի պատճառով էլ այն կոչվում է.

Աստվածային (δόματα Θεῖα)[22]

Տերունական (Ενουδάζετε βεβαιωθῆναι ἐν τοῖς δόγμασιν τοῦ Κυρίου)[23]

Ավետարանական (Δόγματα τῶν ἐυαγγελίων)[24]

Առաքելական (ἀποστολικά)[25]

Այն կոչվում էին նաև՝

Աստծո դոգմաներ (δόγματα Θεοῦ)[26]

Քրիստոսի դոգմաներ (Τὰ Ἰησοῦ Ξριστοῦ δόγματα)[27]։

բ) Դոգման ճշմարտություն է, որը վերաբերում է կրոնի ներքին էությանը, այսինքն՝ տեսական կամ հայեցողական ուսմունքի ճշմարտություն է, որով տարբերվում է կյանքի օրենքներից կամ քրիստոնյայի պրակտիկ գործունեությունից։

գ) Աստվածային ծագում ունենալով՝ դոգման Եկեղեցու կողմից սահմանվող և բացահայտվող ճշմարտություն է, որի համար այն իբրև կանոն կոչվում է նաև՝

Եկեղեցու դոգմաներ (τὰ τῆς ἐκκλησιας δόγματα)[28], (Δόγματα ἐκκλησιαστικὰ)[29]

Եկեղեցու խոսքեր (ἐκκλησιαστικοὶ λόγοι)[30]

---

[19] Epist. V, ad Sebast. in Patr. curs. cmopl. greac. T. XLVI, col. 1032.

[20] In Cap. I Genes, homil. 11, n. 5 in Patr. curs. compl. greac. T. LIII, cl. 31.

[21] Comonitor. prim. n. 18. in Patr. curs. compl. lat. T. L, col. 664.

[22] Theodoret. Epist. ad Iohan. Antioch.

[23] Ignat. ad Ephes. § 13.

[24] Athanas. in Matth. serm. IX.

[25] Theodoret. Histor. Eccles. 1, 2. 7.

[26] Orig. in Matth. T. XII. n. 23; Clem. Alex. Strom. III. 2; VI, 15.

[27] Ignat. ad Madnes. XIII; Mortyr. S. Iustin. n. IV; Basil. in Psalm XLIV, n. 4.

[28] Gregor. Nyss. contra Evnom. orat. XII. in tom. III, page. 815, Paris, 1638; Chrysost. homil. VI in epist. ad Philip.

[29] Cyril. Alex in Amos. II, 7; VI, 2; Chrysost. in Matth. XXI, 23.

[30] Orig. in Matth. T. XI, n. 17; T. XII, n. 23.

Եկեղեցու դոգմաներ (τα ἐκκλησιαστικὰ δόγματα)[31], (ἐκκλησιαστικοὶ)[32]
Եկեղեցապատկան դոգմաներ (οἱ ἀπὸ τῆς ἐκκλησίας)[33]:

## Գ. ԴՈԳՄԱՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԻՐԵՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Օրթոդոքս աստվածաբանները դոգմաները բաժանում են հետևյալ չորս տեսակների.

ա) Ընդհանուր կամ հիմնական և մասնավոր.

Ընդհանուր և հիմնական են կոչվում այն դոգմաները, որոնք իրենց մեջ պարունակում են մեկից ավելի այլ դոգմաներ, կամ էլ առնվազն հիմք են ծառայում վերջիններիս համար: Այս կարգի դոգմաներից են «Մասունք Հաւատոյ»–ները[34]:

Մասնավոր են կոչվում այն դոգմաները, որոնք բխում կամ հիմնվում են ընդհանուր կամ հիմնական դոգմաների վրա:

բ) Անըմբռնելի կամ մաքուր (pura) և ըմբռնելի կամ խառը (mixtra).

Անըմբռնելի և մաքուր են կոչվում այն դոգմաները, որոնք հիմնվում են բացառապես Աստվածային Հայտնության վրա և անըմբռնելի են մեր բանականության համար:

---

[31] Cyril. Alex. Comment in Amos, cap 2. in Patr curs. compl. graec. T. LXXI, col. 441; Vicent. Lir. Commonit. I. n. 25. in Patr. curs. compl. latin. T.L, col. 673.

[32] Greg. Nyss. contra Evnom. orat. II, in Opp. T. II, page 481 ed Morel.

[33] Origen. contra cels. V, 61.

[34] «Մասունք Հաւատոյ»—ներն իրենցից ներկայացնում են քրիստոնեական հավատքին վերաբերող կարևորագույն մասերը, որոնք նաև կոչվում են հոդվածներ: «Մասունք Հաւատոյ»—ների ստույգ թիվն էլ տատանողական է. Եկեղեցիների մի մասն ընդունում է 12 թիվը , մյուս մասը՝ 10 թիվը, իսկ մի մասն էլ՝ 8 թիվը: Այսպես. Կաթոլիկ Եկեղեցին հավատո մասեր է համարում Առաքելական Հանգանակի բոլոր 12 հոդվածները , իսկ մեր Եկեղեցին՝ հետևյալները.

ա. Աստծո գոյությունը

բ. Աստվածային կատարելությունները

գ. Աստվածային Անձերի Երրորդությունը

դ. Արարչագործությունը

ե. Նախախնամությունը

զ. Աստվածորդու մարդեղությունը

է. Քրիստոսի Եկեղեցին և նրա խորհուրդները

ը. Շնորհաբաշխությունը

թ. Մեռելների հարությունը

ժ. Վերջին դատաստանը:

Ինչպես կարելի է նկատել, սրանցից յուրաքանչյուրը կարող է պարունակել և պարունակում է այլ դոգմաներ:

Ըմբռնելի և խառն են կոչվում այն դոգմաները, որոնք հիմնվում են ոչ միայն Աստվածային Հայտնության, այլև մեր բանականության վրա, որով և ըմբռնելի են դառնում մեր մտածողության համար:

գ) Բացահայտված (explicita) և չբացահայտված (implicita).

Բացահայտված են կոչվում այն դոգմաները, որոնք թե՛ Աստվածային Հայտնության, և թե՛ Եկեղեցու կողմից մանրամասնորեն բացահայտվում, հստակեցվում և մեկնաբանվում են: Այսպիսի դոգմա է, օրինակ, Սուրբ Երրորդության դոգման:

Չբացահայտված են կոչվում այն դոգմաները, որոնք մանրամասնորեն հայտնըրված և կամ բացահայտված չեն Աստվածային Հայտնության և Եկեղեցու կողմից: Այսպիսի դոգմաներից է չար հրեշտակների անկման դոգման, քանզի գիտենք, որ Աստծուց հեռացած և երես թեքած, հետևաբար նաև չարացած հրեշտակներն ընկել են երկնքից, սակայն անկմանը նախորդող և հետագա մանրամասները մեզ հայտնի չեն:

դ) Ընդհանուր կամ հատուկ և տարբերակիչ

Ընդհանուր են բոլոր այն դոգմաները, որոնք հատուկ են բոլոր քրիստոնեական եկեղեցիների համար, տարբերակիչ են այն դոգմաները, որոնք հատուկ են միմիայն օրթոդոքս Եկեղեցու համար:

• • •

Կաթոլիկ աստվածաբանները, նախքան բուն դոգմայի բաժանումը, ըստ տեսակների առանձնացնում են հայտնված ճշմարտությունները, որոնք իրենց հերթին կա՛մ պոտենցիալ դոգմա են, կա՛մ էլ որպես հիմք են ծառայում դոգմաների համար, որով հայտնված ճշմարտությունները լինում են հետևյալ տեսակների.

Ա. Ձևական (formal) և բացահայտ (explicit) հայտնված ճշմարտություններ.

Ձևական բացահայտված է կոչվում այն ճշմարտությունը, որի ճշմարտացիությունը խոսողն իր խոսքի հեղինակությամբ է ցանկանում հաստատել: Իսկ Հայտնությունը ձևական ու բացահայտ է համարվում, երբ արտահայտված է լինում հստակ եզրերով: Այս կարգի դոգմաներ են «Առաքելական Հանգանակի» հոդվածները, որոնք պաշտոնապես հայտնվել և մեկնաբանվել են Եկեղեցու կողմից[35]:

---

[35] Այստեղ հստակ կերպով նկատվում է կաթոլիկ աստվածաբանների կողմից Ռուֆինոս պատմիչի՝ հռոմեական հանգույն «Առաքելական Հանգանակ» անվան տակ հայտնի հավատո դավանության վերաբերյալ պահպանված հիշատակությունը արդարացնելու միտումը, թե իբրև «Առաքելական Հանգանակը» իր այժմեական տեսքով հայտնվել է Աստծո կողմից և ձևակերպվել Եկեղեցու, այն է՝ առաքելական դասի կողմից: Անշուշտ, Ռուֆինոսի այս միտքն արտառոց ոչինչ չէր հարուցի, եթե հատուկ կերպով չշեշտեր, որ հռոմեական Հավատո Հանգանակն էր ընկած առաքյալների կողմից ղեկավարվող Եկեղեցու հիմքում, որով և մեկ անգամ ևս շեշտվում էր Հռոմեական Եկեղեցու առաջնությունն ու գերակայությունը:

Բ. Ձևական (formal), բայց ոչ բացահայտորեն (implicit) հայտնված ճշմարտություններ.

Ճշմարտությունը ձևական, բայց ոչ բացահայտորեն հայտնված է կոչվում, երբ իր արտահայտման լեզուն անորոշ է, հետևաբար և անհրաժեշտ է լինում կիրառել

---

Իսկ Ռուֆինոսի, որն, ի դեպ, հռոմեացի պատմիչ է, հաղորդած տեղեկությունը հետևյալն էր. Երուսաղեմում գումարված առաջին Առաքելական ժողովի վերջում առաքյալները, նախքան բաժանվելը, բանավոր կերպով կազմում են, այսպես կոչված, «Առաքելական Հանգանակը»: Այն միտումնավոր կերպով գրի չի առնվում, որպեսզի հետագայում չխեղաթյուրվի քրիստոնեության հակառակորդների կողմից, այլ սերնդե-սերունդ փոխանցվի բանավոր ճանապարհով: «Առաքելական Հանգանակը» հիմնականում գործածվում էր մկրտության և այլ ծիսակատարությունների ժամանակ, որտեղ պահանջվում էր հավատո դավանության խոստովանությունը, ինչպես նաև այն պարագաներում, երբ ցանկանում էին ճշտել որևիցե մեկի հավատքի ուղղափառ ընթացքը:

Այսպիսին է «Առաքելական Հանգանակն» իր այսօրվա տեսքով.

| | |
|---|---|
| Credo in Deum patrem omnipotentem; | I believe in God the Father almighy; |
| et in Christum Iesum filium eius unicum, | and in Christ Jesus His only Son, our Lord, |
| dominum nostrum, | Who was born from the Holy Spirit and the |
| qui natus est de Spiritu sancto et Maria virgine, | Virgin Mary, |
| qui sub Pontio Pilato crucifixus est et sepultus, | Who under Pontius Pilate was crucified and |
| tertia die resurrexit, | buried, |
| a mortuis, | on the third day rose again from the dead, |
| asendit in caelos, | ascended to heaven, |
| sedet ad dexteram patris, | sits at the right hand of the Fater, |
| unde venturus est iudicare | whence He will come to judge the |
| vivos et mortuos; | living and dead; |
| et in Spiritum sanctum, | and in the Holy Spirit, |
| sanctam ecclesiam, | the holy Church, |
| remissionem peccatorum, | the remmision of sins, |
| carnis resurrectionem. | the resurrection of the flesh. |

Բնագրերը քաղված են J.N.D Kelly-ի «EARLY CHPISTIAN CREEDS» գրքից, second edition, London, 1960, page 102.

Այս աշխատության սահմաններում մենք չենք ցանկանում հատուկ կերպով կանգ առնել Ռուֆինոսի վերոհիշյալ պատմական վկայության վրա, ասենք միայն, որ պատմիչի՝ Առաքելական ժողովի մասին հաղորդած մանրամասները մասամբ համապատասխանում են ճշմարտությանն այն առումով, որ ժողովում իրոք քննարկվել են մի շարք հարցեր: Սակայն մի բան պարզ է, որ եթե ժողովական քննարկումների արդյունքում նույնիսկ ընդունել է ինչ-որ մի բան, ապա վստահաբար դա «Առաքելական Հանգանակը» չի կարող լինել:

Բացի այդ, հաշվի առնելով 2-րդ և 3-րդ դարերի Եկեղեցու հայրերի լռությունը, քանի որ վերջիններիս ընդհանրապես ծանոթ չեն եղել այս Հանգանակին և հանգանակաբանության ու դավանաբանական աստվածաբանությամբ զբաղվող հեղինակների հիմնավոր և պատճառաբանված կարծիքները, ակնհայտ է, որ Ռուֆինոսի տեղեկությունները պարզապես չեն համապատասխանում ճշմարտությանը:

մեկնաբանման հատուկ կանոններ՝ հայտնության մեջ առկա ճշմարտությունը բացահայտելու համար:

Աստծո կողմից ձևական, բայց ոչ բացահայտորեն հայտնված ճշմարտությունները, այսպես ասած, այն դոգմաներն են, որոնք բանաձևվել են Եկեղեցու կողմից, ինչպես, օրինակ, Պապի անսխալականության, Անարատ հղության և այլ նման կարգի դոգմաները:

Գ. Միայն տեսականորեն (virtualy) հայտնված ճշմարտություններ.

Միայն տեսականորեն հայտնված են կոչվում այն ճշմարտությունները, որոնք չեն հաստատվում խոսողի խոսքերով, սակայն նրանց ճշմարիտ լինելը հետևում և եզրակացվում է պաշտոնապես հայտնված մեկ այլ ճշմարտությունից:

Այս կարգի ճշմարտությունների վերաբերյալ կաթոլիկ աստվածաբանները տարբեր կարծիքներ ունեն.

ա) Ոմանք գտնում են, որ տեսականորեն հայտնված ճշմարտությունները պատկանում են հավատքի մասերին (հավատքի մասեր այստեղ լայն իմաստով է ասված), որոնք սահմանվում են Եկեղեցու կողմից և դոգմա են դառնում:

բ) Ըստ ոմանց, դրանք, նախքան իրենց պաշտոնական սահմանումը, չեն պատկանում հավատքի մասերին և դոգմա են դառնում միմիայն Եկեղեցու կողմից սահմանվելուց հետո:

գ) Ուրիշներն էլ գտնում են, որ դրանք ո՛չ պատկանում են հավատքի մասերին, ո՛չ էլ դոգմա են դառնում սահմանվելուց հետո, սակայն դրանք կարող են կոչվել եկեղեցական դոգմաներ (ecclesiastical dogmas):

Հայտնված ճշմարտությունների նախնական այս բաժանումները կատարելով՝ հռոմեադավան աստվածաբանները բուն դոգման բաժանում են հետևյալ տեսակների.

ա) Ընդհանուր (General) և հատուկ (Special).

Ընդհանուր են կոչվում այն դոգմաները, որոնք սկիզբ են առնում Աստվածային Հայտնությունից և առաքյալների միջոցով փոխանցվում ողջ մարդկությանը:

Հատուկ են կոչվում այն դոգմաները, որոնք անհատական հայտնության արդյունք են: Սրանք, բառի բուն իմաստով, դոգմաներ չեն, քանզի ո՛չ փոխանցվել են առաքյալներից, ո՛չ էլ բանաձևվել են Եկեղեցու կողմից, հետևաբար և պարտադիր չեն հավատացյալների ընդունման համար:

բ) Աստվածային (Divine or material) և Կաթոլիկ (Catholic or formal).

Աստվածային են կոչվում այն դոգմաները, որոնց վերացարկումն արվում է Եկեղեցու կողմից նախապես արված իրենց սահմանումից, այսինքն՝ երբ դրանք հըստակ կերպով համարվում են հայտնված:

Կաթոլիկ են կոչվում այն դոգմաները, որոնք համարվում են և՛ Աստծուց հայտնըված, և՛ Եկեղեցու կողմից բանաձևված:

գ) Մաքուր (pure) և խառը (mixed).

Մաքուր են կոչվում այն դոգմաները, որոնք հասկացվում են միմիայն Աստվածային Հայտնության շնորհիվ: Այս կարգի դոգմաներից է Սուրբ Երրորդության, Մարդեղացման և այլ դոգմաներ:

Խառն են կոչվում այն դոգմաները, որոնք կարող են հասկացվել նաև մարդկային բանականությամբ, ինչպես օրինակ՝ Աստծո գոյության և ստորոգելիների դոգմաները:

դ) Հանգանակային (simbolic) և ոչ-հանգանակային (non-simbolic).

Հանգանակային են կոչվում այն դոգմաները, որոնք պարունակվում են Եկեղեցու կողմից պաշտոնապես ընդունված Հավատո Հանգանակներում: Մնացյալ բոլոր դոգմաները, որոնք Հանգանակներից դուրս են, ոչ-հանգանակային են կոչվում:

ե) Եվ, վերջապես, դոգմաները զանազանվում են ըստ իրենց անհրաժեշտության տարբեր աստիճանների:

1) Այսպես. կան դոգմաներ, որոնց հանդեպ հավատքը պարտադիր է փրկվելու համար.

2) Կան դոգմաներ, որոնց հավատալը պայմանավորված է Աստվածային հրահանգով.

3) Կան որոշ դոգմաներ, որոնք պետք է բացահայտորեն իմացվեն և դավանվեն.

4) Եվ կան դոգմաներ, որոնց նկատմամբ պարզ հավատքն արդեն իսկ բավարար է:

• • •

Ամփոփելով մեր հոդվածը անհրաժեշտ ենք գտնում նշել, որ՝

ա. Մեր Եկեղեցին կարիք ունի հստակ և ճշգրիտ մոտեցման՝ դոգմայի նման կարևորագույն եզրի առնչությամբ, և մեր կարծիքով՝ դոգմա եզրի որդեգրումը դրականորեն կանդրադառնա հայ աստվածաբանության վրա:

բ. Մենք հույս ունենք, որ այս համառոտ ակնարկը աստվածաբանությամբ զբաղվող մասնագետների ուշադրությունը կհրավիրի հիշյալ խնդրի վրա: Այն նաև կարող է ծառայել իբրև նախահիմք առավել հիմնավոր ուսումնասիրության համար, որի մեջ պարտադիր կերպով վերլուծության ենթարկված կլինեն հայ հայրաբանական գրականության մեջ առկա բոլոր այն վկայությունները, որոնք այսպես կամ այնպես առնչվում են այս խնդրի հետ, ինչպես նաև, ելնելով առկա նյութի ընձեռած հնարավորությունից, տրված կլինեն դոգմայի համապատասխան բաժանումներն ու դասակարգումները:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայոց Եկեղեցին», Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Կոստանդնուպոլիս, 1911 թ.:
2. «Համաբարբառ Հին և Նոր Կտակարանաց», Թադէոս վրդ. Աստուածատրեան, Երուսաղէմ, 1895 թ.:
3. "Энциклопедический словарь", Брокгаузъ и Ефронъ, С.-Петербург, 1893, том XX.
4. "История догматов", Адольф Гарнак, С.-Петербург, 1890, том VI.
5. "Философский словарь", Москва, 1986.
6. "Опыт Православнаго Догматического Богословия", Архимандрит Сильвестр, Киев, 1884.
7. "Православное Догматическое Богословие", Архимандрит Макарий, С.-Петербург, 1850.
8. "Systematic Theology", Wolfhart Pannenberg, USA, 1991.
9. "A short history of Christian Doctrine", Bernhard Lohse, translated by F. Ernest Stoeffler, Philadelphia, 1966.
10. "The Christian Tradition, a history of the development of dogma", Jaroslav Pelikan, Chicago, 1971-1989.
11. "An essay on the development of Christian Doctrine", John Henry Newman, Harmondsworth: Pengine Books, 1974.
12. "Handbook of Catholic Theology". Edited by Wolfgang Beinert & Francis Schussler Fiorenza, Crossroad, New York, 1995.
13. "A Patristic Greek Lexicon", G.W.H. Lampe, Oxford,1961.
14. "A Concordance to the Septuagint", Edwin Hatch & Henry A. Redpath, Graz-Austria, 1954.
15. "The Church of Armenia", Malachia Ormanian, translated from the French edition by G. Marcar Gregory, edited by the rigth rev. Terenig Poladian S.T.M., Ph.D., London, 1955.
16. "Early Christian Creeds", J.N.D.Kelly second edition, London, 1960.
17. "L'Église Arménienne", Malachia Ormanian, Deuxième Èdition, Antélias-Liban, 1954.

*ՄԻՍԱՔ Հ. ԺԵՎԱՀԻՐՃՅԱՆ*

# ՍՐԲՈՒՀԻ ԹԵԿՂԻ

Էջմիածնի Մայր Տաճարի հյուսիսային ճակատին, հյուսիսային թևից ձախ (արևելք), լուսամուտի և թևի միջև գտնվող տարածքում, պահպանվել է քրիստոնեության տարածման վաղ շրջանը պատկերող կոմպոզիցիոն մի քանդակ, ուր ներկայացված են Սրբուհի Թեկղիի և Ս. Պողոս առաքյալի կերպարները: 65x47 սմ չափերով քարե սալիկի վրա քանդակված կոմպոզիցիան բաղկացած է երկու մասերից: Ձախ կողմի կես մասում, կամարի տակ, դիմացից պատկերված է Ս. Թեկղիի կերպարը, կանգնած դիրքով: Աջ կողմի մյուս կեսում, կամարի տակ, ձախ կողքից պատկերված է Ս. Պողոս առաքյալը, աթոռին նստած դիրքով: Ոտքերի տակ կա հենափայտ:

Սրբուհի Թեկղին հագած է մինչև ոտքերի թաթերը իջնող պարեգոտ: Նրա գլխի շուրջ հունարեն տառերով գրված է ΘΕΚΛΑ: Իսկ Ս. Պողոսի գլխի շուրջ գրված է ΠΑUΛΟC:

Կոմպոզիցիայի վերնի մասը ավարտվում է երկու կամարներով, որոնք նստած են երկու որմնամույթերի և մեջտեղի մույթի վրա: Ընդհանուր հորինվածքը հիշեցնում է եկեղեցու խորան:

Հիշյալ քանդակից դեպի ձախ գտնվում է Մայր Տաճարի լուսամուտներից մեկը: Դրանից էլ դեպի ձախ (արևելք), պատի վրա, պահպանվել է հռոմեական ոճով ձևավորված հունատառ վիմագիր մեմորիալ մի արձանագրության սալիկ:

Երկու սալիկների հունարեն գրերը հուշում են այն մասին, որ սրանք քանդակվել են IV դարում, երբ Ս. Մեսրոպ Մաշտոցը դեռ չէր ստեղծել հայերի, վրաց և աղվանների համար այբուբեն (404 թ.), սակայն Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունվել էր (301 թ.): Այս առումով մեծ արժեք են ներկայացնում քրիստոնեության տարածման վաղ շրջանի հիշյալ քանդակները:

Սրբուհի Թեկղին եղել է Քրիստոսի առաքելուհին և Ս. Պողոսի աշակերտուհին: Քրիստոնեության տարածման վաղ շրջանի հոգևորականները շատ են գովաբանում Ս. Թեկղիին և գտնում են, որ նա գերազանցն է եղել կուսանաց մեջ: Եղել է պարկեշտության մի տիպար, դիմացել է բազմապիսի կտտանքների և չարչարանքների:

Սրբուհի Թեկղին Փոքր Ասիայի Լիկոնացվոց երկրի Իկոնիա (այժմ՝ Կոնիա) քաղաքի մեծատուն և հեթանոս այրի մի կնոջ կույս դուստրն էր: Նշանված էր Թեմերոս կամ Թամյուրիս անունով մի իշխանի հետ: Երբ Ս. Պողոսը քրիստոնեություն

քարոզելու համար գալիս է Իկոնիա. իջևանում է Թեկղիի տան մոտ ապրող մի մարդու տանը. ուր սրբուհին լսում է առաքյալի քարոզները. ապա ընդունում քրիստոնեություն:

Ավանդության համաձայն. Իկոնիայում Պողոսին բանտարկում են քրիստոնեություն քարոզելու մեղադրանքով: Ս. Պողոսի և Ս. Թեկղիի դեմ թշնամանում են Իկոնիայի ժողովուրդը. Թեկղիի մայրն ու նշանածը: Դատարանում դատավորը վճռում է Ս. Պողոսին գանահարել և քաղաքից արտաքսել. իսկ Թեկղիին հորդորում է վերադառնալ մոր և նշանածի մոտ: Սակայն Ս. Թեկղին աներեր է մնում իր հավատի մեջ: Դատավորը վճռում է Թեկղիին խարույկով այրել քաղաքի թատրոնում. քանի որ հրաժարվում է իր խոսնեցյալից ու գնում է օտար այրի (Ս. Պողոսի) ետևից: Քաղաքի զորքը և բնակիչները թատրոն են գնում տեսարանը դիտելու համար: Թատրոնի հրապարակում փայտ են դիզում: Թեկղին ինքը բարձրանում է փայտակույտի վրա: Բոցավառվում է փայտակույտը: Աստծուն աղոթում է Ս. Թեկղին:

Փայտակույտի վրա նրա հրկիզման ժամանակ երկնքից ու երկրից ահագին ձայն է բարձրանում, անձրև ու կարկուտ է տեղում, շիջում է կրակը, և փրկվում է Թեկղին: Իսկ դիտելու եկածներից շատերը մահանում են: Այս ընթացքում Ս. Պողոսը ապաստանել էր Ոնեսիփորա անունով մի աղքատ մարդու տանը և նա էլ փրկվում է հալածանքից ու մահից: Ս. Թեկղին գտնում է առաքյալին և նրա հետ գնում Ասորիքի Անտիոք (Մեծ) քաղաքը: Այնտեղ էլ Աղեքսանդրոս անունով մեծատոհմիկ մի մարդ սիրահարվում է Թեկղիին: Սակայն անպատասխան մնալու պատճառով դավ է նյութում: Դատավորին կաշառելով, քրիստոնյա Թեկղիին ի տես հանդիսատեսների ցցում է գազանների առջև: Ժողովրդի մի մասը պաշտպանում է Ս. Թեկղիին, իսկ մյուսները՝ դատապարտում:

Արենայում Ս. Թեկղիի դեմ բաց են թողնում մատակ մի առյուծ, որ հոշոտի նրան: Սակայն առյուծը նստում է Թեկղիի կողքին ու լիզում նրա ոտքերը: Այս տեսնելով, գազազած մի արջ են բաց թողնում Ս. Թեկղիի վրա: Առյուծը, արջի վրա հարձակվելով. պատառոտում է կենդանուն: Ապա բաց են թողնում մի ինձ, որին նա ոչնչացնում է առյուծը: Այդպես ողջ է մնում Ս. Թեկղին: Նրան նետում են թունավոր զեռուններով լի ջրով մի գուբի մեջ: Գուբի վրա մեծ լույս է ճառագում, և սատկում են զեռունները: Ս. Թեկղին գուբից դուրս է գալիս: Քաղաքի կանայք Ս. Թեկղիին աստվածուհի կարծելով՝ թանկագին հագուստներ են նվիրում և ծածկում մերկությունը: Աղեքսանդրոսը ավելի է գազազում և Թեկղիին կապել տալիս երկու զվարակների միջև և ազդրերը խոցոտել տալիս շիկացած շամփուրներով, սակայն էլի ողջ է մնում Ս. Թեկղին:

Անպարտ արձակվելուց հետո, Ս. Պողոսի կարգադրությամբ Ս. Թեկղին գաղտնորեն գնում է Լիկիայի Միռա (Մեռոք, Միւռիս, Միւռին, այժմ Դեմրե) քաղաքը և գտնում Ս. Պողոսին ու այնտեղ էլ մկրտվում:

Ս. Թեկղիի նշանած Թեմերոսի մահանալուց հետո, Ս. Պողոսի հրամանով նա վերադառնում է իր ծննդավայր Իկոնիա քաղաքը և սկսում քարոզել քրիստոնեու-

թյուն: Այստեղ թողնելով տունը և մորը, տեղափոխվում է Իսավրացվոց Սելևկիա (այժմ Սիլիֆկե) քաղաքը և երկար տարիներ քրիստոնեություն քարոզում այնտեղ: Ս. Թեկղին մահացել է խոր ծերության մեջ, 90 տարեկան հասակում: Սելևկիա քաղաքը նշանավորվում է Ս. Թեկղիի նշխարներով:

Ավանդվում է, թե Ս. Թեկղին մահանալուց առաջ «առանձնացաւ ի մօտակայ լեառն Միսի կամ Միւրսինոն կոչեցեալ յայրի միում՝ ուր կայր եւ աղբիւր ջրոյ. եւ յամեն կիրակէի ելանէր յայրէն եւ քաղէր բանջար, եւ շաբաթն ի բուն այնու շատանայր. եւ ի գալ առ նա ոմանց ի հեթանոսաց՝ Աստուածային բանիւ եւ զօրութեամբ լուսաւորեաց զնոսա»[1]:

Ավանդապատումում հիշատակված է Ս. Թեկղիի մահացած ու թաղված վայրը. այն գտնվում է Սելևկիա քաղաքի հարավ-արևմտյան կողմում՝ 2 կմ հեռավորությամբ մի բլրակի վրա, արդի Մերյեմլիք կոչված վայրում: Վերջինիս գտնված բլրակը հնում կոչվել է լեառն Միսի կամ Միւրսինոն: Ս. Թեկղիի քարոզչական գործունեությունը առավելապես կենտրոնացել է Իկոնիա, Միրա, Սելևկիա, Դալիսանդ, Սելինունտ, Օլբիա և դրանց շրջակա բնակավայրերում: Վերջում հաստատվել է Սելևկիայի մոտակա բլրակի քարայրում: Նրա գործունեության և կենսագրության մասին հարուստ տեղեկություններ են պահպանվել միջնադարյան մատենագրական աղբյուրներում: Ս. Թեկղին, քրիստոնեության տարածման սկզբնական շրջանի քաջակորով քարոզչուհի լինելուց բացի, եղել է նաև հրաշագործ: Սրբուհու մահից հետո իր անվամբ կատարվել են 30-ից ավելի հրաշքներ: Ըստ IV դարի երկրորդ կեսին ապրած ականատեսներից Վասիլիոսի վկայության, Ս. Թեկղիի գերեզման-քարայրի վրա կառուցված տաճարը եղել է շատ գեղեցիկ մի շինություն: Գերեզմանի վրա եղել է «սեղան սուրբ եւ Աստուածային խորհրդոյ՝ սիւնապատ եւ արծաթափայլ շրջանակաւ բոլորեալ յամեն կողմանց», այսինքն ուներ խորան և շրջապատված էր պահարանով:

Թեկղին համարվում է վկայուհի և դրա պատճառով էլ գերեզմանի վրայի տաճարն էլ կոչվել է վկայարան:

Ըստ եկեղեցական մատենագրության հաղորդած տեղեկությունների, Ս. Թեկղիի գերեզման-քարայրի շուրջ կազմավորվել է վանք, ուր եղել է «Կուսանոց» և իսավրացի Զենոն (474-491) կայսրը կառուցել է տվել եկեղեցին: 313 թվականին Հռոմի Կոստանդին I (306-337) և Լիցինիուս (308-324) կայսրերի ժամանակ հրատարակված Միլանի հրովարտակով քրիստոնեությունը որպես պաշտոնական կրոն ճանաչվելուց հետո Հռոմեական կայսրությունում ստվարացավ մենաստանների, սրբատեղիների և եկեղեցական հաստատությունների թիվը: Այդ ժամանակաշրջանում է հիմնադրվել Ս. Թեկղիի անվամբ Սելևկիայի վանական համալիրը:

---

[1] Մ. վրդ. Աւգերեան, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց. -Հտ. Զ, 1813, Վենետիկ, էջ 423-465:

Չորրորդ դարի կեսերին արդեն կազմավորված էր վանքը: Եկեղեցական նշանավոր գործիչ Գրիգոր Նազիանզացին 374-379 թվականներին մենակեցությամբ առանձնացել էր Ս. Թեկղիի վանքում: Ինչպես Հայ Առաքելական Ս. Եկեղեցին, այնպես էլ մյուս քրիստոնեական Եկեղեցիները Ս. Թեկղիին ընդունել են իբրև սուրբ և նախավկայուհի: Հայ Եկեղեցին Ս. Թեկղիի տոնը կատարում է հոկտեմբեր ամսի առաջին կեսին:

Մարդկանց և ընտանի անասունների համար Ս. Թեկղիի գերեզմանը համարվում էր բուժիչ զորություն ունեցող մի ուխտատեղի: Բացի այդ, Ս. Թեկղին համարվում էր անիրավվածների, հարստահարվածների, նեղն ընկածների պահապան սուրբը: Վերոհիշյալ տաճարի արևմտյան կողմում, ջրի ակի վայրում, տապից փրկված կենդանիների համար կառուցված է եղել նաև մի ուրիշ շինություն: Այստեղից բխող բուժիչ ջրից խմող կամ ավազանի մեջ մտնող անասունները, ըստ ավանդության, բուժվում էին հիվանդություններից: Ս. Թեկղին բուժել է հիվանդներին ու այսահարներին: Կատարել է բազմաթիվ բարիքներ: Մարդկանց փրկել է հոգեկան և մարմնական տառապանքներից: Այդ պատճառով՝ շատ սիրված էր ժողովրդի կողմից և համարվում էր հրաշագործ սրբուհի:

Ս. Թեկղիին վերագրվող հրաշագործությունների թվում կարելի է նշել թշնամու կողմից պաշարված Դալիսանդ քաղաքի ազատագրումը, Սելևկիայի հարստությունները կողոպտած հրոսակների՝ ճանապարհը շփոթելով քաղաքի զինվորների ձեռքը ընկնելը, Սելևկիա քաղաքի բժիշկների կազմակերպած թակարդից փրկվելու դեպքը, Սելինունտ քաղաքը թշնամու հարձակումներից զերծ կացուցանելը և բազմաթիվ այլ հրաշքներ:

Սրանից երկու հազար տարի առաջ Իսավրիայի մայրաքաղաքն էր Սելևկիան: Արդի Սիլիֆկե գյուղաքաղաքի մոտակա Մերյեմլիք վայրում մինչև օրս պահպանվել է Ս. Պողոս առաքյալի աշակերտուհու փոքրիկ քարայրը, որը խաչնարածների կողմից վերածվել է փարախի: Քարայրը մասամբ լցվել է փլատակների քարերով: Բյուզանդական կայսրության ժամանակ փառավոր վիճակի հասած Սելևկիայի Ս. Թեկղի վանքը վերածվել է խոշոր մի ավերակույտի: Ըստ մասնագետների կարծիքի, սրբուհու գերեզման-քարայրի վրա Զենոն կայսեր կառուցել տված տաճարը նախատիպն է VI դարում Կոստանդնուպոլսում կառուցված աշխարհահռչակ Ս. Սոֆիայի տաճարի:

Վանավանի հյուսիս-արևելյան անկյունում դեռ պահպանվում է երկու սյունաշարքով կամարավոր ջրամբարը, որը մեծ մասամբ կանգուն է: Սյուները և կամարները անվնաս են: Գրանիտե սյուներից միայն մեկն է ճաքել երկար դարերի ճնշման և ջրի ներգործության պատճառով և խախտվել տեղից: Խախտվել է նաև սյան վրա հենված կամարը: Կարծիք կա, որ այս ջրամբարն էլ նախատիպն է Կոստանդնուպոլիս մայրաքաղաքի ձիարշավարանի տակ գտնվող մեծ (այժմ՝ Բինբիր-դիրեկ) ջրամբարի:

Ս. Թեկղի տաճարից կանգուն է մնացել միայն գմբեթի և արևելյան պատի մի մասը, որին ևս սպառնում է ավերման վտանգը: 1930-ական թվականների մի լուսանկարում կանգուն է երևում տաճարի մի ուրիշ պատը ևս, որը խոնարհվել է 1944 թվականից առաջ: Ս. Թեկղի վանքի բլուրն ունի ծովի մակերեսից 70 մետր բարձրություն:

Ս. Թեկղիի ապրած ու թաղված քարայրի շուրջ, ընդարձակ մի տարածքի վրա, սփռված են վանքին պատկանող շենքերի փլատակներ: Դրանց մեջ նկատվում են եկեղեցիների, ավազանների, վանականների ու ուխտավորների կացարանների, աղբյուրի, ջրամբարների, սալարկված փողոցների և այլ կառույցների մնացորդներ: Միջին դարերում, վանքի նշանավոր ուխտատեղի լինելու հանգամանքի բերումով, ամեն տարի տարբեր վայրերից հազարավոր հավատացյալներ գալիս էին Ս. Թեկղի վանքը: Հանգամանքներից ելնելով, Բյուզանդական կառավարությունը Սելևկիայից մինչև Ս. Թեկղի վանավանը 1x1,5 քայլ մեծությամբ տաշված խոշոր սալաքարերով կառուցել էր ճանապարհ: Վերջինս նման էր Հռոմեական կայսրության տիրապետության շրջանում կառուցված զինվորական ճանապարհներին: Այդ ճանապարհով կարելի էր երթևեկել երկանիվ կառքով: Առանձին տեղերում դեռ նշմարվում են այդ ճանապարհից անվնաս մնացած հատվածներ:

Փլատակների մեջ երևում են մի քանի խաշնարած թուրքմենների հյուղակներ: Ս. Թեկղի վանավանը կարոտ է լուրջ ուսումնասիրության, որը կարելի է իրականացնել միայն փլատակների հնագիտական պեղումների միջոցով: Անցյալում այնքան նշանավոր և բազմամարդ վայր հանդիսացող Ս. Թեկղի վանքն այսօր մատնված է մոռացության: Այնտեղ չի պահպանվել ոչ մի պաշտամունքային հաստատություն: Չեն պահպանվել նաև սրբուհու գերեզմանն ու նշխարները: Շրջակա բնակչությունն այնտեղ զբաղվում է գանձախուզությամբ՝ անխնա փլեցնելով ամեն ինչ:

Միջին դարերում Ս. Թեկղիի մասունքները տեղափոխվել են և ամփոփվել Կոստանդնուպոլսի և Եվրոպայի բազմաթիվ երկրների եկեղեցիներում: Դեռ Բյուզանդական կայսրության տիրապետության շրջանում Կ. Պոլսում կառուցված էին եկեղեցիներ, որոնք կրում էին Ս. Թեկղիի անունը և գտնվում էին մայրաքաղաքի «Հուլիանոսի դուռ» (այժմ Կումկափուի Կադըրգա մեյդանը), «Վլախեռնա» (Էդիրնեկափուի Սալմաթոմրուկ), «Գալադա» (այժմ Գալաթա, Ղալաթիա) և «Կոնտարի» թաղամասերում: Ս. Թեկղիին նվիրված բազմաթիվ եկեղեցիներ են եղել տարբեր երկրներում: Ասվում է, թե նրանցից մեկը հիմնվել է դեռևս I դարում, Ս. Թեկղիի կենդանության օրոք, Միջերկրական ծովի ափին, Քարային Կիլիկիայի Սելինոնտ (այժմ Սելինդի, Գազիփաշա) քաղաքում: Բնական պայմանների և դիրքի պատճառով, Սելինոնտի ռազմավարական պաշտպանությունը եղել է խոցելի: Այդ պատճառով էլ հարուստ Սելինոնտը միշտ ենթարկվել է հարձակումների: Առաջին դարում Սելինոնտը, Հռոմեական կայսրության տարածքում լինելով հանդերձ, բազմաթիվ անգամներ ենթարկվել էր շրջակա լեռների վայրագ ցեղերի հարձակումներին:

ճարահատյալ քաղաքացիները, ըստ ավանդության, մի անգամ էլ դիմել են այն ուս-մանձնակ նշանավոր և ամենափրկիչ սրբուհի Թեկղիին, որից հետո դադարել են հար-ձակումները:

Ս. Թեկղիի (Այա Թեկլա) եկեղեցին մինչև օրս պահպանվել և կանգուն է: Այն քրիստոնեության տարածման սկզբնական շրջանում կառուցված սակավաթիվ եկեղեցիներից մեկն է և կառուցված է միանավ բազիլիկ հատակագծով: Գտնվում է երբեմնաքաղաքի պարիսպներից ներս, լանջի թեքության վրա, բարձրահայաց և վեհաշուք դիրքով: Օքամուտքը բացված է հյուսիսային ճակատից:

Բյուզանդական կայսրության տիրապետության ժամանակ Սելինունտը մատնվում է լռության: Բյուզանդա-արաբական երկարատև պատերազմների շրջանում Սելինունտում և նրա շրջակա վայրերում ստեղծվում են բազմաթիվ հայկական գաղութներ: Դրանք հոգևոր պահանջներին գոհացում տալու համար, Խաչիկ I Արշարունի (972-991 թթ.) կաթողիկոսը Սելինունտում հաստատում է նոր թեմի առաջնորդական եպիսկոպոսություն: Դրա մասին են պատմագիր Ասողիկի հետևյալ տողերը.

«Իսկ յաւուրս Տեառն Խաչկայ Հայրապետին Հայոց սփռեալ տարածեցաւ ազգս Հայոց զկողմամբքն արեւմտից, մինչեւ ձեռնադրել եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորւոց և 'ի Տարսոն Կիլիկեցւոց և 'ի Սուլնդայ և յամենայն գաւառս յայնոսիկ» (Ասողիկ, Պատմ. Տիեզ., 256):

X դարի վերջերին և XI դարում Սելինունտը եղել էր Իսավրիայի, Քարային Կիլիկիայի և Պամփյուլիայի Հայոց եպիսկոպոսանիստը: Հայաստանից դեպի արևմուտք՝ Բյուզանդական կայսրության Միջերկրականի ափերում բնակություն հաստատած գաղթական հայերը, ինչպես միշտ, օգտվել են ավերված քաղաքների փլատակներից: Հետագայում (XII-XIII դդ.) շրջակա բնակավայրերում գտնվող հայերը Մեծն Լևոն I թագավորի կողմից Քարային Կիլիկիայում գրավված բերդերի հայ բնակչության կորիզը կազմեցին: Պատմական Սելինունտը 1956 թվականին ավերված ու լքված հնավայր էր: XI-XIV դարերում Կիլիկիայում գրված հայերեն ձեռագրերի մեջ ոչ մի հիշատակություն չկա Սելևկիայի Ս. Թեկղի վանքի մասին: Դա ընդհանրապես ճանաչված էր իբր Բյուզանդական կամ Հունական վանք: Դրա պատճառով էլ անունը մատնվել էր լռության:

Ս. Թեկղիի նշխարներից կան Հռոմի, Վենետիկի, Միլանի, Բոհեմիայի, Ֆրանսիայի և այլ վայրերի եկեղեցիներում:

Գրավոր աղբյուրներում պահպանվել է Ս. Թեկղիի մասունքները Օշին թագավորի կողմից Իսպանիա ուղարկելու հանդիսավոր արարողության մանրամասն նկարագրությունը[2]:

Իսպանիայի Հակոբ II թագավորը հատուկ նամակ է ուղարկում Կիլիկիայի Հայոց Օշին թագավորին՝ խնդրելով Ս. Թեկղի նախավկայուհու մասունքները:

---

[2] Տե՛ս Մկրտիչ Աւգերեան, Լիակատար վարք սրբոց, Վենետիկ, հտ. Զ, էջ 445:

Հիշյալ նամակը Կիլիկիայի Հայոց Օշին թագավորին հանձնելու նպատակով առևտրական առագաստանավով մի պատվիրակություն ուղարկվել էր Կիլիկիայի ծովափը։ Օշին թագավորը, ընդառաջելով Հակոբ II թագավորի խնդրանքին, բարձրաստիճան հոգևոր և աշխարհիկ իշխանավորների մասնակցությամբ, շքախմբով գալիս է Ս. Թեկղիի վանավանը։ Իսպանիայից ուղարկված պատվիրակության ներկայությամբ և ծիսական արարողությամբ պաշտոնապես բացվում է սրբուհու գերեզմանը։ Մասունքները դրվում են մասնատուփի մեջ և կնքվում Օշին թագավորի կնիքով և հանձնվում իսպանացիներին։ Նրանց և հայերի մասնակցությամբ, սրբուհու մասունքներն աղոթքներով ու խնկարկությամբ տարվում է Ս. Թեկղիի վանավանի մոտակա նավամատույցը, ուր սպասում էր իրենց նավը։ Նավամատույցը գտնվում է վանավանից 9 կմ հեռու և այժմ կոչվում է Թաշուճու։ Երկուսի միջև գոյություն ունի մի արահետ, որի շնորհիվ կարելի է երթևեկել նրանց միջև։ Կիլիկիայի Հայկական թագավորության ժամանակ Ս. Թեկղիի վանքը դեռ գործող ուխտատեղի էր։ Իսպանիայի թագավորի ուղարկած նվերների թվում հիշատակվում է նաև մի ձիու մասին։

Սրբուհու մասունքները հաջող կերպով հասնում են Իսպանիայի ափերը։ Տարակոնի նավահանգստում Հակոբ II թագավորը, շքախմբով և ժողովրդի ուրախ մասնակցությամբ, մեծ տոնակատարությամբ և շուքով դիմավորում է սրբուհու մասունքները բերող պատվիրակությանը և Օշին թագավորի դեսպանին։ Թագավորի ու հոգևոր դասի մասնակցությամբ մեծ թափորը ուղղվում է Տարակոնի Ս. Թեկղիի Մայր տաճարը, և մասունքները հանձնվում են եկեղեցուն։ 1319 թվականից մինչև օրս այնտեղ պահվում են սրբուհու մասունքները և Օշին թագավորի կնքադրոշմը։

## ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

*Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆ*

# ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԸ ԵՎ ՍԵՎՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

*Կյանքիս ամենաերջանիկ օրն է այս: Երեսուն տարվա պայքարս, բողոքս, տառապանքս ու հույսերս պսակվեցին փառավոր հաջողությամբ:*

*Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ*

Սևրի դաշնագիրը, իբրև պատմական իրողություն, տեղի է ունեցել 1920 թվականի օգոստոսի 10-ին: Այն, սակայն, ունեցել է նաև իր ընդարձակ ու ծավալուն նախապատմությունը, որին մենք կանդրադառնանք միայն մասնակիորեն:

Դեռևս 1920 թվականի ապրիլին Իտալիայի Սան Ռեմո քաղաքում տեղի է ունենում զանազան հարցերի նվիրված Անտանտի դաշնակից երկրների ներկայացուցիչների Գերագույն խորհրդի նիստը, որին մասնակցում են Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Բելգիայի ու Հունաստանի ներկայացուցիչները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը և Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար Փաշան: Նիստին դիտորդի կարգավիճակով մասնակցում է նաև ԱՄՆ-ի ներկայացուցիչ Վուդրո Վիլսոնը:

Ապրիլի 19-26-ը տևող նիստերի ընթացքում քննարկվում են նաև Հայաստանի Հանրապետության ու Թուրքիայի միջև սահմանների որոշման, Հայաստանի Հանրապետությանը ծովային ճանապարհի ելք տալու հարցերը: Որքան մեզ հայտնի է, այս նիստում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի ու մյուս պե-

տությունների պատվիրակները դիվանագիտական լռությամբ են դիմակայել հայ ժողովրդի շահերի պաշտպանությանը:

Կոնֆերանսը ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին է հանձնարարում ստանձնել Հայաստանի Հանրապետության մանդատը և որպես միջնորդ հանդես գալ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանային հարցերի ճշտման ու կարգավորման գործում: Կոնֆերանսը որոշում է Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթների, ինչպես նաև դեպի ծով Հայաստանին տրվելիք ելքի հարցերը:

Կոնֆերանսի խորհուրդը հաստատում է Թուրքիայի հետ Հայաստանի Հանրապետության հաշտության պայմանագրի նախագիծը, որը պետք է դրվեր առաջիկայում կայանալիք Սևրի դաշնագրության հիմքում:



Վուդրո Վիլսոն

Այս դեպքերից չորս ամիս անց, 1920 թվականի օգոստոսի 10-ին, Փարիզի մոտ գտնվող Սևր քաղաքում ստորագրվում է բաղձալի դաշնագիրը: Այդ նույն օրը Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար, Դաշնագիրը ստորագրող Ավետիս Ահարոնյանը իր օրագրի մեջ գրում է. «Կյանքիս ամենաերջանիկ օրն է այս: Երեսուն տարվա պայքարս, բողոքս, տառապանքս ու հույսերս պսակվեցին փառավոր հաջողությամբ: Թուրքական դաշնագիրը ստորագրվեց և բոլոր դաշնակից պետությունների Համաժողովն այսպիսով հռչակեց Միացյալ, Անկախ, Ազատ Հայաստան Սևրի սրահում»:

«Այսօր, ճաշից հետո, ժամը 4-ին,- ասված է օրագրի շարունակության մեջ,- օթոմոբիլով մեկնեցինք Փարիզից: Ինձ ուղեկցում էին կինս, խորհրդականներ պ.պ. Էնֆիաճյանը և դոկտ. Ններուզը և երկու քարտուղարներ:

Սևրի պալատի առջև ձգվող ծառուղին երկու կողմից բռնված էր զինված պատվո պահակների երկու շարքով, որի միջով մեր կառքերն անցան մինչև հանդիսավոր մուտքը:

Առաջին հարկի ընդարձակ դահլիճը, ուր բարձրացանք, արդեն շարված էին պատվիրակների սեղաններն ու աթոռները, նրանց հետևներում տեղեր պատրաստված յուրաքանչյուր պատվիրակության քարտուղարների համար: Իմ աթոռը գտնըվում էր Չեխո-սլովակների և ռումինների ներկայացուցիչների կողքին: Սեղանի վրա, առջևս, մի քարտ կար՝ «Լիազոր Հայաստանի» գրությամբ:



Ավետիս Ահարոնյան

Իմ դեմառդեմ, հակառակ պատի տակ, տեղ ուներ հունական պատվիրակությունը՝ գլուխ ունենալով Վենիզելոսը: Նրանից վար թուրքերի տեղն էր: Ճակատի պատի տակ տեղ էին բռնել մեծ դաշնակիցները:

Հետզհետե դահլիճը լցվեց պատվիրակներով: Ժամը ուղիղ 4-ին հասավ Միլըրան՝ նախագահը կոնֆերանսի: Եվ գրեթե անմիջապես հետո ներս հրավիրեցին թուրքերին վարի հարկից, ուր նրանք սպասում էին:

Կարգադրիչը ներս առաջնորդելով թուրք երեք պատվիրակներին, բարձրաձայն ասաց. «Պարոնայք լիազորներ Օսմանյան կայսրության»:

Ամենքը ոտքի կանգնեցին: Թուրքերը ողջունեցին գլխի շարժումով և բռնեցին իրենց տեղերը:

Տիրեց ընդհանուր լռություն: Բոլոր այս ցերեմոնիան մահվան պատժի ի կատար ածումի պատկեր ուներ: Պատժվողը Թուրքիան էր:

Ընդհանուր լռության մեջ ոտքի կանգնեց Միլըրանը և ասաց հետևյալը. «Պարոններ, կհայտարարեմ, որ Դաշնագիրը, զոր պիտի ստորագրենք հիմա, իր ամբողջության ճիշտ կերպով համաձայն է բնագրին»:

Ապա հրավիրեց թուրքերին ստորագրել առաջինը:

Տեղից բարձրացավ Հադի փաշան, նախագահը, և հաստատ վճռական քայլերով առաջացավ դեպի կենտրոնի սեղանը, ուր դրված էր Դաշնագիրը, առավ իրեն մեկնած գրիչը և ջլուտ շարժումով, արագությամբ ստորագրեց ցույց տված տեղը: Նրան հետևեցին իր երկու ընկերակիցները՝ Րիզա Թեֆվիկ բեյը և Րեշտի բեյը: Վերջինի դեմքը ջղաձգաբար շարժվում էր, թեև նա աշխատում էր առհարկի անհույզ երևալ, իսկ Րիզա Թեֆվիկը ծնոտն էր ջղայնորեն շարժում:

Ստորագրեցին թուրքերը և շտապով գրավեցին իրենց տեղերը:

Այնուհետև հերթով եկան ստորագրելու Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի ներկայացուցիչները:

Երբ հերթը հասավ փոքր դաշնակիցներին, այբուբենական կարգով Հայաստանը լինելով առաջինը, ինձ հրավիրեցին ստորագրել: Ես ստորագրեցի երեք փաստաթուղթ՝ 1) Բուն թուրքական դաշնագիրը, 2) Փոքրամասնությունների ստատուսը Հայաստանի և մեծ պետությունների մեջ կայացած և 3) Արձանագրություն այն մասին, թե Յուգո-սլավները և Հեջջազը բացակա են և կարող են ստորագրել:

Երբ վերջացավ ստորագրությունը, և բազմությունը վեր կացավ, Վենիզելոսն առաջինը վազեց դեպի ինձ, ձեռքս բռնեց երկու ձեռքով և գրեթե բացագանչեց հուզված. «Շնորհավորություններս, իմ սիրելի նախագահ. Ձեզնից հետո, ես եմ Հայաստանի համար ամենաերջանիկ անձը»: Այսքանով ավարտվում է Սևրի դաշնագրի վերաբերյալ Ավետիս Ահարոնյանի օրագրի մեջ եղած գրառումը[1]:

Դաշնագրի ստորագրումից մեկ օր անց, օգոստոսի 11-ին, Հունաստանի ներկայացուցիչ Վենիզելոսը տեսակցում է Ա. Ահարոնյանի հետ. «Խույս տալու համար Պոնտոսի հույների հակամարտությունից», Վենիզելոսը Ահարոնյանին խնդրում է «հրաժարվել Տրապիզոնից» և դեպի ծով ելք ունենալու համար ընտրել մի այլ նավահանգիստ: Ահարոնյանը տալիս է իր համաձայնությունը: Վենիզելոսը բավականությամբ ու երախտագիտությամբ թոթվում է Ահարոնյանի ձեռքը: «Շնորհակալ

---

[1] Նույն թվականի օգոստոսի 19-ին այս նույն օրագրության շարադրանքը թերևս որոշ փոփոխություններով, Ա. Ահարոնյանը իբրև նամակ-զեկուցագիր ուղարկում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարին:

նմ- ասում է նա.- Դուք ձեր այդ որոշումով ինձ մեծ հոգսից ազատեցիք»: Այնուհետև Ահարոնյանը հարցով դիմում է նրան. «Հունաստանի որպիսի" օգնության վրա կարող ենք հուսալ մեր թուրքահայ գավառները գրավելու պահին»: Վերջինս նրան պատասխանում է. «Այնքան ժամանակ, որ թուրքերը չեն դատարկի Հայաստանը և չեն քաշվի Վիլսոնի՝ ձեզ հատկացրած հողերից, որը Դաշնագրի տրամադրությունից դուրս մնացք բռնած ենք: Այս հայտարարությունս,- ասում է Վենիզելոսը,- պաշտոնական է, և Դուք ամեն առիթով, ուր պատշաճ է և օգտակար կնկատեք, կարող եք ձեզ ծառայեցնել Դաշնակից կառավարությունների հետ գրուցելիս»:

Այդ օրերին ամբողջ հայությունը ցնծության մեջ էր: Իրականանում էին ժողովրդի դարերով կուտակում ունեցող իղձն ու բաղձանքը: Օգոստոսի 15-ի կիրակի օրը Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում կատարվում է մեծ ու հանդիսավոր, գոհաբանական մաղթանք:

Նույն օրը պատվիրակության մասնաշենքում տեղի է ունենում հանդիսավոր ընդունելություն այդ աննախադեպ համազգային ցնծության առիթով, կարդացվում են բանախոսություններ, կատարվում են երգեր և արտասանվում են բանաստեղծություններ:

Դաշնագրի ստորագրման գործընթացի հետ կապված է մի նշանակալից իրողություն ևս, որը չցանկանալով շրջանցել՝ մեջ ենք բերում ամբողջությամբ: Նույն թվականի սեպտեմբերի 1-ին Ամերիկայի դեսպանատան հրավերով Ա. Ահարոնյանը այցելում է դեսպանատան աշխատակիցներին. «... Վիլսոնը,- ասում է նրան դեսպանը,- շատ լուրջ զբաղված է այս (Ձեր) խնդրով, և կարող եք վստահ լինել, որ մեր իղձերին և հույսերին համապատասխան սահմաններ կունենաք... Կարող եք վստահ լինել,- շարունակում է դեսպանը,- որ նախագահը լիովին իրազեկ է Հայաստանի ու հայերի կացության, և նա ամեն ինչ պիտի անի փութացնելու հարցի լուծումը»:

Պայմանագիրը, ինչպես վերը նշեցինք, ստորագրվել էր պատերազմում հաղթանակած տերությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հունաստանի, Բելգիայի ու պարտություն կրած Թուրքիայի Սուլթանական կառավարության միջև:

Պայմանագիրը բաղկացած էր 13 մասից և ուներ 433 հոդված, ըստ որի Թուրքիան պետք է հրաժարվեր Արաբական թերակղզուց և Հյուսիսային Աֆրիկայի նկատմամբ ունեցած հավակնություններից: Պաղեստինը և Իրաքը պետք է տրվեին Մեծ Բրիտանիային, իսկ Սիրիան ու Լիբանանը՝ Ֆրանսիային: Ճանաչվում էր Անգլիայի պրոտեկտորատը Եգիպտոսի և անեքսիան Կիպրոսի նկատմամբ: Իտալիային էին անցնում Դոդեկանեզի կղզիները, Հունաստանին տրվում էր Արևելյան Թրակիան, Ադրիանապոլիսի հետ Գալլիպոլի թերակղզին և Իզմիրը: Ապառազմականացվում էր նեղուցների գոտին, որը դրվում էր միջազգային հանձնաժողովի հսկողության տակ:

Անտանտի տերությունները իրավունք էին վերապահում միջամտել Թուրքիայի ներքին գործերին՝ պարտված Թուրքիային թույլատրվում էր պահելու 50 հազարանոց բանակ, որի 35 հազարը պետք է ունենար ոստիկանի կարգավիճակ:

Այս հարկադրանքով պետք է իրականցվեր արաբներին, քրդերին, հայերին և մյուս ճնշված ժողովուրդներին իրենց ինքնուրույնությունն ապահովելու և անկախ պետականություն ունենալու հարցը:

Այս ամենից զատ դաշնագրի շարունակության մեջ կարևոր տեղ էր հատկացված պարտված Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված արտոնությունների շարադրանքին, որի մասին ընդհանուր գծերով վերը անդրադարձանք, Ահարոնյանի օրագրության առիթով: Իբրև լրացում անհրաժեշտ ենք համարում ավելացնել, որ Սևրի դաշնագրության մեջ Հայաստանի Հանրապետությանը տեղ է հատկացված վեցերորդ բաժնում, որտեղ ներառված են № № 88-93 հոդվածները, որոնք մեջ ենք բերում ամբողջությամբ.

Հոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ինքը ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ արել են արդեն դաշնակից պետությունները, որպես ազատ և անկախ պետություն:

Հոդված 89. Թուրքիան և Հայաստանը, այլև ուրիշ բարձր դաշնադիր կողմերը, համաձայնվում են Ամերիկ. Միաց. Նահանգների նախագահի իրավարար վճռին՝ հանձնել սահմանի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում և ընդունել նրա վճիռը. այլև բոլոր այն միջոցները, որ կարող է նա հրահանգել Հայաստանի՝ դեպի ծով ելք ունենալու և հիշյալ սահմանին կից գտնվող օսմանյան որևէ հողի զինաթափման մասին:

Հոդված 90. Այն պարագայում, երբ սահմանի որոշումը 89-րդ հոդվածի հիման վրա ունենա այն հետևանքը, որ Հայաստանին հանձնվի հիշյալ նահանգների հողի ամբողջությունը կամ մեկ մասը, Թուրքիան անհապաղ հայտարարում է, որ ինքը հրաժարվում է վճռի օրից սկսած բոլոր իրավունքներից ու իրավահիմունքներից հանձնված հողի վրա: Սույն դաշնագրի այն կետերը, որոնք կիրառելի են Թուրքիայից անջատված հողերի վերաբերմամբ, այս վայրկյանից պիտի կիրարկվեն և ա՛յս հողի վերաբերմամբ:

Թուրքիայի ելևմտական պարտավորությունների այն բաժինն ու բնույթը, որ կրելու է Հայաստանը, ինչպես նաև բաժինն ու բնույթը այն իրավունքների, որոնց վրա կարող է հենվել նա՝ իր գերիշխանության տակ տրված հողի կապակցությամբ, տնօրինվելու են համաձայն սույն դաշնագրի 8-րդ մաս հոդ. 241-244-ի (ելևմտական դրույթներ):

Հետագա համաձայնությունները կկարգավորվեն, եթե այդ անհրաժեշտ լինի, բոլոր այն հարցերը, որոնք կարգավորված չեն լինի սույն դաշնագրով, և որոնք կարող կլինեն առաջ գալ հիշյալ հողամասի հանձնումով:

Հոդված 91. Եթե 89 հոդվածի մեջ ցույց տրված հողի մեկ մասը հանձնվի Հայաստանին, այն ժամանակ սահմանագծող հանձնաժողովը, որի կազմը կորոշվի հետագայում, կկազմվի հընթացս երեք ամսվա հիշյալ հոդվածում նախատեսված վճռից հետո՝ նպատակ ունենալով տեղն ու տեղը գծել սահմանը Հայաստանի և Թուրքիայի միջև, որպիսին հայտնի կլինի համաձայն հիշյալ վճռի:

Հոդված 92. Հայաստանի սահմանները Ադրբեջանի և Վրաստանի հետ համապատասխան կերպով կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ:

Եթե այս կամ այն դեպքում, երբ արդեն 80-րդ հոդվածում հախատեսված վճիռը տրված լինի, շահագրգռված պետությունները չկարողանան հասնել, ընդհանուր համաձայնությամբ, իրենց սահմանների որոշման, վերջինս կորոշվի գլխավոր դաշնակից պետությունների կողմից, որոնք միաժամանակ պետք է հոգ տանեն անցկացնելու այն տեղում:

Հոդված 93. Հայաստանն ընդունում է, համաձայնվելով մտցնել դաշնագրի մեջ գլխավոր դաշնակից պետությունների հետ՝ այն որոշումները, որ այդ պետություններն անհրաժեշտ կգտնեն պաշտպանելու համար Հայաստանում շահերը այն բնակիչների, որոնք մեծամասնությունից տարբերվում են ցեղով, լեզվով կամ կրոնով:

Հայստանը համաձայնվում է հավասարապես մտցնել դաշնագրի մեջ գլխավոր դաշնակից պետությունների հետ այն որոշումները, որ այդ պետություններն անհրաժեշտ կգտնեն՝ պաշտպանելու համար տրանզիտի ազատությունը և արդար իրավակարգը ուրիշ ազգերի առևտրի համար»:

* * *

Արաբական երկրները, թոթափելով Թուրքիայի գաղութային լուծը և դառնալով Անգլիայի ու Ֆրանսիայի մանդատային տարածքներ, հետագայում ձեռք են բերում իրենց անկախությունը, մինչդեռ Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան ու Քուրդիստանը բռնության շնորհիվ մնալով Թուրքիայի կազմում, իրենց վրա կրեցին ու նաև կրում են (քրդերը) Թուրքիայի կառավարության ծրագրած ցեղասպանության կործանարար հետևանքները:

Սևրի դաշնագրի ստորագրումից մի քանի շաբաթ անց, սեպտեմբերին, օգտվելով Անտանտի տերությունների միջև շահերի բախման հետևանքով առաջ եկած խորը հակասություններից, ինչպես նաև ձեռքում ունենալով գաղտնի դաշնագիր, օժտված համապատասխան երաշխիքներով և հարձակումը խրախուսող ու հովանավորող խոստումներով, Թուրքիան կառավարող Քեմալ Աթաթուրքը, առ ոչինչ դարձնելով Սևրի դաշնագիրը, սանձազերծում է մի նոր պատերազմ:

Քեմալական հրոսակախմբերը կարճ ժամանակամիջոցում գրավելով Սարիղամիշը, Ղարսը, մտնում են Ալեքսանդրապոլ...

Սևրի դաշնագրից 113 օր անց, դեկտեմբերի 2-ին, թուրք նվաճողները Հայաստանի Հանրապետությանը հարկադրում են ստորագրել Ալեքսանդրապոլի նվաստացուցիչ պայմանագիրը, որի հետևանքով առ ոչինչ է դառնում և թղթի վրա անհատույց են մնում թե՛ Սևրում ստորագրված բաղձալի պայմանագիրը, թե՛ հայ ժողովրդի կրած տառապանքները, թե՛ արյան կանչը, թե՛ բնաջնջման պատմությունը, և թե՛ Ավետիս Ահարոնյանի 30-ամյա մաքառումները:

Քեմալի սանձազերծած պատերազմը և կնքած Ալեքսանդրապոլի պայմանագիրը իրողություն էին դարձնում այն ամենը, ինչը հետագա տարիների ընթացքում պետք է, հետին թվով, արծարծվեին ու վավերացվեին Լոզանում և այլուր: Այդ պայմանագրով փաստորեն վավերացվում և անիմաստ էր դառնում հետագայում ձեռնարկված բոլոր տեսակի միջոցառումները:

Ինչ վերաբերում է Վիլսոնի ստանձնած պարտավորություններին, ապա հետադարձ մոտեցումը թույլ է տալիս ասելու, որ նա ունեցել է հեռուն գնացող ծրագրեր, որոնք հակադիր լինելով Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի շահերին, չէին կարող իրականացվել: Վիլսոնի հեռուն գնացող շահերը թեև չեն վավերացվել կոնգրեսի կողմից, սակայն հետագայում ևս չեն մոռացվել ԱՄՆ-ը ղեկավարողների ծրագրերում:

*ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ*

# ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑՈՒ ՄԵՆԱՐԱՆԸ

Հայ միջնադարյան մշակույթի արծաթե դարը կերտողներից և իրենց ճզոր տաղանդով իմաստավորողներից է Արևելցի կոչված Վարդան վարդապետը, որն արդեն իր կենդանության ժամանակ մեծարվում էր որպես «իմաստուն և ճանճարեղ վարդապետ», «ճարազատ և սքանչելի», «քաջաբան մեկնիչ», «տիեզերալույս քարոզիչ», «եռամեծ մատենագիր»: Նա գիտամանկավարժական բեղուն գործունեություն է ծավալել Կայան գավառի Սուրբ Անդրեի մենարանի վարդապետարանում և Խոր-վիրապի ճամալսարանական տիպի դպրոցում:

Սուրբ Անդրեի վանքի և նրան կից դպրոցի մասին ճայ բանասիրության մեջ առաջին անգամ խոսել է Կիրակոս Գանձակեցին իր «ճարազատ և սքանչելի» բարեկամի՝ Վարդան վարդապետի եկեղեցական-ճասարակական գործունեության կապակցությամբ: Պատմելով Կիլիկիայի Հռոմկլա քաղաքում գաճակալող Հայոց Կոստանդին Ա Բարձրաբերդցի Կաթողիկոսի (1221-1267 թթ.) գլխավորությամբ գումարված եկեղեցական ժողովի ճաստատած ճավատացյալների վարք ու բարքի վերաբերյալ բարեկարգական կանոնների ստեղծման ճանգամանքների և դրանք Արևելյան Հայաստանում տարածելու գործընթացի մասին, Կիրակոս Գանձակեցին, որպես լավատեղյակ ժամանակակից, ճայտնում է, որ Կաթողիկոսի «սաճմանադրության» արմատավորման վստաճելի անձը ճանդիսացել է Վարդան վարդապետը: Դա տեղի է ունեցել 1246 թվականին: Երկրի ճոգևոր և աշխարճիկ տերերը պարտավոր էին ըստ սաճմանված կարգի փաստաթուղթը արտագրել տալ և իրենց ճամաձայնությունը կաթողիկոսական օրինակի վրա վավերացնել ստորագրությամբ: «Եւ առեալ զայս գիր,- այնուճետև վկայում է պատմիչը,- ճաւանութեան իմաստնոյ վարդապետին Վարդանայ, առաքէ առ Կաթողիկոսն Կոստանդին ի Կլայն Հռոմայական, եւ ինքն եկեալ ի ձորն Կայանոյ ի միայնարանն իւր, զոր Սուրբ Անդրէն կոչէին, ճանդէպ անառիկ բերդին Կայանոյ, եւ անդ դադարեալ յուսուցանել զբազումս, որք աշակերտէին նմա վարդապետական բանին»[1]:

---

[1] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն ճայոց, Երևան, 1961, էջ 311:

Ըստ դեպքերի ժամանակակից պատմիչի հաղորդման, պարզ է դառնում՝ ա) որ մինչև Կիլիկիա՝ Հայոց Կաթողիկոսի մոտ մեկնելը, հավանաբար մոնղոլների գլխավոր արշավանքից (1235 թ.) առաջ[2], XIII դարի մեծ ուսուցչապետ Վանական վարդապետի դպրոցում վարդապետական կոչում ստացած Վարդան Արևելցին Կայանի ձորում հիմնել էր իր մենարանը՝ Սուրբ Անդրեի անվամբ. բ) որ այն գտնվել է Կայան անառիկ բերդի հանդեպ. գ) որ այնտեղ գործել է վարդապետական դպրոց:

Իսկ ահա մենաստանի ստույգ տեղադրությունն անհայտ է. չկա նաև նախկին Իջևանի շրջանի պատմության և մշակույթի հուշարձանների ցուցակում: Տեղադրությունը որոշակի չի դառնում նաև «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ով, ուր Սուրբ Անդրեի մասին ասված է. «Վանք (մենաստան) Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Ձորափոր գավառում, Կայեն բերդի մոտ, Աթոռիկ գյուղից ոչ հեռու: Կառուցված է միջին մեծության որձաքարերով, առաստաղը՝ կոփածո քարերով: Այժմ կիսավեր է: Մինչև 1264 թ. այստեղ է ապրել նշանավոր պատմիչ, աշխարհագիր Վարդան Արևելցին, որի գերեզմանը (խաչարձանով) գտնվում է նույն վանքի բակում»: Մենարանի տեղը կարծես թե հեշտությամբ կարելի է ճշտել հենց Աթոռիկ գյուղի միջոցով: Դրա մասին նույն աշխատության մեջ (էջ 53) ասված է, որ գտնվում է Կայան բերդի դիմաց (Ներկայիս Տավուշի մարզի Հաղարծին գյուղի հանդամասում) Անդրեի վանքի մոտ և այժմ լքված է: Սա էլ անորոշ է, որովհետև Հաղարծին գյուղից դեպի հյուսիս-արևելք, Կայան բերդի մոտակայքում, կան բազմաթիվ գյուղատեղեր, որոնցից մի քանիսը՝ մատուռով, խաչքարերով ու գերեզմանաքարերով, իսկ վանական համալիր հիշեցնողը չունի խաչարձանով գերեզման, որը բառարանի հեղինակները վերագրել են Վարդան Արևելցուն:

Մեր կողմից 2000 թ. ամռանը ուսումնասիրվել է խնդրո առարկա տարածքը, և հնավայրերից միայն մեկն է ներկայացնում որպես վանական համալիր:

Այն գտնվում է Կայան բերդի արևմտյան կողմի անտառում, բերդի և ներկայումս Վերին Դանաղռան կոչվող սարամասի բացատում տարածվող բավականին մեծ հնագույն ավերված բնակավայրի միջև, երեք կողմից խոր ձորերից վեր հառնող թերակղզու՝ Խաչի յալ սարի կատարին ու լանջերին: Մոտենալ կարելի է արևմտյան

[2] Այսպես ասելու հիմք է տալիս Կիրակոս Գանձակեցու հաղորդումը (տե՛ս նրա «Հայոց պատմություն»-ը) Վանական վարդապետի դպրոցի մասին: 1229-ին Խորասանի սուլթան Ջալալադինի անողորմ ասպատակությունից հետո Վանականն իր հիմնած Խորանաշատի դպրոցը տեղափոխում է Տավուշ բերդի մոտ գտնվող բարձր ժայռի վրա իր ձեռքով փորած քարայրը և այնտեղ շարունակում գիտամանկավարժական աշխատանքը: Համեմատաբար հանգիստ պայմաններում դպրոցը գործում է յոթ տարի: Հետագայում մոնղոլների ձեռքից անլուր տառապանքներ են կրում Վանականն ու իր աշակերտները, որոնցից Գանձակեցին իրենից բացի հիշատակում է Մարկոս, Սոսթենես և Պողոս քահանաներին: Անշուշտ, նա առիթով կտար նաև իր սիրելի հոգևոր եղբոր՝ Վարդանի անունը, բայց նա այլևս չկար դպրոցում: Լինելով տարիքով մեծ, նա հավանաբար վարդապետական կոչում ստանալով, իր ինքնուրույն գիտամանկավարժական բեղուն գործունեությունն էր սկսել Կայան գավառում, իր իսկ հիմնած Սուրբ Անդրեի մենաստանում:

կողմից: Տեղավայրի բնական դժվար մատչելիությունը, բնակավայրից հեռու լինելն աշխարհիկ կյանքից մեկուսացվածության, ուստի և բոլորանվեր ճգնելու և սաների կրթական գործերով զբաղվելու բացառիկ պայմաններ են ստեղծել ճգնակյացների եղբայրության համար:



Ս. Անդրե մենարանի մատուռների հատակագիծը (XIII դ.)



Կից մատուռների տեսքը արևմուտքից (վերակազմություն)

Զգալի տարածք է զբաղեցնում մենաստանի համալիրը: Ամենաբարձր կետում, ժայռեղեն հիմքի վրա, կառուցված են Սուրբ Անդրեի ճգնարանի՝ զարդարանքից զուրկ զույգ մատուռները: Արտաքուստ 530x410 սմ չափերով մեծ մատուռի հարավային պատին կից է արտաքուստ 310-190 սմ չափերով երկրորդ մատուռիկը (առաջինի կամարակապ առաստաղի բարձրությունը 360 սմ է, երկրորդինը՝ 220 սմ): Մեծ սրահի դուռը բացվում է հարավից, փոքրինը՝ արևմուտքից: Ներսից մեծ մատուռի արևելյան լուսամուտի երկու կողմերում կան ոչ մեծ չափսի անվիմագիր խաչքարեր, իսկ դրանց ներքևում, աբսիդի պատից դեպի սրահ՝ միակտոր քարի սեղանաձև ելուստ՝ ճգնավորներին անհրաժեշտ բացված մատյանները տեղադրելու համար:

Ցերեկը լույսը քարե «գրակալին» է ընկել արևելյան պատի լուսամուտից, որին օժանդակել է արևմտյան պատի լուսամուտից ներս թափանցող լույսի շողքը, իսկ գիշերային ընթերցումների ժամանակ քարե սեղանին դրված մագաղաթների էջերը լուսավորել են սրահի առաջնամասի կողային պատերին բացված երկուական խորշերում այրվող ճրագները: Արևմտյան պատի լուսամուտի ներքևում, դեպի աջ, սալ քարերով կերտված է հավասարասրուն եռանկյունաձև մի այլ մեծ խորշ, ուր, անշուշտ, դրվելիս են եղել մենաստանի աղոթելու եկող բնակիչներին անհրաժեշտ գրքերն ու ծիսական պիտույքները: Հավանաբար մեկ հոգու աղոթքի համար նախատեսված փոքր մատուռը հարավային պատի մեջ ունի ճրագ դնելու խորշ: Գուցե հենց այստեղ է սիրել միայնության մեջ Բարձրյալի հետ հաղորդակցվել միջնադարի մեծ մտածողը:




Վարդան Արևելցու մենարանի հատակագիծը

Շինությունները կերտված են կոփածո բազալտով, իսկ ներքուստ ծեփված են եղել կիր-ավազով: Պատերի ամրության նպատակով կառուցող վարպետը որմերի մեջ տեղադրել է 100-290 սմ երկարությամբ քարե հեծաններ, և դրանք փրկել են ութ դար առաջ կառուցված շինությունը: Առավելապես ավերված է մեծ մատուռի արևելյան պատի վերնամասը: Նաև խիստ քայքայված է կտուրի ծածկը, որի վրա աճել են ծառեր: Սացաշեն մեծ մատուռի տանիքի հարավային եզրն ավարտվել է փոքր

մատուռի միաթեք ծածկի վրա, 30-40 սմ բարձրությամբ, ինչը երևում է կից մատուռների տեսքի գծագրից: Շինության բակում կան տաճարից ընկած քարեր, նաև՝ անշուք գերեզմանաքարեր, իսկ խաչարձանով գերեզմանը, որի մասին խոսվեց վերը, չկա:

Մատուռներից ներքև, բլրի հյուսիսային, արևելյան և հարավային կողմերում, խիստ զառիկող լանջերը հատելու շնորհիվ ստեղծվել են 4-6 մետր լայնությամբ դարավանդներ, որոնց վրա այժմ էլ պարզ «կարդացվում» են մենարանի բնակիչների շուրջ երեք տասնյակ կացարանների, Վարդան վարդապետի դպրոցի լսարանների ու կենցաղային շինությունների հատակագծերի չափերը: Դրանցից մի քանիսի համար մի կողմի պատ է ծառայել դարավանդի ժայռամերձ ուղղահայաց քարե հատվածքը: Վանական համալիրը նաև ունեցել է հաստահեղույս բերդապարիսպ, որի հետքերն ավելի ակնհայտ են մատուռների արևմտյան կողմում, իսկ բերդապարսպից դուրս դարավանդված (այժմ անտառածածկ) հողակտորները վկայում են, որ մենաստանի եղբայրությունը զբաղվել է հացահատիկի և այլ կուլտուրաների մշակությամբ: Խոտառատ լեռնաստանը հիանալի ասպարեզ է եղել անասնապահության համար: Ջուր, հավանաբար, կավե խողովակներով հնարավոր է, որ բերված լինի հնավայրի ձախակողմյան ձորով հոսող գետակի բարձրակետից կամ մենաստանի համայնքի սպասարկու անդամների ուժերով՝ «ողնաբարձ բեռամբք»:

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



## ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒԶԱՆԴԱՑՈՒ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Հրատարակության ենք ներկայացնում ականավոր հայագետ, բառարանագիր Նորայր Բյուզանդացու (1845-1915 թթ.) անտիպ նամակները, որոնք բովանդակում են հայագիտական հարցեր և հասցեագրված են Ֆ. Մուրատին, Ն. Ակինյանին, Ա. Բաբախանյանին (Լեո), Ե. Տեր-Մինասյանին և Տիրայր վարդապետին (հետագայում եպիսկոպոս):

Բնագրերը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվում, Ն. Բյուզանդացու և Տիրայր վարդապետի համանուն ֆոնդերում:

*ԳՈՀԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ*

*24 դեկտեմբեր 1906*

Մեծապատիւ Տէր Ֆրէտէրիք Մուրատ.

Յոյժ շնորհակալ եմ «Յայտնութեանն Յովհաննու. Հին հայ թարգմանութիւն» պատուական մատեանիդ՝ զոր ընկալայ յ'12 ամսոյս միջնորդաւ Բազմավիպի Մեծ. խմբագրութեան: Յօրինակին, զոր բարեհաճ էք նուիրել ինձ՝ կը պակասի «Ներա-

ծութիւն»ն. եթէ զայս եւս չնորհ ընէք յղել՝ կը լրանայ օրինակս, եւ ես երախտապարտ կը մնամ ձեզ:

Վաղուց ի վեր Հայ մամուլն ընծայած չէր մեզ մատենին նման ընտիր աշխատութիւն. ընտիր ամենայն մասամբք: Ի սրտէ կը խնդակցիմ ձեզ: Արժանի է խնամքով ուսումնասիրելու:

Ես դժուարին հիւանդութեամբ կը տառապիմ, եւ երբ փոքր ինչ կը հանգստանամ՝ կը զբաղիմ Նահապետ Քուչակի Սիրոյ բանաստեղծութեամբք. զորս կը փափագիմ հրատարակել: Ցայսօր հազիւ կարողացայ վեր ի վերոյ ակնարկել ի գեղեցիկ աշխատութիւնդ, եւ ահա կը փութամ հաղորդել ձեզ փոքրիկ տեղեկութիւն մի: Գրած էք յերես 166 ծանօթութեանցդ. «Զարտակ, որչափ գիտեմ, ո՛չ ուրեք գտանի ի համօրէն յայտնի մատենագրութիւնս մեր»: Ես իսկ չ'անգիտանայի Զարտակ. բայց ծանօթ էր ինձ Զերդակ, որ նոյն է, յ'Ընդարձակեալ Աշխարհացուցէ Մովսեսի Խորենացւոյ, Ս. Ղազար, 1881, երես 46. «Սիւնիկիա, որ է Ճենք...: Ունի ... քրքումս անթաւս, մինչ զի հեծեալ ոք ի սպիտակ զերդակ ձիով, սպիտակ բազէիւ երթեալ, յ'որս՝ դառնայ դեղնացեալ ամենեւին»: Սակայն խանգարեալ թուի ինձ տեղիդ. աշխարհագիրն ըսել կ'ուզէ կարծեմ թէ «Քրքմաստանններու միջէ՟ն սպիտակ ձիով եւ սպիտակ բազէիւ յորս գնացող հեծեալն՝ կը դառնայ զերդակ ձիով (եւ զերդակ բազէիւ)՝ դեղնացեալ ամենեւին»:

Մնամ խորին մեծարանօք

Խ. Ծ. Նորայր

Հասցէս է.

Monsieur Frédéric Murad
Au Couvent Arménien de Saint Jacques
Jerusalem
(Palestine)

Առաքելական Աթոռ Ս. Յակոբեանց

*18 յունիս 1908*

Մեծարգոյ Հ. Ներսէս Ակինեան,

Հիւանդ էի եւ եմ տակաւին, ու չկարացի ո՛չ վաղագոյն պատասխանել Ձեր Ապրիլ 2ի նամակին, ո՛չ շնորհակալ ըլլալ փետրուարի 16ին գրութեանս հրատարակութեանն համար ի մայիսի ամսաթերթիդ:

Թողլով յաւագոյն ժամանակի հաղորդել Ձեզ ինչ ինչ «ծայթ»երու մասին, նշանակեմ յիմ յարդարեալ Ուխտանիսէ զուղղելիսն ի հատուածին 14դ երեսին՝ զոր ի մէջ բերած էք յերես 112ա ապրիլի Հանդեսիդ.

- «Որք բազմակե[ա]ցք (ո՛չ «բազմակիցք») եւ որք միայնակեացք». [=«Վասն միայնակեցաց եւ բազմակեաց եղբարց». Վարք հարանց. Հ. Բ. յ՛30. գտնի ուղիղ բազմակաց ի Նոր Հայկազեանին.- «Վարք միանձանց եւ բազմակեաց կրաւնաւորաց». Ստ. Ասողիկ. Գ. Է. վերնագիր. 171=փոխանակ բազմակեաց՝ Եւագրի թարգմանիչն ըսած է խառնակեաց յերես 27, զոր չեմ սիրեր, զի կարէ շփոթել ընդ խառնակեցիկ Ոսկեբերանի Մեկն. Մատթէի, Գ. 34. Ժ. 144: (Յաւելլի էր աստէն. Քան զ«խառնակեաց», եւ նոյն իսկ քան զ«բազմակեաց», ընտրելագոյն կը համարիմ զ«Միաբանակեաց»՝ որ յաճախութեամբ կը գտնուի ի Վարս Հարանց: Տես եւ Cénobite յիմ Գաղղիերէն-Հայերէն բառագիրս):

- «Զաւրինակ ցուցանել[ի] զաւրութեանն Աստուծոյ». [= «Աւրինակ ցուցանելի». Եւս. եկեղ. Ա. գ. 35. Է. 39. Գ. դ. 150, ուր սխալ է ցուցանել 'ի. գ. 156. եւ ա՛յլ եւթն անգամ ի նմին գիրս= մետասան վկայութեանցդ՝ Նոր Հայկազեանն ի բառն Օրինակ կը նշանակէ միայն զայն, որ կը գտնուի յերես 156 Գ. գ.]:

- «եպիսկոպոսացն (եպիսկոպոսին) Գրիգորի»:

Յերես 114ա, ի ծանօթութեան, անշուշտ ուզած էք գրել «Ծայդան = Սիդոն, Ծայդանացիք = Սիդոնացիք»:

Շատ վշտացայ, որ յետ 28 տարւոյ հրատարակութեան Հայկական Բառաքննութեանս՝ «Քերքէշ»ն (անդ, երեսք 124-126, թիւ 20) անգամ մի եւս բոյս կը կարծուի եւ կ'ուզուի ստուգաբանել ի պարսկերէնէ (ապրիլ, երես 121բ, թիւ 11):

Մաղթելով Ձեզ քաջողջութիւն՝ զոր ես չունիմ, եւ յարատեւ զօրութիւն, որ յիս հետզհետէ կը նուազի, մնամ մեծարանօք

խ. ծ. Նորայր

*26 յունիս 1908*

Մեծարգոյ Հ. Ներսէս Ակինեան.

Երէկ հասաւ 24ի ազնիւ թուղթդ. եւ ահա կը պատասխանեմ իսկոյն. զի ախորժելի է ինձ գրատր տուրեւառութիւնն Ձեր հետ. նոյն իսկ հիւանդոտ վիճակիս մէջ. բայց ստիպեալ եմ գրել կարճ ի կարճոյ. մինչդեռ եթէ ես ըլլայի ի Վիեննա կամ Դուք ի Վենետիկ՝ անբաւ բան կը լսէիք յինէն:

Եթէ յամսաթերթիդ յուլիսի պիտի հրատարակէք, զոր ինչ գրեցի «Բազմակեաց» եւ «Խառնակեաց» բառերուն նկատմամբ, խնդրեմ լրացնէք զայն ըստ յաջորդիդ.

«... զի կարէ շփոթել ընդ Խառնակեցիկ Ոսկեբերանի, Մեկն. Մատթէի, Գ. 34, Ժ. 144: Քան զ«Խառնակեաց», եւ նոյն իսկ քան զ«Բազմակեաց», որ եւ այս կարէ շփոթիլ ընդ Ծատակեաց Ագաթանգեղի յերես 181 (արդեամբք ալ «Բազմակեաց» գործածուած է ի Վանական վարդապետէ եւ ի Վարդանայ Արեւելցւոյ իբր Ծատակեաց, երկայնակեաց) ընտրելագոյն կը համարիմ զ«Միաբանակեաց»՝ որ յաճախութեամբ կը գտնուի ի Վարս Հարանց: Արդէն իմ Գաղղիերէն-Հայերէն Բառագրոց մէջ, ի բառն Cenobite իբր խոտան բառեր, յիշած եմ թէ՛ զ«Բազմակեաց», եւ թէ՛ զ«Խառնակեաց»:

Պետրոսի Թուղթն (Գիրք թղթոց, 99-107) թուի ինձ Պետրոս Թափչի Անտիոքացւոյ (ո՛չ Ծանրախօսին Աղեքսանդրացւոյ). եւ թերեւս յայն կ՚ակնարկուի նոյն գրոց մէջ, յերես 126, տող 7 ի ստորէ, «Թուղթն Պետրոսի Անտիոքացւոյ»:

Ուրախ կ՚ըլլամ, եթէ զիմ չնչին գրութիւնս, որ կը պահուին առ Ձեզ, պիտանի եւ օգտակար համարիք ու ի կիր առնուք:

Զարմացեր էք, որ 40 տարի յառաջ՝ յինէն ի Բազմավեպի հրատարակեալ Ձիաբուծութիւնն՝ իբրեւ նորագիւտ (!) ինչ հրատարակեցաւ երկրորդ անգամ նոյն Բազմավեպին մէջ, եւ ո՛րչափ գիտնականօրէն, ո՛րչափ հմտօրէն կը յաւելում ես: Բայց ըսի վերագոյն, որ եթէ ես ի Վիեննա ըլլայի կամ Դուք ի Վենետիկ՝ անբաւ բան կը լսէիք յինէն: Ցգիտութիւնն «դարիւ եւ դարիւ» կը հոսի այժմ ի Դդմանոցին Ս. Ղազարու:

Քննադատօրէն յարդարած եմ զամենայն հրատարակեալ Մատենագրութիւնս Նախնեաց, բաց ի քանի մի հին տպագրութեանց, զորս անկարելի եղաւ ինձ ստանալ: Մտադիւր կը պատասխանեմ Ձեր ո՛ր եւ է հարցուածոց, բաւական է, որ հիւանդութիւնս չարգելու:

Ստորին Հայերէնի «Մկրատ» բառն (Հանդէս Ամսօրեայ, յունիս, 186բ) արաբերէն «Մըգրուզ»ն է. եւ այս ստուգաբանութիւն՝ միայն իմս չէ:

Բազում սիրով եւ մեծարանօք

Ձերդ Նորայր

Յանձնեցի յ'9 յունիսի 1909 ի. Սիմոնի Երեմեան, որպէս զի յղէ առ Ա. Բաբախանեան

*9 յունիս 1909*

Մեծապատիւ տէր
Առաքել Բաբախանեան.

Ապրիլի 13ին ընկալայ ի պատուական ի. Սիմոնէ Երեմեան զՁեր մարտ 20ի (ի. տ.) նամակն ի Տփղիսէ: Ներեցէք, որ այսչափ յապաղեցի զպատասխանն՝ հիւանդ պառկած ըլլալուս պատճառաւ: Հազիւ քանի մի օր է, որ ելայ ցաւոց անկողնէս, եւ անա կը փութամ մատուցանել Ձեզ զիմ ջերմ շնորհակալութիւնս, զի տ. Գր. Խալաթեանցի «Մնացորդաց Գիրք»ն, Ձեր շնորհիւ, հասաւ առ իս մայիսի 3ին, իսկ զՄարութայի «Արեւելեան Վկայս» արդէն իսկ ընդունած էի ի տ. Գալուստ Տէր-Մկրտչեանէ ի 22 յունուարի: Կը մնան Ն. Մառի «Վարդանայ Առակք»ն, Իրենէոսի եւ Կուզ Տիմոթէոսի մատեանքն յԷջմիածնէ, զորս յուսամ ընդունիլ ազնիւ միջնորդութեամբդ:

Շատ ուրախ եմ, տէ՛ր Բաբախանեան, որ յաջողէր է դժուարին սրագործութիւնն (opération) եւ բոլորովին ապաքիներ էք: Կը մաղթեմ ի սրտէ, որ միշտ վայելէք քաջողջութիւն, զի Ձեր կեանքն թանկագին է Ազգիս համար: Իսկ ես երկուքուկէս տարիէ աւելի է, որ սաստիկ կը տանջուիմ, եւ երբ պիտի բժշկուիմ չգիտեմ:

Ընդունեցէք, խնդրեմ, զիմ մեծարանաց եւ սիրոյ բարեւներս, եւ գիտցէք զիս

Ձերդ Նորայր

Առ Մեծապատիւ Տէր
Առաքել Բաբախանեան
ի Տփղիս
(Շնորհիւ Մեծարգոյ ի. Սիմոն Վ.-ի Երեմեան)

*7 դեկտեմբեր 1909*

Մեծարգոյ ի. Ներսէս Ակինեան.

Ի բովանդակութենէ Հանդեսիդ դեկտեմբերին, զոր ընկալայ երէկ առաւօտ, եւ զի չընկալայ տակաւին զողջոյն Գերյարգելի Առաջնորդիդ, կ'իմանամ, որ չէք ընդունած զիմ հոկտեմբերի 29ին թուղթն, զորոյ պատճէնն կը գտնէք ի ստորեւ: Կը յու-

սայի հրատարակեալ տեսնել ի դեկտեմբերի գՁաքարեայ Գնունեցւոյ Տաղն, զոր անտարակոյս կը հրատարակէիք՝ եթէ հասած ըլլար առ Ձեզ իմ նախընթացն:

Կը խնդրեմ, որ բարեհաճիք յղել ինձ զընդօրինակութիւնս Տաղիցն «Այրն ասէ՝ այսօր ըմբեմք. Բենն ասէ՝ բերէք գինի» (Տաշեան. Ցուցակ, երեսք 795բ - 796ա, համար 13), եւ «Այրն ասէ՝ ապրի թագաւոր շատ ժամանակ. Բենն ասէ՝ բարի թագաւոր մեզի յերակ» (անդ, երես 795ա, համար 8):

Շնորհ ըրէք պատասխանել ինձ անյապաղ: Զընդօրինակութիւնս երկու Տաղիցն կարէք յղել ինձ ուրիշ անգամ:

Աւասիկ Պատճէն հոկտեմբեր 29ի նամակիս.

(Ընդօրինակեցի լրիւ զիմ նամակն հոկտեմբեր 29ի):

(Ն. Բիւզանդացի)

*17 դեկտեմբեր 1911*

Մեծապատիւ

Երուանդ վարդապետ Տէր-Մինասեանց.

Ամսոյս 12ին ընկալայ զՁեր պատուական երեք նուէրները, Տիմոթէոս Կուզ, Իրենիոսի Ցոյցք, Իրենիոսի Ընդդէմ Հերձուածոց: Անչափ շնորհակալ եմ:

Հայերէն մատենագրութեան համար յոյժ կարեւոր են երեք հրատարակութիւնքդ այդ, եւ մեծ է Ձեր արդիւնքն: Մասնաւորապէս խնդակից եմ Ձեզ եւ մեծ. Տէր-Մկրտչեան Կարապետ վարդապետին, որ զայնպիսի դժուարըմբռնելի ձեռագիր Տիմոթէոս Կզուն կրցէր էք յաջողութեամբ ընթեռնուլ: Խնդրեմ զիմ շնորհակալութիւնս հաղորդէք նա եւ Կարապետ վարդապետին:

Փոքրիկ տեղեկութիւն մի տամ Ձեզ: Ցիրենիոսի Ցոյցքն, երես 55, համար 77, գրեալ է. «Դարձեալ ասէ յերկոտասան մարգարէսն. «Եւ կապեալ զնա մատուցին ընծայ թագաւորին»: Զտեղի վկայութեանդ նշանակած չէք, անգիտացած է եւ Harnack յիւր գերմանական թարգմանութեանն, յերես 42, որ եւ կը հարցնէ ի ծանօթութեան 4. «Wo?»: Արդ՝ վկայութիւնդ է ի մարգարէութենէն Ովսէի, Ժ. 6. «Եւ զնա յԱսորեստանեայս կապեալս տարցին պատարագ արքային Յարիմայ», որ ի Կիւրղի Կոչումն ընծայութեան, ԺԳ. 248, թարգմանեալ է «կապեցին զնա, եւ տարան պատարագ թագաւորին Յարիմ»:

Վստահ ի Ձեր բարեսիրութիւն՝ կը համարձակիմ խնդրել որ - եթէ կարելի է - շնորհ ընէք հայթայթել ինձ եւ զԱնանեայ Նարեկացւոյ Խոստովանութիւնն, զոր կարծեմ հրատարակեց պատուականն Գալուստ Տէր-Մկրտչեան: Շատ կը ցաւիմ,

որ չունիմ ո՛չ զԱռակսն Վարդանայ՝ զորս հրատարակեց Ն. Մառ, եւ ո՛չ զՀանդէս Հայագիտութեան Ֆինկի:

Եթէ Տ. Կարապետ Կոստանեանց յԱղեքսանդրապոլ է՝ խնդրեմ ողջունեք յինէն: Անցեալ տարւոյ մարտի 8ին ընկալայ զիր Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, եւ փութացայ յայտնել նամակաւ զիմ շնորհակալիս: Նամակս՝ որ յանձնարարեալ չէր՝ ուղղած էի յԱղեքսանդրապոլ: Չգիտեմ, հասա՞ւ յիւր ձեռս, թէ ոչ, զի չընկալայ զպատասխանին:

Մաղթելով ուսումնասէր եւ ազնիւ վարդապետիդ քաջողջութիւն, եւ յուսալով, որ կը շարունակէք տալ մեզ եւա՛յլ գիտնական հրատարակութիւնս նախնեաց Մատենագրութեանց, մնամ ջերմ շնորհակալութեամբք եւ խորին մեծարանօք

Նորայր

B. Erwand Vardapet Ter-Minassiantz
Alexandrapol (Russie)

*Վենետիկ, 22 դեկտեմբեր 1911*

Մեծապատիւ Տիրայր Վարդապետ.

Ընկալայ զՁեր քարտէսն հոկտեմբեր 12ի ի Fiume քաղաքէ: Ցուսամ ի Քիշնեւ էք այժմ, ողջ առողջ եւ հանգիստ:

Երուանդ վարդապետ յղեց ինձ յԱլեքսանդրոպոլէ զՏիմոթէոս Կուզն, զԻրենիոսի Ցոյցք եւ Ընդդէմ Հերձուածոց, որ հասան առ իս յ'12 ամսոյս: Ցոյժ շնորհակալ եմ Ձեր ազնիւ միջնորդութեան եւ մնամ ամենայն մեծարանօք

Նորայր

Néandre de Byzance Norayr
Sant Angelo
Pont dei Frati, 3536 # P
Venise (Italie)

*17 մարտի 1912*

Մեծ. Ձ. Ներսէս Ակինեան.

Միշդ 3 ամիս յառաջ, դեկտեմբերի 17ին, խնդրեցի քարտիսիւ, որ յղէք ինձ զ«Յուշարձան»ն կիսակաշի կազմիւ, խոստանալով հատուցանել 45 փրանկ ի սկիզբն փետրուարի: Միշդ 3 ամիս յառաջ, դեկտեմբերի 16-17ին (նամակդ հասաւ առ իս 18ին), Դուք ալ գրեցիք ինձ՝ որ կը յուսայիք, թէ «Յուշարձան»ն յունուարի սկիզբները լոյս կը տեսնէ, եւ թէ «երբ աւարտի ամբողջ գործոյն տպագրութիւնը, պիտի յղէք ինձ քանի մը տասնեակ» իմ յօդուածէս, որ «տպագրուած է արդէն»: Անցան 3 ամիսներ, եւ ի խոստացեալ «քանի մը տասնեակ» օրինակաց յօդուածիս եւ ոչ իսկ մի օրինակ ընդունեցայ. չընդունեցայ նոյնպէս զ«Յուշարձան»ն:

Այս երկրորդ անգամ կը խնդրեմ, որ բարեհաճիք յղել ինձ իսկոյն զ«Յուշարձան»ն, կիսակաշի: Կը հատուցանեմ 45 փրանկ ի 15 առաջիկայ ապրիլի: Բայց եթէ հարկ է, որ անվրէպ կանխիկ հատուցանեմ զգինն, թո՛ղ մնայ գործն:

Նորայր

*Վենետիկ, 15 յունիս 1912*

Մեծապատիւ

Տիրայր վարդապետ.

Ընկալայ զքարտէսդ 12/25 փետրուարի: Շատ շնորհակալ եմ, որ աշխատութիւն յանձն առնլով կը բարեհաճիք հայթայթել ինձ զՎարդանայ Առակներն եւ զԱնանիայ Նարեկացւոյ Խոստովանութիւնն:

Յղեցի Ձեզ այսօր զիմ «Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ագաթանգեղոսի եւ Ղազարայ Փարպեցւոյ», որ լոյս տեսաւ ի «Յուշարձան»ի Մխիթարեանց Վիեննայ: Կ'ուզէի յղել եւ առ Կ. Կոստանեանց եւ Երուանդ վարդապետ յԱղէքսանդրապոլ, բայց նոքա արժանի չհամարեցան պատասխանել իմ նամակներուս. յանձնարարեալ յղած էի զնամակն Երուանդ վարդապետի:

Մաղթելով Ձեզ քաջողջութիւն, մնամ խորին մեծարանօք

Նորայր

*Վենետիկ, 26 ազոստոս 1912*

Մեծապատիւ

Տիրայր վարդապետ.

Ընկալայ զքարտէսդ յունիս 20 (յուլիս 3)ի, եւ անգամ մի եւս շնորհակալ եմ, որ կը փնտռէք ինձի համար զՎարդանայ Առակներն: Շնորհակալ եմ եւ Անանիայ Շիրակացւոյդ, զոր ընկալայ ամսոյս 18ին, բայց ես ունիմ զայն: Իմ փափագածս է Անանիայ Նարեկացւոյ Գիր խոստովանութեան, հրատարակեալ յԷջմիածին, 1892, երեսք Է - 13:

Ե՞րբ պիտի հրատարակէք զՓրկան Տաղերն:

Խորին յարգանօք

Նորայր

*Վենետիկ, 23 նոյեմբեր 1913*

Մեծապատիւ Տիրայր վարդապետ.

